



«Հաստատում եմ»

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական

միջազգային համալսարանի  
Դեկտորի ժ/պ

Ֆ.Բ.Բալավլա

« 25 » 05 2023թ.

Կ.Տ.



**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ**

**ԻՆՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Երևանի «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան

ՀՀ, ք.Երևան, Սեբաստիա 3/7

Երևան 2023

Ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի կազմը

Անուն, Ազգանուն	Պաշտոնը հաստատությունում	Պատասխանատվությունը խմբում
Բալավալա Ֆ.Ի.	Ռեկտորի ժ/պ	Հանձնաժողովի նախագահ I, II, VII
Միրոնչև Ա.Օ.	Ռազմավարական զարգացման պրոռեկտոր զժով	Խմբային աշխատանք՝ յուրաքանչյուր չափանիշի շուրջ, ինքնավերլուծության զեկույցի վերջնական տարբերակի կազմում I, II, VII, X
Տրոյնիչ Յ.Ն.	Ուսումնադաստիարակչական աշխատանքների պրոռեկտորի ժ/պ զժով	III, IV, V, IX
Դերձյան Գ.Հ.	Տնտեսական աշխատանքների զժով տնօրեն	VII
Ավագյան Գ.Ք.	Որակի կենտրոնի ապահովման ղեկավար	VIII, X
Անտոնյան Ա.Ժ.	Բժշկական մասնագիտությունների և գիտական աշխատանքների զժով պրոռեկտոր	VI, IX
Գրիգորյան Գ.Մ.	Միացյալ ֆակուլտետի ղեկան /ք.Երևան/	III, V
Խաչատրյան Ա.Ա.	Բժշկական ղեկան ֆակուլտետի /ք.Երևան/	III, V
Օհանյան Ա.Ա.	Միացյալ ֆակուլտետի ղեկան /ք.Վանաձոր/	III, V
Գրիգորյան Վ.Գ.	Շրջանավարտների կարիերայի և աշխատանքի տեղավորման կենտրոնի	IV, IX

	ղեկավար	
Պապոյան Թ.Բ.	Գլխավոր հաշվապահ	VII
Երեմյան Ն.Ռ.	Կարգերի բաժնի վարիչ	V
Հարությունյան Ա.Ս.	ՈԱԿ-ի՝ շահակիցների կարքիների ուսումնասիրության և վերլուծության մասնագետ	X
Նիտեշկումար Չաուդհարի	Բժշկական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող /ք. Երևան/	IV
Չաուդհարի Դիրովկումար Յաշվանթրիայ	Բժշկական ֆակուլտետի 6-րդ կուրսի ուսանող /ք.Երևան/	IV
Բաբայան Ա.Վ.	Միացյալ ֆակուլտետի ՈւԳԸ նախագահ, 4-րդ կուրսի ուսանողուհի /ք.Երևան/	IV, VI
Ներկարարյան Գ.Փ.	Միացյալ ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող /ք.Վանաձոր/	IV
Սահակյան Լ.Ս.	Ամբիոնի վարիչ	III, V, VI
Սուքիասյան Ա.Գ.	Կենսաբժշկական առարկաների ամբիոնի ղոցենտ	III, V, VI
<i>Անհրաժեշտության դեպքում տողեր ավելացնել</i>		

**ԲՈՎԱՆՆԵՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....5

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ.....5

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 6

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ.....9

    I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....9

    II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....20

    III. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ..... 45

    IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ .....81

    V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ.....97

    VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ.....111

    VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ.....128

    VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ .....146

    IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՅՈՒՄԸ.....158

    X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ .....166

    ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ .....185

    ՀԱՎԵԼՎԱԾ 2. «Բուժական գործ» ՄԿԾ-ի վերջնաբոլորներին քարտեզ.....186

    «Բուժական գործ» ՄԿԾ-ի վերջնաբոլորներին ցանկ .....191

    ՀԱՎԵԼՎԱԾ 3.1.1. Մասնագիտության կրթական ծրագրի կառուցվածքը .....194

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ուսումնական հաստատության կառավարումը, կրթական և հետազոտական գործունեությունը և հասարակությանը մատուցվող ծառայությունները պարբերաբար բարելավվում են և միտված են.

- որակի մշակույթի ձևավորմանը,
- կրթական այնպիսի միջավայրի ստեղծմանը, որը կնպաստի աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան ուսումնառողների գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը,
- մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացմանը և հասարակության առջև հաշվետվողականության ապահովմանը,
- ազգային և միջազգային մակարդակներում ուսումնական հաստատության կողմից մատուցվող ծառայությունների համադրելիության և մրցունակության, ինչպես նաև թափանցիկության ապահովմանը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Չափանիշներ՝ հատուկ առանձնացված ձևակերպումներ են, որոնք վերստուգելի տերմիններով սահմանում են հաստատության գործունեության կամ իրականացվող կրթական ծրագրերի բնութագրերը:

Չափորոշիչներ՝ ձևակերպումներ են, որոնք սահմանում են յուրաքանչյուր չափանիշին համապատասխանելու չափը և անաչառ գնահատելու համար անհրաժեշտ պայմանները:

## ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանը, այսուհետ՝ Համալսարան, բարձրագույն մասնագիտական կրթություն տրամադրող մասնավոր ուսումնական հաստատություն է, որն իրականացնում է բարձրագույն, ինչպես նաև լրացուցիչ կրթական ծրագրեր՝ կրթական գործունեության լիցենզիաներին համապատասխան:

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանը, կազմակերպարական ձևի համաձայն, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է, որը հիմնադրվել է 1996 թվականին (վկայական թիվ 030557, գրանցման համար 264.110.03182) և կրում է միջնադարյան հայ մեծանուն իրավաբան **Մխիթար Գոշի** անունը:

Մասնագիտական ուսումնական հաստատության ամբողջական անվանումը	«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանը ՀՁ ՄՊԸ
Հապավում	«Մխիթար Գոշ» Համալսարան, ՄԳՀ
Հիմնադիր	Սայեդ Կամրուզզաման ՌԴ քաղաքացի
Հիմնադրման տարին (անվանումը)	«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանը հիմնադրվել է 1996թ.
Հավատարմագրման կարգավիճակը	Միջազգային ինստիտուցիոնալ հավատարմագրում
Համալսարանի իրավաբանական հասցեն	ՀՀ, ք. Երևան, 0065, Մեքաստիայի 3/7, Հեռ: (0037410) 74-74-35, 74-74-40 ՀՀ, ք. Վանաձոր, 2001, Տիգրան Մեծի 30/1 Հեռ: (00374322) 4-07-11, 4-08-11 Ֆաքս. 4-03-11 <u>E-mail:mguniv@mail.ru</u> Web կայք: <u>www.mkhitargosh.am</u>
Ռեկտորի ժ/պ	Ֆ.Ի. Բալավալա
Լիցենզիա	Լիցենզիա № 0012Բ, 0013Բ, 0012Ս, 0013Ս Բարձրագույն մասնագիտական գործունեություն իրականացնելու
Ուսանողների քանակը	01.01.2023թ. կազմում է 890 ուսանող

1-2 էջի սահմաններում անհրաժեշտ է անդրադառնալ հաստատության գործունեության նշանակալից փուլերին՝ կապված նրա կազմակերպարավական ձևի, կարգավիճակի (այդ թվում՝ հավատարմագրվածի), առաքելության կամ հիմնական նպատակների փոփոխության հետ, ինչպես նաև ուսումնական հաստատության կարծիքով հիշատակման արժանի ձեռքբերումների և իրադարձությունների մասին:

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանը պատրաստում է մասնագետներ հետևյալ կրթական ծրագրերով.

1. Միջին մասնագիտական կրթություն՝
  - a. քույրական գործ
  - b. դեղագործություն
  - c. ատամնատեխնիկական գործ
2. Բարձրագույն մասնագիտական կրթություն՝ բակալավրի աստիճան՝
  - a. իրավագիտություն
  - b. տարրական մանկավարժություն և մեթոդիկա
  - c. կառավարում
3. Բարձրագույն մասնագիտական կրթության՝ մագիստրոսի աստիճան՝
  - a. Կառավարում
  - b. Իրավագիտություն
4. Անընդհատ-ինտեգրացված կրթական ծրագիր՝
  - a. բուժական գործ
  - b. ստոմատոլոգիա

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանը կրթական ծառայություններ է մատուցում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, ինչպես նաև օտարերկրյա ուսանողներին: Օտարերկրյա ուսանողների մեծ մասը սովորում են բժշկական ֆակուլտետում՝ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտություններով: Միջազգային ուսանողների 90%-ը Հնդկաստանի քաղաքացիներ են: Ֆակուլտետներում սովորում են նաև արտասահմանյան այլ երկրների ուսանողներ՝ Ռուսաստանից, Շրի Լանկայից, Իրանից, Վրաստանից, Եգիպտոսից, Բրազիլիայից, ԱՄՆ-ից:

Համալսարանի առանձնահատկությունը շարունակական կրթությունն է. քոլեջն ավարտելուց հետո ԲՈՒՀ-ում կրթությունը շարունակելու հնարավորությունը՝ բակալավրիատից մինչև մագիստրոսական կրթություն, ինչպես նաև՝ բժշկական և հումանիտար մասնագիտությունների ինտեգրումը:

«Մխիթար Գոշ» համալսարանը երիտասարդ, բայց արագ զարգացող համալսարան է: Արտաքին աուդիտներ անցնելուց հետո, 2022 թվականին Համալսարանի գործունեության միջանկյալ արդյունքներն ամփոփելիս, որոշվեց թարմացնել ԲՈՒՀ-ի առաքելությունը, ինչպես նաև վերանայել Համալսարանի կառուցվածքը:

Համալսարանի կառուցվածքը համալրվեց նոր ստորաբաժանումներով և կադրային հաստիքներով (օրինակ՝ ստեղծվեցին Ընդհանուր բաժինը (Փաստաթղթաշրջանառության) և Գիտահետազոտական կենտրոնը) :

Այս պահին ՄԳՀ-ի կրթական գործունեության առաջնային ուղղությունը աշխատաշուկայում պահանջված բարձր որակավորում ունեցող մասնագետի պատրաստումն է:

Վերջին 3 տարիների ընթացքում համալսարանի նյութատեխնիկական բազան զգալիորեն բարելավվել է. վերանորոգվել են լսարանները, ձեռք են բերվել սարքավորումներ սիմուլյացիոն կենտրոնի և լաբորատորիաների համար, թարմացվել է գրադարանային ֆոնդը, կնքվել են նոր պայմանագրեր կլինիկաների, դպրոցների, իրավաբանական գրասենյակների հետ, հիմնադրվել է «Երիտասարդ դասախոսի դպրոց»:

Մշտապես թարմացվում են ներքին կանոնակարգերը, ուսումնական պլանները և առարկաների աշխատանքային ծրագրերը: Այսպիսով, «Բուժական գործ» մասնագիտության կրթական ծրագիրը թարմացվել է 2022 թվականին, «Ստոմատոլոգիա» մասնագիտության կրթական ծրագիրը՝ 2023 թվականին: 2012թ-ից Համալսարանը մեծ ուշադրություն է դարձնում միջազգային համագործակցությանը. օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունում և Վրաստանում Հնդկաստանի Հանրապետության լիազոր դեսպանը ներկա է գտնվել ՄԳՀ-ի կողմից կազմակերպված մի շարք միջոցառումների, համագործակցության պայմանագրեր են կնքվել օտարերկրյա գործընկեր բուհերի հետ:



# ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

## I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ:** Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

*Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիջիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիջիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:*

Համալսարանը նպատակ ունի դառնալ միջազգայնորեն ճանաչված առաջատար տարածաշրջանային կրթական և գիտական հաստատություն, որն իրականացնում է բարձրորակ բազմալեզու կրթական ծրագրեր, ծավալում գիտահետազոտական գործունեություն՝ ուղղված բժշկության, իրավագիտության, կառավարման զարգացմանը և դրանց միջոցով նպաստում տարբեր սոցիալական խնդիրների հաղթահարմանը: (ՈԱԶ -00/02 «Մխիթար Գոշ» համալսարանի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան ) Յուրաքանչյուր նպատակի համար ռազմավարական ծրագրում ներկայացված են համապատասխան խնդիրներ, որոնք հարկավոր է լուծել դրանց իրագործման համար: Առաջադրված խնդիրների լուծմանը հետևելու համար սահմանված են արդյունավետության չափանիշներ, որոնց օգնությամբ կարելի է գնահատել ծրագրի իրագործման ընթացքը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.** ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱԾ-ին:

<p>Հիմքեր</p>	<p><u>ՈԱԶ-00/01 ՄԳՀ-ի կանոնադրություն,</u>  <u>ՈԱԶ-00/02 ՄԳՀ-ի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան,</u>  <u>ՈԱԶ-00/03 ՄԳՀ-ի հավատարմագրող փորձագետների դիտողությունների վերացման 2022թ. գործողությունների պլան,</u>  <u>ՈԱԶ-00/04 ՄԳՀ-ի զարգացման 2022թ. կարճաժամկետ պլան,</u>  <u>ՈԱԶ-00/04a ՄԳՀ-ի զարգացման 2023թ. տարեկան պլան,</u>  <u>ՈԱԶ-00/25 ՄԳՀ-ի կրթության որակի կառավարման համակարգի կանոնակարգ,</u>  <u>ՈԱԶ-03/08 ՄԳՀ-ի հետազոտական գործունեության ռազմավարական պլան,</u>  <u>ՈԱԶ-01/22a Բժշկական ֆակուլտետի զարգացման 2022-2025թթ. ռազմավարական ծրագիր,</u></p>
---------------	--

ՈԱԶ-01/26a ՄԳՀ-ի միացյալ ֆակուլտետի զարգացման 2023-2027թթ. ռազմավարական ծրագիր և պլան:

*Վերլուծել և հիմնավորել, թե որքանով է հաստատության ռազմավարական ծրագիրը համապատասխանում ՄՈւՀ-ի առաքելությանը, նպատակներին և խնդիրներին / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/*

ՄԳՀ-ի առաքելությունը սահմանված է նրա կանոնադրությամբ, ըստ որի՝ «Համալսարանը ոչ պետական, ինքնակառավարվող միջազգային բարձրագույն ուսումնական հաստատություն է, որը պատրաստում է որակյալ մասնագետներ բժշկության, իրավունքի, կառավարման բնագավառներում, շարունակական և ինտեգրված կրթության, բակալավրիատի և մագիստրատուրայի և միջին մասնագիտացված կրթության ծրագրերով՝ կենտրոնանալով շրջանավարտների գործնական հմտությունների և կարողությունների ձեռքբերման վրա՝ ներքին և արտաքին աշխատաշուկայի պահանջներին և ժամանակակից գիտական նվաճումներին համապատասխան» (ՈԱԶ -00/01 ՄԳՀ-ի կանոնադրություն):

ՄԳՀ-ի նպատակները.

1. Հումանիտար, սոցիալական, բնական և մասնագիտական գիտելիքների ոլորտում մասնագիտացված մոտեցման հիման վրա բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստում, որը շրջանավարտին թույլ է տալիս հաջողությամբ աշխատել ընտրած մասնագիտական ոլորտում և լինել մրցունակ աշխատաշուկայում, կարողանալ մշտապես բարելավել սեփական գիտելիքներն ու հմտությունները, զբաղվել գիտամանկավարժական գործունեությամբ,

2. Շրջանավարտների սոցիալապես նշանակալի որակների ձևավորում՝ մարդասիրություն, հանդուրժողականություն, աշխատասիրություն, պատասխանատվություն, նպատակասլացություն, հաղորդակցություն, բարոյականություն, ընդհանուր մշակութային մակարդակի բարձրացում:

ՄԳՀ-ի հիմնական խնդիրները.

1. Համալսարանի զարգացում աշխարհի առաջատար բուհերի օրինակով՝ վերաձվելով տարածաշրջանային ուսումնական կենտրոնի:

2. Կրթական ծրագրերի, նյութատեխնիկական և ինովացիոն-տեխնոլոգիական բազայի մշտական թարմացում, գիտամանկավարժական անձնակազմի, ղեկավար և օժանդակ անձնակազմի խորացված վերապատրաստում:

3. Կրթության բովանդակության բարելավում, կրթության և գիտության ինտեգրման վրա հիմնված մասնագիտացումների և առանձնահատկությունների համակարգերի մշակում և ներդրում:

4. Բնական, հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում տարբեր

ուրրտներում հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների, ինչպես նաև կրթական, մեթոդական և գիտամանկավարժական հետազոտությունների իրականացում՝ ապահովելով գիտահետազոտական արդյունքների ներդրումը ուսումնական գործընթացում:

5. Գիտական մշակումների տարածում և կրթական գործունեության իրականացում:

6. Միջազգային համագործակցության զարգացում, ակադեմիական շարժունության համար պայմանների ապահովում:

7. Համալսարանի վերածում տարածաշրջանի առաջատար մշակութային կենտրոններից մեկի:

Համալսարանի զարգացման ռազմավարությունը համապատասխանում է այս ձևակերպմանը և միտված է դրա իրականացմանը:

ՄԳՀ-ի 2021-2025 թվականների ռազմավարական զարգացման ծրագիրը և այս ժամանակահատվածի համապատասխան գործողությունների ծրագիրը սահմանում են կոնկրետ նպատակներ, խնդիրներ և գործողություններ՝ հասնելու որոշակի առաջընթացի համալսարանի առաքելության իրականացման ուղղությամբ (Հավելվածներ ՈԱԶ-00/02 «Մխիթար Գոշ» համալսարանի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան,

ՈԱԶ-00/03 «Մխիթար Գոշ» համալսարանը հավատարմագրող փորձագետների դիտողությունների վերացման 2022 թ. գործողությունների պլան):

Ռազմավարությունը կառավարման ամենակարևոր գործիքն է: Գործող ծրագրի նպատակներն այն բնութագրերն են, որոնք պետք է ձեռք բերվեն առկա և առաջացող խնդիրների լուծման միջոցով: Ռազմավարության իրականացման համար պատասխանատու են վարչական մարմինները, քանի որ իրենց ձեռքում են պահում վերահսկողության լծակները: Ըստ այդմ, առաջին բանը, որ արվեց ռազմավարական ծրագրի իրականացման համար, ՄԳՀ կառուցվածքի բարելավումն էր՝ կրթական ծառայությունների ժամանակակից շուկայի թելադրած իրողություններին համապատասխան:

Համալսարանի բոլոր աշխատակիցները և բոլոր շահագրգիռ կողմերը ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, որն արտացոլված է ինչպես ռազմավարական ծրագրում, այնպես էլ գործառնական/տարեկան պլաններում (ՈԱԶ -00/02 «Մխիթար Գոշ» համալսարանի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան,

ՈԱԶ -00/04 «Մխիթար Գոշ» համալսարանի զարգացման 2022թ. կարճաժամկետ պլան,

ՈԱԶ -00/04a «Մխիթար Գոշ» համալսարանի զարգացման 2023թ. տարեկան պլան):

Համալսարանի առաքելության և ռազմավարության միջև առկա են անմիջական, սերտ և համակարգված հարաբերություններ: Ռազմավարական ծրագիրը հիմնված է ՄԳՀ-ի առաքելության վրա: Այն սկսվում է նույն առաքելությունից, թվարկում է համալսարանի հիմնարար արժեքները, սկզբունքներն ու տեսլականը, այն է՝ «Մարդու կրթությունը, զարգացումն ու դաստիարակությունը, որոնց շնորհիվ նա կարողանում է հաջողությամբ աշխատել ցանկացած երկրում, ցույց տալ իր մասնագիտական բարձր կարողությունները և ստեղծագործական հնարավորությունները բազմազան և դինամիկ զարգացող աշխարհում, նպաստում են մարդկության բարոյական, մշակութային և գիտական արժեքների պահպանմանն ու բարձրացմանը:

Այսպիսով, ՄԳՀ-ի առաքելությունը պարունակում է հետևյալ մասը. «... աշխատաշուկայում պահանջարկ ունեցող բարձր որակավորում ունեցող մասնագետի պատրաստում...»: Մա լիովին համապատասխանում է ՄԳՀ 2.2.1-ի նպատակին, այն է՝ «Բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստում հումանիտար, սոցիալական, բնական և հատուկ գիտելիքների ոլորտում մասնագիտացված մոտեցման հիման վրա, որը շրջանավարտին թույլ է տալիս հաջողությամբ աշխատել ընտրված մասնագիտության մեջ և աշխատաշուկայում մրցունակ լինել, կարողանալ մշտապես կատարելագործել սեփական գիտելիքներն ու հմտությունները, զբաղվել գիտամանկավարժական գործունեությամբ»: Այս նպատակին հասնելու համար ՄԳՀ-ը ձևավորել է հետևյալ խնդիրները.

3.1. համալսարանի զարգացում աշխարհի առաջատար բուհերի օրինակով, վերածում տարածաշրջանային կադրերի պատրաստման կենտրոնի,

3.2. կրթական ծրագրերի, նյութատեխնիկական և ինովացիոն-տեխնոլոգիական բազայի մշտական թարմացում, գիտամանկավարժական անձնակազմի, ղեկավար և օժանդակ անձնակազմի խորացված վերապատրաստում,

3.3. կրթության բովանդակության բարելավում, կրթության և գիտության ինտեգրման վրա հիմնված մասնագիտացումների և առանձնահատկությունների համակարգերի մշակում և ներդրում,

3.4. բնական, սոցիալական և հումանիտար գիտությունների բնագավառում տարբեր ոլորտներում հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների իրականացում, ինչպես նաև կրթական, մեթոդական և գիտամանկավարժական հետազոտություններ՝ ապահովելով գիտահետազոտական արդյունքների ներդրումը ուսումնական գործընթացում:

ՄԳՀ-ի առաքելությանը և նպատակներին հասնելու համար ՄԳՀ-ի 2021-2025 թվականների զարգացման ռազմավարական ծրագիրը պարունակում է զարգացման հետևյալ նպատակները.

1. Բարձրացնել համալսարանի կառավարման արդյունավետությունն ու որակը,

2. Բոլոնիայի գործընթացի պահանջներին համապատասխան կատարելագործել ընթացիկ կրթական ծրագրերը,

3. Ապահովել բուհի ամբիոնների համալրումը բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմով,

4. Զարգացնել համալսարանի ռեսուրսային բազան, ստեղծել ժամանակակից պայմաններ կրթական և գիտական գործունեության իրականացման համար,

5. Բարելավել ուսուցման և դասավանդման որակն ու արդյունավետությունը, պատրաստել նորարարական գիտական մտածողությամբ օժտված որակյալ և մրցունակ մասնագետներ, որոնք կհամապատասխանեն աշխատաշուկայի պահանջներին, փոխակերպվող հայ հասարակության համակողմանի առաջընթացին և առողջապահական խնդիրների լուծմանը,

6. Ընդլայնել բուհի կրթական, գիտական և հասարակական գործունեության մեջ շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը, մեծացնել ուսանողական ինքնակառավարման մարմինների, կարիերայի կենտրոնի, շրջանավարտների միության մասնակցությունը բուհի առջև դրված խնդիրների լուծման գործում,

7. Նպաստել համալսարանի գիտական, ստեղծագործական և նորարարական գործունեությանը, Հայաստանի և արտերկրի առաջատար գիտական կենտրոնների հետ համագործակցության ձևավորմանն ու զարգացմանը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Բ.** ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Հիմքեր	<p><u>ՈԱԶ-00/01 ՄԳՀ-ի կանոնադրություն,</u></p> <p><u>ՈԱԶ-00/01a ՄԳՀ-ի կառավարման խորհրդի կանոնակարգ,</u></p> <p><u>ՈԱԶ-00/02 ՄԳՀ-ի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան,</u></p> <p><u>ՈԱԶ-00/10 ՄԳՀ-ի գիտական խորհրդի կանոնակարգ,</u></p> <p><u>ՈԱԶ-00/25 ՄԳՀ-ի կրթության որակի կառավարման համակարգի կանոնակարգ,</u></p> <p><u>ՈԱԶ-02/01b ՄԳՀ-ի որակի ապահովման կենտրոնի շահակիցների կարիքների ուսումնասիրության և վերլուծության մասնագետի պաշտոնի անձնագիր,</u></p> <p><u>ՈԱԶ-02/03 ՄԳՀ-ի հարցաշարերը:</u></p>
--------	---

*Վերլուծել, թե ինչպես է ՄՈՒՀ-ը վերհանում ներքին և արտաքին շահակիցների կարիքները: Հիմնավորել մոտեցման արդյունավետությունը/ կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/*

ՄԳՀ-ի ղեկավարությունը հատուկ ներգրավում է ներքին և արտաքին շահակիցներին համալսարանի առաքելության, նպատակների և խնդիրների քննարկմանը: Օրինակ, Համալսարանի առաքելության, նպատակների և խնդիրների փոփոխության հարցը քննարկվել է ՄԳՀ-ի գիտական խորհրդում շահագրգիռ կողմերի դիմումի հիման վրա, այնուհետև խորհրդի որոշումը փոխանցվել է ՄԳՀ-ի կառավարման խորհրդին և հիմնադրին վերջնական եզրակացության համար: (ՈԱԶ -00/01 «Մխիթար Գոշ» համալսարանի կանոնադրություն, ՈԱԶ -00/01a «Մխիթար Գոշ» համալսարանի կառավարման խորհրդի կանոնակարգ, ՈԱԶ-00/10 «Մխիթար Գոշ» համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգ):

Ներքին և արտաքին շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներն անմիջականորեն ներգրավված են ՄԳՀ-ի առաքելության, նպատակների և խնդիրների վերանայման և թարմացման գործընթացում (գործատուների ներկայացուցիչներ, ՄԳՀ-ի դասախոսներ և, իհարկե, ուսանողներ): Շահակիցների նման մասնակցությունը բուհի առաքելության ձևավորմանն ապահովվում է համալսարանի գիտական խորհրդում նրանց ներկայացուցչության միջոցով, որն արտացոլված է ՄԳՀ-ի կանոնադրության մեջ:

Այսպես, ՄԳՀ-ի առաքելության, նպատակների և խնդիրների վերջին թարմացումը ընդունվել է գիտական խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 2/22 նիստում ներքին և արտաքին շահակիցների մասնակցությամբ (Գիտխորհրդի թիվ 2/22 արձանագրություն):

Ձևակերպվել և ներմուծվել է ուսանողների ներկայացուցչության և համալսարանի գործունեությանը նրանց մասնակցության քաղաքականություն, կրթական ծրագրերի մշակման, կառավարման և գնահատման և ուսանողական կյանքի տարբեր հարցերում (ՈԱԶ -00/01 «Մխիթար Գոշ» համալսարանի կանոնադրություն, ՈԱԶ -00/10 «Մխիթար Գոշ» համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգ, ՈԱԶ - 00/11 «Մխիթար Գոշ» համալսարանի ռեկտորատի կանոնակարգ, ՈԱԶ-00/22 «Մխիթար Գոշ» համալսարանի ֆակուլտետի օրինակելի կանոնադրություն): Օրինակ՝ գիտխորհրդին ներկա են ուսանողության ներկայացուցիչներ, հրավիրվում են ռեկտորատ, հանդիպումների դասախոսների հետ՝ մեթոդական սեմինարների շրջանակներում: Սա հնարավորություն է տալիս ուսանողներին ավելի մատչելի դարձնել համալսարանի քաղաքականության և կատարած աշխատանքի մասին տեղեկատվությունը և ուղղակիորեն լսել՝ արդյոք այն համապատասխանում է նրանց ակնկալիքներին:

Ելնելով վերը նշված օրինակներից՝ այս զեկույցը կազմող աշխատանքային խումբը եզրակացնում է, որ ՄԳՀ-ը կապի մեջ է շահագրգիռ կողմերի հետ և հաշվի է առնում ներքին և արտաքին շահագրգիռ կողմերի կարիքները՝ իր առաքելությունը, նպատակները և զարգացման խնդիրները քննարկելիս:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ գ.** ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

<p>Հիմքեր</p>	<p><u>ՈԱԶ -00/01 «Մխիթար Գոշ» համալսարանի կանոնադրություն,</u>  <u>ՈԱԶ -00/02 «Մխիթար Գոշ» համալսարանի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան,</u>  <u>ՈԱԶ-00/10 «Մխիթար Գոշ» համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգ,</u>  <u>ՈԱԶ -00/25 «Մխիթար Գոշ» համալսարանի կրթության որակի կառավարման համակարգի կանոնակարգ,</u>  <u>ՈԱԶ-02/03 «Մխիթար Գոշ» համալսարանի հարցաշարերը,</u>  <u>ՈԱԶ-02/01b «Մխիթար Գոշ» համալսարանի ՈԱԿ շահակիցների կարիքների ուսումնասիրության և վերլուծության մասնագետի պաշտոնի անձնագիր,</u>  <u>Շահակից կողմերի հարցումների արդյունքները,</u>  <u>ՈԱԿ-ի 2022/2023թ հաշվետվություններ,</u>  <u>Ֆակուլտետների հաշվետվություններ,</u>  <u>Կարիերայի կենտրոնի հաշվետվություններ,</u>  <u>Համալսարանի գիտական խորհրդի նիստերի արձանագրություններ:</u></p>
---------------	--

*Կատարել Ռազմավարական ծրագրի իրականացման և որակի ապահովմանը նպաստող մեխանիզմների վերլուծություն (տրամադրել համապատասխան հիմքեր և կատարել հղումներ համապատասխան փաստաթղթերին): Վերլուծել, թե ինչքանով են որակի ապահովման մեխանիզմները նպաստում շարունակական բարելավմանը:*

ՄԳՀ-ի կանոնադրությունը ներառում է համալսարանի առաքելության և նպատակների մեջ փոփոխություններ մտցնելու մեխանիզմներ: ՄԳՀ գիտխորհուրդը ունի նման իրավունք: Գիտխորհուրդը.

3.4.1. Հաստատում է Համալսարանի կանոնադրությունը:

3.4.7. Ռեկտորի առաջարկությամբ հաստատում է բուհի կանոնադրությունը, կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգը, բուհական ներքին կարգապահության կանոնները, գիտաշխատողների պաշտոնները զբաղեցնելու մրցութային կարգը և Համալսարանի ներքին այլ նորմատիվ ակտերը:

3-րդ բաժնի 3.4.1. կետում նաև նշված է ՄԳՀ գիտխորհրդի իրավունքը համալսարանի առաքելության, նպատակների և խնդիրների վերանայման վերաբերյալ:

Այնուհետև գիտխորհրդի որոշումը փոխանցվում է կառավարման խորհրդին և հիմնադրին՝ ՄԳՀ-ի առաքելության, նպատակների և խնդիրների թարմացման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար:

Կանոնադրության մեջ նաև նշվում է, թե ով է գործող գիտխորհրդի անդամ և ըստ այդմ անմիջական մասնակցություն ունենում ՄԳՀ-ի առաքելության, նպատակների, խնդիրների և ռազմավարական զարգացման ծրագրի մշակման գործում:

Գիտխորհրդի կազմի մեջ են ներառվում ՄՊԸ տնօրենը, ռեկտորը (նախագահ), տնտեսական բաժնի տնօրենը, պրոռեկտորները, որակի ապահովման կենտրոնի ղեկավարը, գիտքարտուղարը, ուսումնամեթոդական մասի վարիչը, գլխավոր հաշվապահը, գիտահետազոտական կենտրոնի ղեկավարը, ֆակուլտետների ղեկանները, ամբիոնների վարիչները, ուսխորհրդի նախագահը, ուսանողներ (ուսանողները կազմում են գիտխորհրդի մինչև 25%), նաև, ռեկտորի խորհրդով, այլ մասնաճյուղերի ղեկավարներ, առանձին դասախոսներ և համալսարանի գիտաշխատողներ, Հանրապետության կրթության և գիտության առաջատար մասնագետներ, գործատուներ(գիտխորհրդի ընդհանուր կազմի 15% չափով, 9 անդամ): Ռեկտորի կողմից նշանակվող գիտխորհրդի անդամների և ի պաշտոնե անդամ հանդիսացողների միասնական թիվը չպետք է գերազանցի գիտխորհրդի բոլոր անդամների 50%-ը:

Բացի այդ, ՄԳՀ-ի գիտխորհուրդը հաստատում է համալսարանի զարգացման ռազմավարական ծրագիրը և պլանը, միջազգային համագործակցության պլանը, վերահսկում է տվյալ ծրագրի իրագործումը:

Որպես օրինակ, ներկայացնենք ռազմավարական ծրագրի առաջին նպատակը, նշված խնդիրների և առաջընթացի գնահատման ցուցիչները:

**ՆՊՍՏԱԿ 1.** Բարձրացնել համալսարանի կառավարման արդյունավետությունը և որակը

**Խնդիրներ**

1.1. Բարեփոխել համալսարանի կառավարման համակարգը, հստակեցնել կառուցվածքը և համապատասխանեցնել ռազմավարական ծրագրի խնդիրների և նպատակների արդյունավետ իրագործմանը:

1.2. Թարմացնել տարբեր մակարդակների ղեկավար անձանց պաշտոնների անձնագրերը, լրացնել նրանց գործառույթները:

1.3. Ներմուծել պլանավորման և հաշվետվության համակարգ՝ կատարված աշխատանքների ստուգմամբ՝ Համալսարանի բոլոր կառավարման մակարդակներում և բաժիններում ըստ որակի ապահովման, ՊԻԳԲ շրջափուլի:

1.4. Կառավարման բոլոր մակարդակների և ստորաբաժանումների հաշվետվողականության համակարգի ձևավորում՝ նշելով պատասխանատու անձանց՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով արտաքին գնահատողներ՝ փորձագետներ, երկու կամ ավելի կուրսերի շրջանավարտներ, պետական, ոչ պետական և առևտրային գործատուներ:

1.5. Շարունակել ներքին և արտաքին շահագրգիռ կողմերի հարցումներ անցկացնել համալսարանի կառավարման արդյունավետության և որակի վերաբերյալ, կազմակերպել դրանց արդյունքների բաց քննարկում յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում, պատրաստել առաջարկություններ՝ ուղղված բացահայտված խնդիրների հաղթահարմանը, դրանք միջնաժամկետ, կարճաժամկետ պլաններում ներառելուն, շահագրգիռ կողմերի հետադարձ կապի ապահովում:

1.6. Կազմակերպել սեմինարներ կրթության որակի ապահովման և բուհի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման հարցերով:

**Առաջընթացի գնահատման ցուցիչներ.**

1. Համալսարանի կառավարման համակարգի կառուցվածքի վերանայված սխեմա:

2. ՄԳՀ-ի կառավարման մարմինների գործունեությունը կարգավորող փաստաթղթերի առկայություն:

3. Համալսարանի կառավարման մարմինների աշխատակիցների պաշտոնների անձնագրերի առկայություն՝ գործառույթների նշումով:

4. Բուհի որակի ապահովման ՊԻԳԲ կառավարման մեխանիզմի կիրառում համալսարանի բոլոր ստորաբաժանումներում:

5. ՄԳՀ-ի կառավարման բոլոր ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների առկայություն, ներառյալ ռազմավարական պլանի իրականացման և միջնաժամկետ և կարճաժամկետ պլանների կատարման մասին հաշվետվությունները:

6. ՄԳՀ-ի կառավարման արդյունավետության և որակի ներքին և արտաքին գնահատման արդյունքների քննարկման արձանագրությունը յուրաքանչյուր ուսումնական տարվա համար:

7. Կրթության որակի ապահովման և ՄԳՀ-ի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման հարցերով սեմինարների նյութեր (ՈԱԶ-00/02 «Մխիթար Գոշ» համալսարանի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան)

ՄԳՀ-ում պլանները կազմվում են երկու մակարդակով՝ ռազմավարական (երկարաժամկետ) և մարտավարական (կարճաժամկետ): Պլաններն ունեն ժամկետներ և պատասխանատուներ: Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներն ունեն իրենց ծրագրերն ու պլանները, որոնք փոխկապակցված են համալսարանի ռազմավարական և տարեկան պլանների հետ:

Հարկ է նշել, որ ծրագրերը կարող են փոփոխվել՝ կախված առաջացող խնդիրներից, կրթության որակի կառավարման համակարգի (ԿՈԿՀ) մոնիթորինգի արդյունքներից, օրենսդրական և այլ փոփոխություններից, ֆորսմաժորային իրավիճակներից, ֆինանսական, տնտեսական, ժողովրդագրական և այլ գործոններից: Օրինակ՝ 2022 թվականին, որակի ապահովման կենտրոնի ընդլայնման կապակցությամբ, ուսումնասիրելով համալսարանի ներկա վիճակը՝ հաշվի առնելով հավատարմագրող կազմակերպությունների դիտողություններն ու



առաջարկությունները, արտաքին փորձագետ ներգրավելով, ՈԱԿ-ը մշակեց հավատարմագրման հանձնաժողովի դիտողությունները վերացնելու ծրագիր, որը Համալսարանի ղեկավարության հավանությունը ստանալուց հետո իրագործվեց փուլ առ փուլ:

Ստորաբաժանումների ռազմավարական, մարտավարական և գործառնական, միջանկյալ ծրագրերի իրականացման նկատմամբ հսկողությունն իրականացվում է մի քանի մակարդակներով ՄԳՀ-ի տարբեր կառավարման կառույցների կողմից՝ օգտագործելով հաշվետվական գործիքներ: ԿՈԿՀ-ն ղեկավարվում է իր կանոնակարգով, ընդունված AKKORK-ի և IAAR-ի դիտողությունների հիման վրա: (ՈԱԶ-00/25 «Մխիթար Գոշ» համալսարանի կրթության որակի կառավարման համակարգի կանոնակարգ):

Համալսարանի զարգացման տարեկան ծրագրերն ընդունվում են գիտխորհրդի նիստերում անցած տարվա ծրագրի իրականացման արդյունքների քննարկման արդյունքների հիման վրա:

Որակի ապահովմանը և շարունակական բարելավմանը համալսարանը հասնում է պլանավորել-իրականացնել-գնահատել-բարելավել (ՊԻԳԲ) որակի կառավարման համակարգի կիրառմամբ: Կատարված աշխատանքը վերլուծելիս պարզաբանվում են ուժեղ, թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները: Ըստ այդմ՝ առաջադրվում են գալիք տարվա համար նոր խնդիրներ:

*Վերլուծել Չափանիշ 1-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները: Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:*

*Ուժեղ կողմեր.*

1. ՊԴ կազմը, գործատուները, ուսանողները մասնակցում են բուհի առաքելության, նպատակների սահմանմանը և անհրաժեշտության դեպքում՝ դրանց նորացմանը:

2. Ուսումնասիրելով բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման ներկայիս միտումները՝ ՄԳՀ-ն մշակել և ներդնում է Հիմնադրին կից Կառավարման խորհրդի մասնակցության քաղաքականություն՝ գլոբալ ռազմավարական խնդիրների լուծման համար:

3. Որակի ապահովման մոնիտորինգի համակարգի առկայությունը, որը համապատասխանում է միջազգային չափանիշներին, ներառյալ կրթական ծրագրերը, քանի որ այն արվել է միջազգային հավատարմագրման հանձնաժողովների փորձագետների խորհրդատվության հիման վրա:

4. Մշակվել և իրականացվել է ուսանողների ներկայացուցչության և համալսարանի գործունեությանը նրանց մասնակցության քաղաքականություն, կրթական ծրագրերի մշակման, կառավարման, գնահատման և ուսանողական կյանքի այլ հարցերում (ՈԱԶ-00/01 «Մխիթար Գոշ» համալսարանի կանոնադրություն, ՈԱԶ-00/10 «Մխիթար Գոշ» համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգ, ՈԱԶ-00/11 «Մխիթար Գոշ» համալսարանի ռեկտորատի կանոնակարգ, ՈԱԶ-00/22 «Մխիթար Գոշ» համալսարանի ֆակուլտետի օրինակելի կանոնադրություն): Օրինակ՝ գիտխորհրդի, ռեկտորատի նիստերին ներկա են գտնվում ուսանողության ներկայացուցիչներ, նրանք հրավիրվում են դասախոսների հետ հանդիպումների՝ մեթոդական սեմինարների շրջանակներում: Սա հնարավորություն է տալիս ուսանողներին ավելի մատչելի

դարձնել համալսարանի քաղաքականության և կատարած աշխատանքի մասին տեղեկատվությունը և ուղղակիորեն լսել՝ արդյոք այն համապատասխանում է իրենց ակնկալիքներին:

5. Գործում է կադրերի ռեզերվային քաղաքականություն՝ համալսարանի վարչական և ղեկավար կազմի աշխատակիցներից: Մասնավորապես, վարչական և ղեկավար անձնակազմը, ինչպես նաև ՊԴ կազմը առնվազն 3 տարին մեկ անցում է խորացված վերապատրաստում:

6. Համալսարանի բյուջեի համախմբումը և դրա աճի հնարավորությունների ի հայտ գալը՝ նպաստելով միջազգային ուսանողների ժամանմանը: Գոյություն ունի ուսուցման փոքր ոլորտներում կրթություն ստանալու երաշխիք (ըստ կանոնադրության՝ մի ուղղության միջոցները կարող են վերաբաշխվել մյուսին, եթե նման գործողության անհրաժեշտություն առաջանա):

#### *Թույլ կողմեր.*

1. Պետության կողմից ներդրումների բացակայություն:
2. Մասնագիտական աճի դինամիկայի գնահատման հնարավորության անբավարարություն, կապված բազմաթիվ շրջանավարտների, առաջին հերթին օտարերկրյա քաղաքացիների, հայրենիք մեկնելու հետ:
3. Պետատվերով հատկացված տեղերի ֆինանսավորման ազգային համակարգի բացակայություն:
4. Սեփական համալսարանական կլինիկայի բացակայություն:
5. Որոշ կուրսերում և կրթական ծրագրերում ուսանողների փոքր թիվը, որը կապված է նախ COVID-19 համավարակի, ապա աշխարհաքաղաքական իրավիճակի հետ:

#### *Հնարավորություններ.*

1. Եվրոպական և հետխորհրդային բժշկական կրթական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում՝ ուսումնական ծրագրերի համաժամանակացում՝ ակադեմիական շարժունակությունը զարգացնելու նպատակով:
2. Ակադեմիական համագործակցություն միջազգային համալսարանների հետ՝ պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ակադեմիական շարժունությունն ապահովելու նպատակով:
3. Ֆինանսական միջոցների հատկացում համալսարանի պրակտիկայի բազայի զարգացման, հետազոտական աշխատանքների, դասախոսական կազմի վերապատրաստման համար:
4. Ուսանողներին նյութական օգնության և սոցիալական աջակցության վերաբերյալ մշակված դրույթի ակտիվ ներմուծում՝ գաղտնիությունը պահպանելով:
5. Որակի նոր ձևաչափերի ներդրում. ՄԳՀ GOOGLE հարթակի հետագա զարգացման գործում գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու և ռեսուրսների օպտիմալացման նպատակով SS բաժնում նոր մոդուլների մշակում:

#### *Վտանգներ.*

1. Ներկայիս ֆինանսական ճգնաժամը և համավարակի հետ կապված ազգային

տնտեսական հեռանկարի գնահատման դժվարությունները, ինչպես նաև Հայաստանի սահմանին առկա աշխարհաքաղաքական խնդիրները կարող են ազդել օտարերկրյա ուսանողների կողմնորոշման վրա բարձրագույն ուսումնական հաստատություն ընտրելիս:

2. ՊԴ կազմի և որակյալ մասնագետների միգրացիա գործունեության այլ ոլորտներ, ինչպես նաև այլ երկրներ:
3. Համալսարանի արդիականացման համար պետությունից ֆինանսավորման բացակայություն:
4. Կրթական ծառայությունների մատուցման ոլորտում տարածաշրջանային շուկայում բարձր մրցակցություն:

*Թույլ կողմերը և վտանգները վերացնելու համար անհրաժեշտ միջոցառումներ.*

1. ՄԳՀ-ի կայուն ֆինանսավորում՝ պատշաճ մարքեթինգի և ուսուցման առկա ոլորտներում ուսանողների թվի ավելացման միջոցով:
2. Օտարերկրացի շրջանավարտների մասնագիտական ապագայի մոնիթորինգ՝ կարիերայի և զբաղվածության կենտրոնում շրջանավարտների վիրտուալ ակումբի ստեղծման միջոցով:
3. ՀՀ ուսանողներին պետպատվերով տեղերի հատկացման վերաբերյալ հայտի ներկայացում:
5. ՄԳՀ-ի ենթակառուցվածքի զարգացում՝ նյութատեխնիկական բազայի ընդլայնում, հնարավոր է՝ սեփական հոսթելով:
6. ՄԳՀ-ի կողմից մատուցվող կրթական ծառայությունների ակտիվ գովազդ՝ ցուցահանդեսներ, աշխատանքի տոնավաճառներ, դպրոցներ այցելություններ, սոցիալական միջոցառումներ և զանգվածային լրատվամիջոցներ:
7. ՊԴ կազմի ռեզերվի ընդլայնում: Բժշկական ֆակուլտետում այս ծրագիրն արդեն գործի է դրվել և գործում է համանման մասնագիտությունների պրակտիկ վերապատրաստման բազաների հետ պայմանագրերի կնքման միջոցով:

## II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

**ՉԱՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի նորմերը:

*Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:*

Համալսարանի կառավարումը հիմնված է իր ինքնավարության վրա՝ զուգորդված միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների հետ՝ տարբեր ուղղություններով Հիմնադրի, լիազոր մարմնի (Կառավարման խորհուրդ), գիտխորհրդի, վարչակառավարական անձնակազմի գործառույթներն իրականացնելու ընթացքում: Այս մարմիններից յուրաքանչյուրն ունի Համալսարանը կառավարելու իրավասություններ, ինչպես սահմանված է Կանոնադրությամբ և դրանց կանոնակարգերով: Համալսարանը ապահովում է նյութական և ֆինանսական ռեսուրսների խելամիտ բաշխում՝ ելնելով կառուցվածքային ստորաբաժանումների կարիքներից, օրինակ՝ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներն ապահովված են համակարգիչներով, ուսանողներին տրամադրված են համակարգչային լսարաններ և ընթերցասրահներ, բացվել է բուֆետ-ճաշարան և այլն:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.** Հաստատության կառավարման համակարգն ապահովում է սահմանված էթիկայի կանոններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

<p>Հիմքեր</p>	<p><u>«Կրթության մասին» ՀՀ օրենք,</u>  <u>«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք,</u>  <u>«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք,</u>  <u>ՈԱԶ-00/01 ՄԳՀ-ի կանոնադրություն,</u>  <u>ՈԱԶ-00/01a ՄԳՀ-ի կառավարման խորհրդի կանոնակարգ,</u>  <u>ՈԱԶ -00/07 ՄԳՀ-ի ռեսուրսախնայողության և առկա միջոցների արդյունավետ օգտագործման քաղաքականություն ,</u>  <u>ՈԱԶ -00/08 ՄԳՀ-ի որակի ապահովման քաղաքականություն և</u>  <u>ընթացակարգեր,</u>  <u>ՈԱԶ-00/10 ՄԳՀ-ի գիտական խորհրդի կանոնակարգ,</u>  <u>ՈԱԶ-00/11 ՄԳՀ-ի ռեկտորատի կանոնակարգ ,</u>  <u>ՄԳՀ-ի կազմակերպչական կառուցվածքի սխեման,</u>  <u>ՈԱԶ-00/22 ՄԳՀ -ի ֆակուլտետի օրինակելի կանոնադրություն,</u>  <u>ՈԱԶ - 00/12 ՄԳՀ-ի էթիկայի և բժշկական դեոնթոլոգիայի կանոններ,</u>  <u>ՈԱԶ - 00/13 ՄԳՀ-ի էթիկայի, բժշկական դեոնթոլոգիայի, ակադեմիական</u>  <u>ազնվության և կոռուպցիոն ռիսկերի հարցերի հանձնաժողովի կանոնակարգ,</u>  <u>ՈԱԶ -00/14 ՄԳՀ-ի որակի կառավարման համակարգի կազմակերպման</u>  <u>չափորոշիչ,</u>  <u>ՈԱԶ -00/16 ՄԳՀ-ի ներքին կարգապահական կանոններ,</u>  <u>ՈԱԶ -00/20 ՄԳՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման</u>  <u>կանոնակարգ,</u>  <u>ՈԱԶ -00/21 ՄԳՀ-ի տեխնիկայի անվտանգության կանոններ,</u>  <u>ՈԱԶ -02/04 ՄԳՀ-ի մարքեթինգի և PR բաժնի կանոնակարգ,</u>  <u>ՄԳՀ-ի 2023/2024 թթ. ֆինանսական ծրագիր:</u></p>
	<p><i>Վերլուծել կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը/ կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/ Ինչքանո՞վ է այն նպաստում հաստատության առաքելության արդյունավետ իրականացմանը և որքանո՞վ է այն հասանելի անձնակազմին:</i></p> <p>ՄԳՀ-ի կառավարման համակարգի իրավական հիմքերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության մի շարք օրենքներով.</p> <p><u>«Կրթության մասին» ՀՀ օրենքը</u> պարունակում է նորմեր, թե ով կարող է լինել ուսումնական հաստատության Հիմնադիրը, պետական գրանցման, անվանման և գտնվելու վայրի, ուսումնական հաստատության հիմնադիր փաստաթղթի, ուսումնական հաստատության իրավասությունների մասին, հաստատության և դրա կառավարման մասին և այլն,</p> <p><u>ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը</u>, պարունակում է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ ռեկտոր, պրոռեկտոր, ֆակուլտետներ և ամբիոններ, ուսումնական ծրագիր և աշխատանքային ծրագիր, խոսում է համալսարանի կառավարմանը ուսանողների մասնակցության իրավունքի մասին,</p> <p><u>«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը</u> կարգավորում է ՄՊԸ-ի տնօրենի պաշտոնը և նրա պատասխանատվության շրջանակը:</p>

Այս օրենքները միասին սահմանում են Համալսարանի տեսակը՝ որպես իրավաբանական անձ:

Համալսարանը գործունեություն է իրականացնում Երևան և Վանաձոր քաղաքներում: Վանաձորում գործում են բժշկական քոլեջը, միացյալ ֆակուլտետը, որն իրականացնում է «Իրավագիտություն», «Կառավարում», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Ստոմատոլոգիա» ՄԿԾ-ները: Երևանում ուսումնական գործունեություն է իրականացնում բժշկական ֆակուլտետում «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրերով, ինչպես նաև միացյալ ֆակուլտետում՝ «Իրավագիտություն», «Կառավարում», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրերով:

Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- որակի ապահովման կենտրոն,
- բաժիններ (ընդհանուր բաժին, կադրերի բաժին, հաշվապահական հաշվառման բաժին, ուսումնամեթոդական բաժին, մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի բաժին, կրթական տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին),

- ֆակուլտետներ,
- ամբիոններ,
- գրադարան,
- սիմուլիացիոն տեխնոլոգիաների կենտրոն,
- շրջանավարտների կարիերայի և աշխատանքի տեղավորման կենտրոն,
- գիտահետազոտական կենտրոն և այլ ստորաբաժանումներ՝ համաձայն ընդունված կառուցվածքի:

Համալսարանի կառուցվածքում գործում են հետևյալ ամբիոնները.

Հումանիտար և սոցիալ-բնագիտական առարկաների ամբիոն,

Կենսաբժշկական առարկաների ամբիոն,

Թերապևտիկ հիվանդությունների ամբիոն,

Վիրաբուժական հիվանդությունների ամբիոն,

Մանկաբուժության, մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոն,

Կանխարգելիչ բժշկության և ռազմաբժշկական առարկաների ամբիոն,

Տարրական ուսուցման մանկավարժության ամբիոն,


Տնտեսագիտության և իրավագիտության ամբիոն,

Ստոմատոլոգիայի ամբիոն:

Համալսարանի կառուցվածքը սահմանում է գիտխորհուրդը՝ համաձայնեցված կառավարման խորհրդի և Հիմնադրի հետ, հաստատվում է ռեկտորի հրամանով:



## СТРУКТУРА АРМЯНСКО-РОССИЙСКОГО МЕЖДУНАРОДНОГО УНИВЕРСИТЕТА «МКХИТАР ГОШ»



Համաձայն առաքելության՝ համալսարանը ոչ պետական ինքնակառավարվող միջազգային բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություն է, որն անընդհատ ու ինտեգրացված, մագիստրոսի, բակալավրի, միջին մասնագիտական կրթական ծրագրերով պատրաստում է բժշկագիտության, իրավագիտության, մանկավարժության, կառավարման ոլորտների որակյալ մասնագետներ՝ մշտապես կարևորելով թողարկվող մասնագետների գործնական կարողություններն ու հմտությունները՝ հայրենական և արտերկրի աշխատաշուկաների կարիքներին և արդի գիտական նվաճումներին համահունչ:

Նախկին հավատարմագրման ընթացակարգերը AKKORK և IAAR գործակալություններում անցնելու պահից համալսարանը զգալիորեն փոխել է կառավարման կառուցվածքը:

Համալսարանի կանոնադրությունը սահմանում է համալսարանի կառուցվածքը, կառավարման մարմինների կազմավորման և լիազորությունների հարցերը, կառուցվածքային ստորաբաժանումների կառավարման կարգը:

Ինչպես երևում է սխեմայից (ՄԳՀ-ի կանոնադրության Հավելված), ՄԳՀ-ի կառավարման համակարգը բաղկացած է երեք մակարդակից.

- 1) ՄՊԸ իրավաբանական անձի, կառավարման խորհրդի և տնօրենի մակարդակից, որոնք որոշում են ՄԳՀ-ի զարգացման տնտեսական մոդելը,
- 2) հիմնական ղեկավար պաշտոնատար անձանց մակարդակից, այդ թվում՝ վարչակազմի

և գիտական խորհրդի մակարդակը, որը կարգավորում է դրանց մշակումն ու իրականացումն ապահովող հիմնական ռազմավարական ուղղությունների և փաստաթղթերի ընդունումը,

3) ՄԳՀ-ի շարունակական գործունեությունը կառավարման նախորդ մակարդակներում առաջադրված խնդիրների շրջանակներում ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների մակարդակից՝ իրենց ղեկավարներով կամ մասնագետներով:

ՄԳՀ-ի կառավարումը Համալսարանի առանձին կառուցվածքային ստորաբաժանումների մակարդակում դրսևորվում է որպես հետագա գործընթացների ամբողջական համակարգ. ա) խնդրի բացահայտում, բ) բարելավման միջոցառումների մշակում, գ) իրականացման համար որոշման ընդունում, դ) որոշման իրականացում, ե) իրականացման վերահսկում և գնահատում: Այսպիսով, որպես այս կամ այն ղեկավարին ամբիոնների ենթակայության արդյունավետության օրինակ, դա կարելի է տեսնել կրթական ծրագրի թարմացման օրինակով. ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը հանձնարարում է ուսումնամեթոդական բաժնին մեթոդական տեսանկյունից որևէ առարկայի կրթական ծրագիրը թարմացնել, համապատասխան ուղղության ղեկանին հանձնարարում է արդիականացնել ուսումնական ծրագիրը, իսկ ղեկանը դա անում է ամբիոնի վարիչների կողմից իրեն տրամադրված արդիականացված աշխատանքային ծրագրերի հիման վրա: Արդիականացումից հետո պրոռեկտորը ՄԿԾ-ի քննարկման հարցը ներկայացնում է գիտխորհուրդ, որից հետո փաստաթղթերի կառավարման բաժնին հանձնարարում է գրանցել փաստաթուղթը և ուղարկել շահագրգիռ ստորաբաժանումներին՝ վերանայման:

Հարկ է նշել, որ ընդունված կառույցը փոխկապակցված է նաև Համալսարանի առաքելության հետ: ՄԳՀ-ի կանոնադրության մեջ գրված է. «Համալսարանը ոչ պետական ինքնակառավարվող միջազգային բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություն է, որն անընդհատ ու ինտեգրացված, մագիստրոսի, բակալավրի, միջին մասնագիտական կրթական ծրագրերով պատրաստում է բժշկագիտության, իրավագիտության, մանկավարժության, կառավարման ոլորտների որակյալ մասնագետներ՝ մշտապես կարևորելով թողարկվող մասնագետների գործնական կարողություններն ու հմտությունները՝ հայրենական և արտերկրի աշխատաշուկաների կարիքներին և արդի գիտական նվաճումներին համահունչ»: Ը Վերապատրաստման ծրագրերի որակյալ իրականացման հասնելու համար ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի ենթակայության ներքո ստեղծված են բոլոր անհրաժեշտ ստորաբաժանումները՝ արդիականացման, վերահսկման և ողջ անհրաժեշտ կրթական նորմատիվ դաշտի ստեղծման գործընթացների իրականացման նպատակով: ՄԳՀ-ն միջազգային կարգավիճակն ապահովելու համար ոչ միայն կրթում է օտարերկրյա ուսանողների, այլև ակտիվորեն աշխատում է այդ երկրներում սեփական առաջխաղացման ուղղությամբ, ինչի համար պատասխանատու է միջազգային կապերի գծով պրոռեկտորը: Տարբեր երկրներում աշխատաշուկայի կարիքները գնահատելու, համալսարանի ռազմավարությունը մշակելու, հավատարմագրող հանձնաժողովի դիտողությունների վերացումը վերահսկելու, ՄԳՀ-ն հավատարմագրման նախապատրաստելու համար պատասխանատու է Ռազմավարական զարգացման գծով պրոռեկտորը և Որակի ապահովման կենտրոնը: Առաքելությունն արտացոլում է ուսանողների պատրաստման գործում գիտության ձեռքբերումների շեշտադրումը, ինչի համար պատասխանատու է՝ բժշկական մասնագիտությունների և



գիտական գործունեության գծով պրոռեկտորը: Իսկ գործնական պատրաստվածության, աշխատաշուկայում շրջանավարտների պահանջարկի շեշտադրումն արտացոլվում է բոլոր պրոռեկտորների աշխատանքում՝ կարիերայի և զբաղվածության կենտրոնի հետ միասին: Դրան նպաստում է ուսումնական գործընթացի զրազետ նյութատեխնիկական ապահովումը, ընդհանուր առմամբ ռազմավարական ծրագրումը և բուհի աշխատանքի ֆինանսական ծրագրումը, մասնավորապես, համապատասխան պաշտոնական ստորաբաժանումների և կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ք.** ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Հիմքեր	<p><u>ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը,</u>  <u>ՈԱԶ-00/01 ՄԳՀ-ի կանոնադրություն,</u>  <u>ՈԱԶ-01/07 ՄԳՀ-ի ամբիոնի կանոնակարգ,</u>  <u>ՈԱԶ-01/09 Ուսանողական խորհրդի կանոնադրություն,</u>  <u>ՈԱԶ-03/05 ՈՒԳԸ կանոնադրություն,</u>  <u>ՈԱԶ -02/03 ՄԳՀ-ի հարցաշարեր ,</u>  <u>ՈԱԶ -02/05 ՄԳՀ-ի հարցումների անցկացման կարգը,</u>  <u>ՈԱԶ-02/01b ՄԳՀ-ի ՈԱԿ-ի՝ շահագրգիռ կողմերի կարիքների</u>  <u>ուսումնասիրության և վերլուծության մասնագետի պաշտոնի անձնագիր:</u></p>
--------	---

*Ներկայացնել որոշում կայացնելու գործընթացում դասավանդողների և ուսումնառողների ներգրավվածության արդյունավետության վերլուծությունը:*

ՄԳՀ-ի հիմնական կառուցվածքային ստորաբաժանումները՝ ի դեմս իրենց ղեկավարների, ներկայացված են ՄԳՀ-ի գիտական խորհրդում: Գիտխորհրդի անդամներն ընտրվում են ՄԳՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումներից՝ ըստ հատկացված տեղերի: Հիմնական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները ՄԳՀ-ի ռեկտորատի անդամներ են:

Պրոֆեսորադասախոսական կազմը ընտրովի ներկայացուցչության հիման վրա ընդգրկվում է ֆակուլտետների կառավարման մարմիններում: Մասնակցությունը ֆակուլտետային խորհուրդների աշխատանքներին ապահովվում է ըստ պաշտոնի և ընտրովի: Ի պաշտոնե ֆակուլտետի խորհրդի անդամներ են, ամբիոնների վարիչները: Ընտրովի անդամներն առաջադրվում են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից, հիմնականում՝ ամբիոններից:

Պրոֆեսորադասախոսական կազմը, լինելով ամբիոնների աշխատակիցներ, ամբիոնի վարիչի ղեկավարությամբ մասնակցում է կրթական և գիտական հարցերի քննարկումներին (ՈԱԶ-01/07 ՄԳՀ-ի ամբիոնի կանոնակարգ): Ամբիոնի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են ուսանողները, ուսումնական և օժանդակ անձնակազմը և այլ աշխատակիցներ:

Յուրաքանչյուր 5 տարին մեկ անցկացվում են համալսարանի ղեկավար մարմինների և նրա կառուցվածքային ստորաբաժանումների վերընտրություններ, որոնց արդյունքում

թարմացվում է այդ մարմինների կազմը:

«Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածը վերաբերում է ուսանողների՝ համալսարանի կառավարմանը մասնակցելու իրավունքին: Նման մասնակցության երկու ձև կա.

ա) օրենքով կամ բուհի կանոնադրությամբ սահմանված կարգով բուհի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին մասնակցելը,

բ) մասնակցություն իրենց ուսուցման բովանդակության ձևավորմանը:

Համալսարանում գործում են ուսանողական ինքնակառավարման կազմակերպություններ՝ ուսանողական խորհուրդ (ՈԱՀ-01/09 Ուսանողական խորհրդի կանոնադրություն) և ուսանողական գիտական ընկերությունը (ՈԱՀ-03/05 ՈՒԳԸ կանոնադրություն): ՄԳՀ-ի բյուջեն ներառում է ուսանողների մասնակցությամբ միջոցառումների ծախսերի հոդված՝ ազգային տոների տոնակատարություններ, էքսկուրսիաներ, կոնֆերանսների անցկացում, ցուցահանդեսներ և ճանապարհածախս:

Ե՛վ ուսխորհուրդը, և՛ ուսանողական գիտական ընկերությունը ուսանողների միջից ունեն իրենց ղեկավարները, որոնք ընտրվում են ըստ իրենց նախասիրության: Այդ կառույցների ղեկավարները պարտադիր տեղեր ունեն ՄԳՀ-ի գիտխորհրդի և ռեկտորատի կազմերի մեջ:

ՄԳՀ-ի ուսանողական խորհրդի նախագահը ի պաշտոնե հանդիսանում է ՄԳՀ-ի ռեկտորատի անդամ: Ուսանողների մասնակցությունը ՄԳՀ-ի կառավարմանը ուղղակի չէ: Նրանք մասնակցում են բոլոր տեսակի ընտրություններին բուհի կոլեգիալ մարմինների միջոցով՝ ղեկաններ, ամբիոնի վարիչներ և այլն: Նրանց նախաձեռնությամբ և առաջարկներով քննարկվել են նրանց կարիքներին վերաբերող մի շարք հարցեր և կայացվել համապատասխան որոշումներ:

ՄԳՀ-ի ղեկավարության տեսանկյունից դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը արդյունավետ է, քանի որ այն թույլ է տալիս ներքուստ հայացք նետել ուսումնական գործընթացին: Օրինակ, ինչպես վերը նկարագրվեց, ուսանողների առաջարկով հարցումից հետո համալսարանի մասնաշենքերում բարելավվեց WiFi-ը, նոր ուսումնական ծրագրում ավելացվեց բժշկության պրակտիկ պարապմունքների ժամերը և այլն:

Ուսանողները մասնակցում են ֆակուլտետի խորհրդի նիստերին: Ուսանողներն իրավունք ունեն մասնակցելու կրթության որակի ապահովմանն ուղղված միջոցառումներին, գնահատելու դասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը: Այս իրավունքն ամրագրված է «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և ՄԳՀ-ի կանոնադրությամբ:

Համալսարանի կյանքում ուսանողների մասնակցությունը մեծացնելու նպատակով ղեկավարությունն առնվազն ամիսը մեկ անգամ կազմակերպում է հանդիպումներ ուսանողների և նրանց ակտիվիստների հետ:

Բացի այդ, մի շարք ուսանողներ և դասախոսներ անմիջական աշխատանքային կապի մեջ են ՄԳՀ-ի Որակի ապահովման կենտրոնի հետ, քանի որ նրանք իրենց խմբի շահագրգիռ կողմերի պատասխանատու ներկայացուցիչներ են կրթության որակի համար:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ գ.** ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Հիմքեր	<p><u>«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը,</u>  <u>ՈԱԶ-00/01 ՄԳՀ-ի կանոնադրություն,</u>  <u>ՈԱԶ-00/02 ՄԳՀ-ի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան,</u>  <u>ՈԱԶ-00/04 ՄԳՀ-ի կարճաժամկետ զարգացման ծրագիր 2022 թ.,</u>  <u>ՈԱԶ-00/04a ՄԳՀ-ի զարգացման ծրագիր 2023 թ.,</u>  <u>ՈԱԶ-00/25 «ՄԳՀ-ի որակի կառավարման համակարգի կանոնակարգ,</u>  <u>ՈԱԶ-00/03 ՄԳՀ-ն հավատարմագրող փորձագետների դիտողությունների վերացման 2022թ. գործողությունների պլան,</u>  <u>Ֆակուլտետների զարգացման ծրագրեր,</u>  <u>ՄԳՀ-ի հետազոտական ծրագիր:</u></p>
--------	---

*Վերլուծել պլանավորման և պլանների իրականացման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանո՞վ է այն նպաստում հաստատության առաքելության արդյունավետ իրականացմանը:*

Ծրագրումը, որպես կառավարման գործընթաց, ՄԳՀ-ում ունի հատուկ կառուցվածք և ձևեր, որոնք որոշվում են ՄԳՀ-ի՝ որպես բարձրագույն մասնագիտական կրթություն իրականացնող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության առաքելությամբ:

ՄԳՀ-ում ծրագրերը կազմվում են երկու մակարդակով՝ ռազմավարական (երկարաժամկետ) և մարտավարական (կարճաժամկետ): Ծրագրերն ունեն ժամկետներ և պատասխանատուներ: Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներն ունեն իրենց ծրագրերն ու պլանները, որոնք փոխկապակցված են բուհի ռազմավարական և տարեկան ծրագրերի հետ:

Համալսարանի զարգացման տարեկան ծրագրերն ընդունվում են գիտխորհրդի նիստերում անցած տարվա ծրագրի իրականացման արդյունքների քննարկման արդյունքների հիման վրա:

Քանի որ ՄԳՀ-ի գործունեության ծրագրումն իրականացվում է 2 մակարդակով (ռազմավարական ծրագրում և տարեկան ծրագրում), այդ մակարդակներից յուրաքանչյուրն ունի իր իրականացման մեխանիզմները: Ծրագրման առաջին մակարդակը կենտրոնացած է Համալսարանի զարգացման և բարեփոխման ռազմավարության վրա, իսկ երկրորդը՝ Համալսարանում ուսումնական և գիտական գործընթացի գործառնական ծրագրման վրա:

ՄԳՀ-ի գործունեության մեջ գործառնական ծրագրումը դրսևորվում է հիմնականում ուսումնական գործընթացի ծրագրման միջոցով, որի իրականացման ձևը բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի մշակումն է: Ծրագրման այս համակարգի իրավական հիմքը «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն է (15-րդ հոդվածի 10-րդ կետ), որը սահմանում է, որ բարձրագույն ուսումնական հաստատության կրթական գործունեությունը պետք է հիմնված լինի ռազմավարական ծրագրի

փոփոխություններն ուղղել ըստ կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) գործարկմանը, որն ապահովում է ակադեմիական կրեդիտների համադրելիությունը և փոխանցելիությունը: Բենչմարքինգի արդյունքում մշակվում են կամընտրական առարկաների ծրագրեր ազգային և միջազգային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, ուսանողների կրթական պահանջմունքների հաշվառմամբ և նրանց ընտրությամբ: Օրինակ, «Իրավաբանի մասնագիտական հմտություններ», «Բիզնես իրավունք», «Գլոբալիզացիան և մարդու իրավունքները», որոնք կդասավանդվեն նոր ուսումնական տարվանից:

«Բուժական գործ» ՄԿԾ-ի շրջանավարտ մասնագետներին ուղղված պահանջները համապատասխանում են ՀՀ որակավորման ազգային շրջանակին, ինչպես նաև ՌԴ մասնագիտական չափորոշիչներին: «Բուժական գործ» ՄԿԾ-ի շրջանավարտները համալսարանն ավարտելուց հետո ստանում են բուժող բժշկի որակավորում, որն համարժեք է ընդհանուր պրակտիկայի բժշկի Հնդկաստանի Հանրապետության MBBS (Bachelor of medicine bachelor of surgery) որակավորմանը: Եթե դիտարկենք 10.04.2022թ-ի Ռուսաստանի Դաշնության Ընդհանուր պրակտիկայի բժշկի պրոֆեսիոնալ չափորոշիչի բովանդակությունը, կարող ենք տեսնել, որ այն պարունակում է տվյալ մասնագետի համար անհրաժեշտ հմտությունների հստակ չափանիշները.

- Ստացիոնար բուժման պայմաններում բժշկական օգնություն ցուցաբերելու բժշկական ցուցումների որոշումը,
- Իրականացնել բուժական միջոցառումներ, ընթացակարգեր, մանիպուլյացիաներ բժշկական օգնության ցուցաբերման կարգերին, կլինիկական ցուցումներին համապատասխան,
- Հիվանդներին նշանակել դեղամիջոցներ բժշկական սարքավորումներ, բուժական սնունդ, կոնկրետ կլինիկական իրադրությունը, անհատական հոգեբանական և ընտանեկան ասպեկտները հաշվի առնելով՝ բժշկական օգնության ցուցաբերման կարգերին, կլինիկական ցուցումներին համապատասխան,
- Գնահատել դեղորայքի, բժշկական արտադրանքի և բուժական սննդի կիրառման արդյունավետությունը և անվտանգությունը,
- Կանխել և վերացնել բարդացումները, կողմնակի ազդեցությունները անցանկալի ռեակցիաները, այդ թվում լուրջ և անկանխատեսելի, որոնք ծագել են ախտորոշման կամ բուժական մանիպուլյացիաների, դեղամիջոցների և/ կամ բժշկական արտադրանքի, բուժական սննդի կիրառման արդյունքում,
- Անցկացնել բուժական միջոցառումների դիտարկում և շտկում դրանց կոնկրետ կլինիկական իրադրության հաշվառմամբ,
- Հիվանդներին նշանակել ոչ դեղամիջոցային բուժում՝ կլինիկական իրավիճակի, անհատական-հոգեբանական և ընտանեկան ասպեկտների հաշվառմամբ, ըստ կազմակերպման կարգի և կլինիկական ցուցումների,
- Բուժելիությունը հասնելու և բուժման արդյունավետությունը բարձրացնելու համար կիրառել հիվանդի հետ արդյունավետ շփման հմտությունները,
- Իմանալ կյանքի համար վտանգ ներկայացնող, այդ թվում կլինիկական մահվան (արյան շրջանառության և կամ շնչառության կանգ) իրավիճակները, որոնք ենթադրում են բուժօգնության տրամադրում էքստրեմալ պայմաններում:

Եթե խմբավորենք այս հմտությունները խոշոր բլոկների, կարելի է ձևակերպել 3 հիմնական

ուղղություններ.

1. ֆիզիկական զննման և անամնեզի աշխատանք հիվանդի հետ,
2. հիվանդի բուժման մարտավարության որոշում և հայտնաբերված հիվանդության հետագա թերապիան՝ ներառյալ նաև սուր իրավիճակները և դրանց թերապիան,
3. ապագա վիճակի կանխատեսում և բարդացումների կանխարգելում:

Սովորողների հմտությունները հենց այս 3 բլոկներով են ստուգվում և գնահատվում իրավասու մարմինների կողմից՝ պետական որակավորման ընթացքում:

«Բուժական գործ» մասնագիտությամբ ինտեգրված ՄԿԾ-ի բենչմարքինգը անցկացվել է արտասահմանյան 5 և 1 հայկական համալսարանի միջև՝ հետևյալ ուղղություններով.

- Ըստ կրթական աստիճանների (դիպլոմավորված մասնագետ, անընդհատ և ինտեգրացված ծրագիր) առկայության,
- Ըստ «Բուժական գործ» կրթական ծրագրի առկայության,
- Ըստ առարկայական ծրագրերի (մոդուլների) առկայության,
- Ըստ մասնագիտության կրթական ծրագրով նախատեսված վերջնարդյունքների առկայության,
- Ըստ ուսուցման և դասավանդման մեթոդաբանության,
- Ըստ գնահատման մեթոդաբանության և այլն:

*Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է մասնագիտությունների կրթական ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծություն (բենչմարքինգ):*

Հ/Հ	Երկիր	Համալսարան	Կրթական ծրագիր
<b>«Իրավագիտություն» ՄԿԾ</b>			
1.	Հայաստանի Հանրապետություն	Երևանի պետական համալսարան	Բակալավրի կրթական ծրագիր իրավաբանություն/իրավագիտություն
2.	Իտալիա	Բոլոնիայի համալսարան	Բակալավրի կրթական ծրագիր իրավաբանություն/իրավագիտություն
3.	Իսպանիա	Պավիայի համալսարան	իրավաբանություն/իրավագիտություն
4.	Շվեյցարիա	Ժնևի համալսարան	իրավաբանություն/իրավագիտություն
5.	Կիպրոս	Կիպրոսի համալսարան	իրավաբանություն/իրավագիտություն
6.	Դանիա	Կոպենհագենի համալսարան	իրավաբանություն/իրավագիտություն
7.	Մեծ Բրիտանիա	Միդլենդի համալսարան	իրավաբանություն/իրավագիտություն
8.	Մեծ Բրիտանիա	Լոնդոնի համալսարան	իրավաբանություն/իրավագիտություն
9.	Մեծ Բրիտանիա	Քինգստոնի համալսարան	իրավաբանություն/իրավագիտություն
10.	Ֆրանսիա	Լիոնի	իրավաբանություն/իրավագիտություն

		համալսարան	
11.	Բուլղարիա	Սոֆիայի համալսարան	իրավաբանություն/իրավագիտություն
12.	Իռլանդիա	Դուբլինի համալսարան	իրավաբանություն/իրավագիտություն
13.	Գերմանիա	Մարբուրգի համալսարան	իրավաբանություն/իրավագիտություն
14.	Ռուսաստանի Դաշնություն	Սանկտ- Պետերբուրգի համալսարան	իրավաբանություն/իրավագիտություն
15.	Ռուսաստանի Դաշնություն	Մոսկվայի պետական համալսարան	իրավաբանություն/իրավագիտություն
16.	ԱՄՆ	Հարվարդի իրավաբանական դպրոց	իրավաբանություն/իրավագիտություն

Հ/Հ	Երկիր	Համալսարան	Կրթական ծրագիր
<b>«Բուժական գործ» ՄԿԾ</b>			
1.	Ռուսաստանի Դաշնություն	Ուլյանովսկի պետական համալսարան	Բուժական գործ
2.	Ռուսաստանի Դաշնություն	Սեչենովի բժշկական համալսարան	Բուժական գործ
3.	Վրաստան	LTD TEACHING UNIVERSITY GEOMED	Բուժական գործ
4.	Ռուսաստանի Դաշնություն	Օրենբուրգի պետական բժշկական համալսարան	Բուժական գործ
5.	Ռուսաստանի Դաշնություն	Պերմի պետական բժշկական համալսարան	Բուժական գործ
6.	Հայաստանի Հանրապե-	Ավանդական բժշկության	Բուժական գործ

	տողություն	համալսարան	
<b>Հ/Հ</b>	<b>Երկիր</b>	<b>Համալսարան</b>	<b>Կրթական ծրագիր</b>
<b>«Ստոմատոլոգիա» ՄԿԾ</b>			
1.	Ռուսաստանի Դաշնություն	Ուլյանովսկի պետական համալսարան	Ստոմատոլոգիա
2.	Ռուսաստանի Դաշնություն	Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարան	Ստոմատոլոգիա
3.	Ռուսաստանի Դաշնություն	Բաշկիրայի պետական բժշկական համալսարան	Ստոմատոլոգիա
4.	Ռուսաստանի Դաշնություն	Պերմի պետական բժշկական համալսարան	Ստոմատոլոգիա
5.	Հայաստանի Հանրապետություն	Ավանդական բժշկության համալսարան	Ստոմատոլոգիա
<p><b>ՉԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:</b></p>			
Հիմքեր	<p>ՈԱԶ-00/02 ՄԳՀ-ի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան,          ՈԱԶ-01/16a ՄԳՀ-ի բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և հաստատման կարգ,          ՈԱԶ-01/22a ՄԳՀ-ի Բժշկական ֆակուլտետի զարգացման 2022-2025թթ. ռազմավարական ծրագիր,          ՈԱԶ-01/26a ՄԳՀ-ի միացյալ ֆակուլտետի զարգացման 2023-2027թթ. ռազմավարական ծրագիր և պլան,          ՈԱԶ-00/17 ՄԳՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի տարեկան գործունեության գնահատման և վարկանիշավորման կարգ,          ՈԱԶ -00/03 ՄԳՀ-ը հավատարմագրող փորձագետների դիտողությունների վերացման 2022 թ. գործողությունների պլան,          ՈԱԶ-01/16 ՄԳՀ-ի բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների մշակման և հաստատման մեթոդական ուղեցույց,          ՈԱԶ- 00/09 ՄԳՀ-ի բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգ,          ՈԱԶ-01/23 ՄԳՀ-ի կրթական գործընթացի արդյունավետության գնահատման, մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման ու վերանայման</p>		

մեխանիզմներ և ընթացակարգ:
---------------------------

<i>ՄԿԾ-ով նախատեսված դասընթացների և ուսումնառության ակնկալվող արդյունքների (ՈւԱ) համապատասխանությունը (անհրաժեշտության դեպքում ավելացնել տողերը և սյուները)</i>				
Ուսումնառության արդյունքները /ՈւԱ/		Դասավանդման մեթոդները		Ուսումնառության մեթոդները
<b>«Իրավագիտություն» մասնագիտություն</b>				
ՈւԱ 1	<b>Գիտելիքներ</b>	գիտի պետության և իրավունքի ծագման, զարգացման հիմնական օրինաչափությունները, պետության գործառնությունները և քաղաքական համակարգը, իրավական պետության հատկանիշները և սկզբունքները, իրավունքի նորմերը և աղբյուրները	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, սեմինարներ լրացուցիչ գրականության մշակում, քննարկում, ցուցադրում, հարցումներ)	Վերարտադրողական մեթոդներ, բանավոր ներկայացում, անհատական աշխատանք, իրավիճակային վերլուծություն գործնական և լաբորատոր պարապմունքներ, տարբեր տեսակի պրակտիկաներ, խմբային նախագծերի կատարում, քննարկումներ, կուրսային, ավարտական աշխատանքներ, մագիստրոսական թեզերի պատրաստում
ՈւԱ 2		գիտի սոցիալական հումանիտար և տնտեսական գիտությունների հիմնական մեթոդները և դրույթները	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, քննարկում, ցուցադրում)	Վերարտադրողական մեթոդներ, բանավոր ներկայացում, անհատական աշխատանք, իրավիճակային վերլուծություն
ՈւԱ 3		գիտի նյութական և դատավարական իրավունքի հիմնական նորմերը և ինստիտուտները	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, սեմինարներ լրացուցիչ գրականության մշակում, քննարկում, ցուցադրում, հարցումներ)	Վերարտադրողական մեթոդներ, բանավոր ներկայացում, անհատական աշխատանք, իրավիճակային վերլուծություն
ՈւԱ 4	<b>Հմտություններ</b>	տիրապետում է նորմատիվ իրավական ակտերի մշակման հմտությունների՝ իր մասնագիտական գործունեության ռլորտում	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, քննարկում, գործնական պարապմունքներ)	Վերարտադրողական մեթոդներ, բանավոր ներկայացում, իրավիճակային վերլուծություն, մասնագիտական պորտֆոլիոյի կազմում
ՈւԱ 5		ունի համակարգչի՝ որպես տեղեկատվության կառավարման միջոցի հետ աշխատելու հմտություններ	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, սեմինարներ լրացուցիչ գրականության մշակում, քննարկում, ցուցադրում, հարցումներ)	Վերարտադրողական մեթոդներ, բանավոր ներկայացում,
ՈւԱ 6		Տիրապետում է օրենսդրության պահպանումը իրավունքի սուբյեկտների կողմից ապահովելու հմտությունների	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, գործնական պարապմունքներ)	Վերարտադրողական մեթոդներ, բանավոր ներկայացում, անհատական աշխատանք, իրավիճակային վերլուծություն
ՈւԱ 7		տիրապետում է հռետորական	Խոսքային մեթոդներ	Վերարտադրողական մեթոդներ,

		խոսքի հատկանիշներին	(դասախոսություն, քննարկում, բանավոր ներկայացում)	բանավոր ներկայացում
ՈւԱ 8		կարողանում է կատարել ընդհանրացումներ, վերլուծություններ, տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցել բանավոր և գրավոր խոսքը,	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, քննարկում, բանավոր ներկայացում)	Վերարտադրողական մեթոդներ, բանավոր ներկայացում, տեքստերի վերլուծություն
ՈւԱ 9	<b>Ընդհանրական (փոխանցելի) Կարողություններ</b>	կարողանում է հաղորդակցվել մասնագիտական օտար լեզվով	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, քննարկում, բանավոր ներկայացում)	Վերարտադրողական մեթոդներ, բանավոր ներկայացում,
ՈւԱ10		կարողանում է կիրառել նորմատիվ իրավական ակտերը, իրավաբանորեն ճիշտ որակել փաստերը և հանգամանքները	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, գործնական պարապմունք)	Վերարտադրողական մեթոդներ, բանավոր ներկայացում, խմբային և անհատական աշխատանք, իրավիճակային վերլուծություն, մասնագիտական պորտֆոլիոյի կազմում
ՈւԱ11		կարողանում է հայտնաբերել, կանխարգելել, բացահայտել հանցագործությունները և այլ իրավախախտումները, վերացնել դրանց կատարմանը նպաստող պատճառները	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, սեմինարներ լրացուցիչ գրականության մշակում, քննարկում, ցուցադրում, հարցումներ)	Վերարտադրողական մեթոդներ, խմբային և անհատական աշխատանք, իրավիճակային վերլուծություն, թիմային աշխատանքներ, էսսեներ, ռեֆերատների բանավոր ներկայացումներ, ինքնուրույն նախագծերի կատարում և ներկայացում:
ՈւԱ12		կարողանում է տալ որակյալ իրավաբանական եզրակացություններ և խորհրդատվություն իրավաբանական գործունեության կոնկրետ ոլորտներում	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, գործնական պարապմունք)	Վերարտադրողական մեթոդներ, բանավոր ներկայացում , խմբային և անհատական աշխատանք, իրավիճակային վերլուծություն
ՈւԱ13		կարողանում է համագործակցել գործընկերների հետ, աշխատել թիմում	Խոսքային մեթոդներ, քննարկում	Վերարտադրողական մեթոդներ, խմբային և անհատական աշխատանք, իրավիճակային վերլուծություն, թիմային աշխատանքներ, էսսեներ, ռեֆերատների բանավոր ներկայացումներ, ինքնուրույն նախագծերի կատարում և ներկայացում:
ՄԿԾ-ով նախատեսված դասընթացների և ուսումնառության ակնկալվող արդյունքների (ՈւԱ) համապատասխանությունը (անհրաժեշտության դեպքում ավելացնել տողերը և սյուները)				

**«Բուժական գործ» և «Մտումատուղզիա» մասնագիտությունները**

ՈւԱ 1	Գիտելիքներ	Ցուցաբերում է մարդու մարմնի կառուցվածքի և գործառնությունների խորը պատկերացում՝ համատեղելով ժամանակակից մասնագիտական գիտելիքները մոլեկուլային, բջջային, հյուսվածքային, օրգան-համակարգային և վարքային մակարդակներում	բանավոր մեթոդներ (դասախոսություն, սեմինարներ, լրացուցիչ գրականության ուսումնասիրություն, քննարկում, շնորհանդես, հարցումներ)	Վերարտադրողական մեթոդներ, խմբային և անհատական աշխատանք, իրավիճակային վերլուծություն թիմային աշխատանք, ռեֆերատներ, ռեֆերատների բանավոր ներկայացում, անկախ նախագծերի իրականացում և ներկայացում:
ՈւԱ 2		Ցուցաբերում է մասնագիտական առողջապահական պրակտիկայի, ժամանակակից և հիմնարար հասկացությունների, տեսությունների, մեթոդների առաջադեմ գիտելիքներ և ըմբռնում, ինչպես նաև աշխատանքի, ուսումնառության և հետազոտության մեջ կիրառելի բժշկության վերջին առաջընթացների խորը մասնագիտացված գիտելիքներ:	բանավոր մեթոդներ (դասախոսություն, սեմինարներ, քննարկում, շնորհանդես, հարցումներ), լրացուցիչ գրականության, վիճակագրական տվյալների ուսումնասիրություն:	Վերարտադրողական մեթոդներ, վիճակագրական տվյալների մշակման նախագծերի իրականացում և ներկայացում, վիճակագրական տվյալների վերլուծություն, գիտական գրականությամբ հետազոտական աշխատանքներ:
ՈւԱ 3		Ցուցաբերում է գիտելիք առողջության և կենսաբժշկական ոլորտներում հետազոտական աշխատանքների կատարման հիմունքների մասին:	բանավոր մեթոդներ (դասախոսություն, սեմինարներ, քննարկում, շնորհանդես, հարցումներ), լրացուցիչ գրականության վիճակագրական տվյալների ուսումնասիրություն	Վերարտադրողական մեթոդներ, վիճակագրական տվյալների մշակման նախագծերի իրականացում և ներկայացում, վիճակագրական տվյալների վերլուծություն, գիտական գրականությամբ հետազոտական աշխատանքներ:
ՈւԱ 4		Ցուցաբերում է բժշկության և առողջապահության զարգացման, տեսությունների և առաջատար սկզբունքների խորը պատկերացում:	բանավոր մեթոդներ (դասախոսություն, սեմինարներ, քննարկում, շնորհանդես, հարցումներ), լրացուցիչ գրականության, վիճակագրական տվյալների ուսումնասիրություն	Վերարտադրողական մեթոդներ, վիճակագրական տվյալների մշակման նախագծերի իրականացում և ներկայացում, վիճակագրական տվյալների վերլուծություն, գիտական գրականությամբ հետազոտական աշխատանքներ, կուրսային աշխատանքների պաշտպանություն:
ՈւԱ 5		Ցուցաբերում է կենսաբժշկական, կլինիկական, հանրային առողջության հետազոտություն-	բանավոր մեթոդներ (դասախոսություն, սեմինարներ, քննար-	Վերարտադրողական մեթոդներ, վիճակագրական տվյալների մշակման նախագծերի իրա-

	ների, ինչպես նաև դասավանդման մեթոդների և հարակից տեսությունների և ժամանակակից մոտեցումների գիտելիքներ և ըմբռնում:	կում, շնորհանդես, հարցումներ), լրացուցիչ գրականության, վիճակագրական տվյալների ուսումնասիրություն:	կանացում և ներկայացում, վիճակագրական տվյալների վերլուծություն, գիտական գրականությամբ հետազոտական աշխատանքներ:
ՈւԱ 6	Ցուցաբերում է մարդու հիվանդությունների, օրգանիզմի պաթոլոգիական վիճակների, կառուցվածքային և ֆունկցիոնալ փոփոխությունների, հիմնական կլինիկական և հետկլինիկական դրսևորումների, ախտորոշման, բուժման և կանխարգելման ժամանակակից մոտեցումների մասին գիտելիքներ՝ բժշկության տեսական հիմունքների հետ համատեղ, ինչպես նաև կլինիկական մտածողություն:	Ուսուցման տեսություն. բանավոր մեթոդներ(դասախոսություն, սեմինարներ, քննարկում, շնորհանդես), լրացուցիչ գրականության ուսումնասիրություն: Ուսուցման պրակտիկա. հիվանդների հետ աշխատանք, հիվանդության պատմությունների ուսումնասիրություն դեպքերի մեթոդներ, իրավիճակային խնդիրների լուծում, ստանդարտացված հիվանդ, աշխատանք սիմուլյացիոն կենտրոնի հիման վրա:	Վերարտադրողական մեթոդներ, խմբային և անհատական աշխատանք, իրավիճակային վերլուծություն, հիվանդից կամ ստանդարտացված հիվանդից անամնեզ վերցնելը, հիվանդության պատմություն գրելը, սիմուլյացիոն կենտրոնի հիման վրա անհրաժեշտ արձանագրությունների կատարումը:
ՈւԱ 7	Ցույց է տալիս նորարարական և առաջադեմ մոտեցումներ՝ կիրառելով ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները, ինչպես նաև հիմնական մասնագիտական հմտությունները, որոնք պահանջվում են. <ul style="list-style-type: none"> <li>բժշկության, առողջապահության բնագավառում մասնագիտական աշխատանքի կամ ուսման ընթացքում ծագած չնախատեսված խնդիրներ լուծելիս,</li> <li>հետազոտական և նորարարական գործունեություն իրականացնելիս</li> </ul>	բանավոր մեթոդներ (դասախոսություն, սեմինարներ, քննարկում, շնորհանդես, հարցումներ), լրացուցիչ գրականության, վիճակագրական տվյալների ուսումնասիրություն:	Վերարտադրողական մեթոդներ, վիճակագրական տվյալների մշակման նախագծերի իրականացում և ներկայացում, վիճակագրական տվյալների վերլուծություն, գիտական գրականությամբ հետազոտական աշխատանքներ:



		<ul style="list-style-type: none"> <li>● համատեղելով առողջապահության և հարակից ոլորտների մասին գիտելիքները նոր գիտելիքներ ստեղծելիս:</li> </ul>		
ՈւՍ 8	Հնտությունները(Գիտելիքները կիրառելու կարողությունը)	Ցուցաբերում է արդյունավետ հաղորդակցման հմտություններ հիվանդների, գործընկերների, առողջապահական ոլորտի այլ մասնագետների և հանրության միջև՝ տրամադրելով խորհրդատվություն և փոխանակելով բժշկական տեղեկատվություն, փաստարկներ, գաղափարներ, խնդիրներ և լուծումներ:	Հիվանդների հետ աշխատանք, հիվանդության պատմությունների ուսումնասիրություն, քեյս-մեթոդներ, իրավիճակային խնդիրների լուծում, ստանդարտացված հիվանդ, իրավիճակային դեպքերի կլինիկական վերլուծություն, բժշկական խորհրդատվությունների հաճախում, աշխատանք սիմուլյացիոն կենտրոնի հիման վրա:	Վերարտադրողական մեթոդներ, խմբակային և անհատական աշխատանք, հիվանդից կամ ստանդարտացված հիվանդից անամնեզ վերցնելու հմտությունների ցուցադրում, հիվանդին զննելու հմտությունների ցուցադրում, հիվանդության պատմության կամ դրա առանձին մասերի գրելը:
ՈւՍ 9		Կարողանում է հավաքել, պահել, մշակել, վերլուծել, գնահատել, մեկնաբանել և ներկայացնել տեղեկատվություն բարդ մասնագիտական խնդիրների լուծման համար՝ կատարելապես օգտագործելով ժամանակակից մասնագիտացված համակարգչային ծրագրերը:	Հիվանդների հետ աշխատանք, հիվանդության պատմությունների ուսումնասիրություն, քեյս-մեթոդներ, համակարգչային աշխատանք	Վերարտադրման մեթոդներ. խմբակային և անհատական աշխատանք, հիվանդից կամ ստանդարտացված հիվանդից անամնեզ վերցնելու հմտությունների ցուցադրում, հիվանդին զննելու հմտությունների ցուցադրում, հիվանդության պատմության կամ դրա առանձին մասերի գրելը:
ՈւՍ 10		Ցուցաբերում է մասնագիտական ոլորտի հիմնախնդիրները ուսումնասիրելու, վերլուծելու, գնահատելու, դրանց լուծմանն ուղղված ժամանակակից գիտական մոտեցումներ առաջարկելու և կիրառելու, քննադատական մտածողության միջոցով իրադարձությունների հնարավոր զարգացումը կանխատեսելու կարողություն:	Բանավոր մեթոդներ (դասախոսություն, սեմինարներ, քննարկում, շնորհանդես, հարցումներ), լրացուցիչ գրականության, վիճակագրական տվյալների ուսումնասիրություն:	Վերարտադրման մեթոդներ՝ վիճակագրական տվյալների մշակման նախագծերի իրականացում և ներկայացում, վիճակագրական տվյալների վերլուծություն, գիտական գրականությամբ հետազոտական աշխատանքներ:

	Հնտություններ (տվյալների հետ աշխատելու և հարդարակցման հնտություններ)	Ցուցաբերում է թիմում աշխատելու և թիմի անդամների հետ արդյունավետ համագործակցելու կարողություն:	բանավոր մեթոդներ (դասախոսություն, սեմինարներ, քննարկում, շնորհանդես, հարցումներ), լրացուցիչ գրականության, վիճակագրական տվյալների ուսումնասիրություն:	Վերարտադրման մեթոդներ՝ վիճակագրական տվյալների մշակման նախագծերի իրականացում և ներկայացում, վիճակագրական տվյալների վերլուծություն, գիտական գրականությամբ հետազոտական աշխատանքներ:
ՈւՄ 11		Ցուցաբերում է մասնագիտական ոլորտի նորմատիվ իրավական փաստաթղթերից օգտվելու կարողություն:	բանավոր մեթոդներ (դասախոսություն, սեմինարներ, քննարկում, շնորհանդես, հարցումներ), լրացուցիչ գրականության, վիճակագրական տվյալների ուսումնասիրություն:	Վերարտադրման մեթոդներ՝ վիճակագրական տվյալների մշակման նախագծերի իրականացում և ներկայացում, վիճակագրական տվյալների վերլուծություն, գիտական գրականությամբ հետազոտական աշխատանքներ:
ՈւՄ 12		Ցուցաբերում է մասնագիտական գիտելիքների և պրակտիկայի ընդլայնմանն ուղղված նորարարական և ստեղծագործ լուծումներ մշակելու համար անհրաժեշտ հնտություններ:	բանավոր մեթոդներ (դասախոսություն, սեմինարներ, քննարկում, շնորհանդես, հարցումներ), լրացուցիչ գրականության, վիճակագրական տվյալների ուսումնասիրություն:	Վերարտադրման մեթոդներ՝ վիճակագրական տվյալների մշակման նախագծերի իրականացում և ներկայացում, վիճակագրական տվյալների վերլուծություն, գիտական գրականությամբ հետազոտական աշխատանքներ:
ՈւՄ 13		Ցուցաբերում է միջազգային միջավայրում մասնագիտական և հետազոտական գործունեություն իրականացնելու ունակություն:	բանավոր մեթոդներ (դասախոսություն, սեմինարներ, քննարկում, շնորհանդես, հարցումներ), լրացուցիչ գրականության, վիճակագրական տվյալների ուսումնասիրություն:	Վերարտադրման մեթոդներ՝ վիճակագրական տվյալների մշակման նախագծերի իրականացում և ներկայացում, վիճակագրական տվյալների վերլուծություն, գիտական գրականությամբ հետազոտական աշխատանքներ:
ՈւՄ 14		Իրականացնում է լիարժեք և ինքնուրույն մասնագիտական գործունեություն բժշկության և առողջապահության ոլորտում՝ կիրառելով մասնագիտական խորը գիտելիքներ, հնտություններ, պահպանելով էթիկայի չափանիշները և դրսևորելով	Հիվանդների հետ աշխատանք, հիվանդության պատմությունների ուսումնասիրություն, քեյս-մեթոդներ, իրավիճակային խնդիրների լուծում,	Վերարտադրման մեթոդներ. խմբակային և անհատական աշխատանք, հիվանդից կամ ստանդարտացված հիվանդից անամնեզ վերցնելու հնտությունների ցուցադրում, հիվանդին զննելու հնտությունների ցուցադրում,

	համապատասխան վարքագիծ:	ստանդարտացված հիվանդ, իրավիճակային դեպքերի կլինիկական վերլուծություն, բժշկական խորհրդատվությունների հաճախում, աշխատանք սիմուլյացիոն կենտրոնի հիման վրա:	հիվանդության պատմության կամ դրա առանձին մասերի գրելը:
ՈւԱ 15	Իրականացնում է գործունեություն մասնագիտական և կրթական ոլորտներում, որոնք պահանջում են կառավարման և վերահսկման նորարարական և ստեղծագործական մոտեցումներ, ներառյալ անկանխատեսելի, բարդ և անձանոթ իրավիճակներում որոշումներ կայացնելու ունակություն, թիմային աշխատանքում անհատների համար պատասխանատվություն ստանձնելու ունակություն:	Հիվանդների հետ աշխատանք, հիվանդության պատմությունների ուսումնասիրություն, քեյս-մեթոդներ, իրավիճակային խնդիրների լուծում, ստանդարտացված հիվանդ, իրավիճակային դեպքերի կլինիկական վերլուծություն, բժշկական խորհրդատվությունների հաճախում, աշխատանք սիմուլյացիոն կենտրոնի հիման վրա:	Վերարտադրման մեթոդներ. խմբակային և անհատական աշխատանք, հիվանդից կամ ստանդարտացված հիվանդից անամնեզ վերցնելու հմտությունների ցուցադրում, հիվանդին զննելու հմտությունների ցուցադրում, հիվանդության պատմության կամ դրա առանձին մասերի գրելը:
ՈւԱ 16	Գնահատում է նրանց կարիքները շարունակական կրթության և մասնագիտական զարգացման համար և կարողանում է շարունակել սովորել արագ փոփոխվող միջավայրում:	Հիվանդների հետ աշխատանք, հիվանդության պատմությունների ուսումնասիրություն, քեյս-մեթոդներ, իրավիճակային խնդիրների լուծում, ստանդարտացված հիվանդ, իրավիճակային դեպքերի կլինիկական վերլուծություն, բժշկական խորհրդատվությունների հաճախում, աշխատանք սիմուլյացիոն կենտրոնի հիման վրա:	Վերարտադրման մեթոդներ. խմբակային և անհատական աշխատանք, հիվանդից կամ ստանդարտացված հիվանդից անամնեզ վերցնելու հմտությունների ցուցադրում, հիվանդին զննելու հմտությունների ցուցադրում, հիվանդության պատմության կամ դրա առանձին մասերի գրելը:
<b>«Բուժական գործ» ՄԿԾ-ի վերջնարդյունքների քարտեզը ներկայացված է Հավելված 2-ում.</b>			

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ք.** ՄՈւՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

<p>Հիմքեր</p>	<p>ՈԱԶ-00/02 ՄԳՀ-ի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան,          ՈԱԶ-01/16 ՄԳՀ-ի բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների մշակման և հաստատման կարգ,          ՈԱԶ-03/07 ՄԳՀ-ի ռեսուրսախնայողության և առկա միջոցների արդյունավետ օգտագործման քաղաքականություն,          ՈԱԶ-03/08 ՄԳՀ-ի ՈԱ քաղաքականությունը և ընթացակարգերը,          ՈԱԶ-00/17 ՄԳՀ-ի ՊԴԿ տարեկան գործունեության գնահատման և վարկանիշավորման կարգ,          ՈԱԶ-00/03 ՄԳՀ-ը հավատարմագրող փորձագետների դիտողությունների վերացման 2022թ. գործողությունների պլան,          ՈԱԶ-01/26 ՄԳՀ-ի միացյալ ֆակուլտետի զարգացման 2023-2027թթ. ռազմավարական ծրագիր և պլան,          ՈԱԶ-00/09 ՄԳՀ-ի բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգ,          ՈԱԶ-01/23 ՄԳՀ-ի կրթական գործընթացի արդյունավետության գնահատման, մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման ու վերանայման մեխանիզմներ և ընթացակարգ:</p>
---------------	---

ՄԳՀ-ում իրականացված բարեփոխումների շրջանակում անհրաժեշտություն առաջացավ մշակել ՄԿԾ-ի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որն իրագործվեց մի շարք ներքին իրավական ակտերի մշակման և ընդունման հիման վրա՝ « ՈԱԶ-01/16 ՄԳՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների մշակման և հաստատման կարգ (Մեթոդական ուղեցույց), ՈԱԶ-01/16a «Մխիթար Գոշ» համալսարանում բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և հաստատման կարգ, ՈԱԶ-01/23 «Մխիթար Գոշ» համալսարանի կրթական գործընթացի արդյունավետության գնահատման, մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման ու վերանայման մեխանիզմներ և ընթացակարգ»:

Դրանցում նշված է, որ ուսումնառության և դասավանդման մեթոդները պետք է նպաստեն կրթական վերջնարդյունքներով ձևակերպված գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը, հաշվի առնեն ուսանողների նախնական գիտելիքների, ընդունակությունների տարբեր մակարդակները, խրախուսեն ուսանողների ակտիվությունը լսարանում, ինքնուրույնությունը, լինեն բազմազան, անհրաժեշտության դեպքում խմբային աշխատանք կատարելու հնարավորություն ընձեռեն, յուրաքանչյուր կրթական վերջնարդյունքի համար ներկայացվեն դասավանդման և ուսումնառության համապատասխան մեթոդներ: Օրինակ՝ մասնագիտական տեսական գիտելիքների ձեռքբերման համար հիմնականում օգտագործվում են դասախոսություններ, սեմինարներ, դասախոսի կողմից հանձնարարվող լրացուցիչ գրականության ուսումնասիրություն, իսկ գործնական մասնագիտական գիտելիքների զարգացման համար՝ գործնական և լաբորատոր պարապմունքներ, կլինիկական վերլուծություններ, հիվանդների հետ

աշխատանք ( բժշկական մասնագիտություններ):

Ընդհանրական /փոխանցելի/ կարողությունների ձևավորման համար առաջարկվում են թիմային աշխատանքներ, էսսեներ, քննարկումներ, ինքնուրույն նախագծերի կատարում, պրեզենտացիա և այլ մեթոդներ:

ՄՈՒՀ-ի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագրով ուսանողի հաջողությունը հռչակվել է հիմնարար արժեք, որին համապատասխան կարևորվում են ուսանողի կրթական ձեռքբերումները, դասավանդման և ուսումնառության մեթոդների կատարելագործումը, աշխատաշուկայի պահանջներին, փոխակերպվող հասարակության սոցիալ-տնտեսական առաջընթացին և առողջության պահպանման խնդիրների լուծմանը համապատասխանող, նորարական գիտական մտածողությամբ օժտված որակյալ և մրցունակ մասնագետների պատրաստումը:

Համալսարանի ռազմավարական նպատակներից է ուսանողակենտրոն ուսուցման հետագա զարգացումը (նպատակ 5.2): Ուսանողակենտրոն ուսուցումը խթանում է ուսանողի անհատական ստեղծագործական զարգացումը, նրա հմտությունների համաչափ աճը, ինքնուրույնությունը, վերլուծական և քննադատական մտածողության զարգացումը, բացահայտվում են ուսանողների ուսումնական հետաքրքրությունները և դրանց բարելավմանն աջակցվում է ուսուցման գործընթացի ակտիվ և ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ, ուսումնառության գործընթացի կատարելագործմամբ (անհատական զրույցներ, հարցումներ, ուսումնական խորհրդատուի գործունեություն):

Ուսանողակենտրոն ուսուցման ընթացքում ուսանողը պատասխանատվություն է կրում իր ուսումը պլանավորելու, կարիերայի, հիմնական հմտությունների զարգացման և ՄԿԾ-ի վերջնական արդյունքներին հասնելու համար: Այս դեպքում դասախոսը հանդես է գալիս որպես ուսումնական գործընթացը համակարգող և վերահսկող անձ, գիտելիքի և անհրաժեշտ տեղեկատվության աղբյուր:

Ուսանողակենտրոն ուսուցումը միտված է ուսանողի արդյունավետ ընդգրկվածությանը դասընթացներին, նրա համագործակցությանը ՊԴ կազմի հետ, դասերին հաճախելով, գիտելիքների ձեռքբերմանը և խորացմանը:

Դասախոսական կազմը կիրառում է դասավանդման ակտիվ, ինտերակտիվ, համագործակցային, ավանդական և ժամանակակից մեթոդներ: Դասավանդման մեթոդների արդյունավետությունն ու նպատակաուղղվածությունը երաշխավորված է դասախոսական կազմի մասնագիտական պատրաստվածությամբ և փորձով:

Ուսանողակենտրոն մոտեցմանն է ուղղված յուրաքանչյուր խմբում ուսանողների առավելագույն թվի սահմանափակումը (ոչ ավելի, քան 15-16 ուսանող բժշկական մասնագիտությունների գծով առկա ուսուցման համար): Ուսումնական ծրագրերում տարեցտարի ավելացող ընտրովի առարկաների մասնաբաժինը, որն արտացոլված է նոր ուսումնական ծրագրերում:

Բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստման համար համալսարանը ուսանողներին հնարավորություն է տալիս օգտվել տարբեր տեղեկատվական աղբյուրներից՝ ELS GEOTAR MEDIA «Student Consultant» առցանց գրադարանի, arlis.am-ի, Koob.ru-ի միջոցով, կա մշտական մուտք դեպի համացանց, ինչպես նաև պայմանավորվածություն Հայաստանի Հանրապետության Ազգային գրադարանի հետ:

Ուսանողները կրթական գործընթացի կարևոր սուբյեկտներ են, հետևաբար նրանք անմիջականորեն ներգրավված են դրա կազմակերպման մեջ: Նրանց կարծիքը հաշվի է առնվում դասատախտակում, ընթացիկ և ավարտական քննությունների ժամանակացույցերում, պրակտիկայի կազմակերպման, տեղի, ժամի, դեկավարի, կուրսային, ավարտական աշխատանքների թեմաների և դեկավարների, ընտրովի մոդուլներ ընտրելիս կամ փոխելիս: Անկախ աշխատանքի կառավարման գործընթացում հետադարձ կապը տրամադրվում է ուսանողների հարցումների հիման վրա, նրանց կարծիքները կրթական գործընթացից, որոնք վերաբերում են ուսումնական գործընթացից իրենց բավարարվածությանը:

ՄԳՀ-ի ուսանողները ներգրավվում են հետազոտական գործունեությունում՝ ռեֆերատներ, ինքնուրույն աշխատանքներ, շնորհանդեսներ պատրաստելով, մասնակցում են բիզնես խաղերին, կատարում հետազոտական աշխատանք՝ դասախոսների ղեկավարությամբ: Ամեն տարի տեղի է ունենում գիտաժողով՝ նվիրված հազվագյուտ հիվանդությունների օրվան: Անցկացվում են ֆակուլտետների խորհուրդներ:

ՄԳՀ-ի 2021-2025 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում Համալսարանն իր առջև նպատակ է դրել (նպատակ 5.17) խթանել հետազոտական բաղադրիչի ավելի լայն ընդգրկումը ՄԿԾ-ի շրջանակներում ուսուցանվող առարկաներում, պրակտիկայի անցկացումն ու գնահատումը դարձնել գործիք՝ գնահատելու ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները: (community-based assessment), որի արդյունքում հնարավոր կլինի առավել արդյունավետ չափել վերջնական արդյունքների ձևավորման մակարդակը ոչ միայն ներքին, այլև արտաքին շահառուների տեսանկյունից: Այս գործընթացը դեռ ընթացքի մեջ է, սակայն առաջիկա տարիներին այս գնահատման գործիքն ավելի արդյունավետ կկիրառվի ոչ միայն գործնականում, այլ նաև տարբեր դասընթացներում՝ գործատուների հետ մշակվելիք մոդուլների միջոցով:

«Իրավագիտություն» մասնագիտության ուսանողները նոր ուսումնական տարվանից կներգրավվեն գիտահետազոտական աշխատանքներում՝ H&L LAW GROUP ՍՊԸ-ի հետ կնքված Համագործակցության հուշագրի հիման վրա՝ իրականացնելով «Իրավունք բոլորի համար. Street Law» ծրագիրը, որի շրջանակներում բարձր կուրսերի ուսանողները կայցելեն ավագ դպրոցներ և քոլեջներ, աշակերտների համար կվարեն սեմինար-քննարկումներ գլոբալ աշխարհում մարդու իրավունքների, բիզնեսի հիմունքների և այլ հարցերի շուրջ: Այս ծրագիրը կնպաստի դպրոցականների իրազեկվածության և իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը, իսկ ուսանողները կհամախմբեն իրենց տեսական գիտելիքներն ու հմտությունները: Այս ծրագիրը նպատակաուղղված է լինելու նաև դիմորդների ներգրավմանը Համալսարան:

«Իրավագիտություն» մասնագիտության ուսանողների համար նախատեսվում է ստեղծել նաև իրավաբանական կլինիկա, որտեղ անվճար իրավաբանական խորհրդատվություն կտրամադրեն բնակչության սոցիալապես անապահով խավերին, կնպաստեն բուհի սոցիալական պատասխանատվության բարձրացմանը, բացի այդ, այն կդառնա ուսանողների միջև միջբուհական համագործակցության կարևոր հարթակ: Համալսարանում կուրսային ծրագրերը կազմվում են տեսական գիտելիքների հիման վրա՝ գործնական հմտությունների և կարողությունների զարգացման սկզբունքով: Բովանդակային առումով տեսական և գործնական պարապմունքները մեկ ամբողջություն են: Տեսական բաղադրիչի համախմբումը և հմտությունների ձեռքբերումն իրականացվում են գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպչական տեսակետից

գործնական պարապմունքները հաջորդում են տեսականին:

Տեսական և գործնական պարապմունքները փոխկապակցված են: Սեմինարների/դասընթացների բովանդակությունը և կազմակերպումը նպաստում են ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը և բավարարում են բոլոր կողմերի կարիքները:

Ուսանողներն իրենց ուսման որակի բարելավմանն աջակցում են ուսանողական հարցումներին մասնակցելով, առաջարկություններ ներկայացնելով և կարծիքներ հայտնելով, որոնք վերաբերում են ուսումնական գործընթացից իրենց բավարարվածությանը:

ՄԿԾ-ի որակի ապահովման գործընթացները վերահսկելուն են ուղղված ՄԳՀ-ի ուսումնական վարչության, ֆակուլտետների դեկանների և ամբիոնների վարիչների կողմից իրականացվող դասալսումները, բաց դասերը:

ՄԿԾ-ով նախատեսված առարկաների համապատասխանությունը և ուսումնառության ակնկալվող արդյունքները ներկայացված են յուրաքանչյուր ՄԿԾ-ի հավելվածում (վերջնարդյունքների քարտեզ):

**ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈւՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների և ապահովում է ակադեմիական ազնվությունը:**

Հիմքեր	<p>ՈԱԶ -00/09 ՄԳՀ-ի բեչնարքինգի քաղաքականություն և ընթացակարգ,          ՈԱԶ- 00/13 ՄԳՀ-ի էթիկայի ու բժշկական դեոնոլոգիայի, ակադեմիական ազնվության, կոռուպցիոն ռիսկերի հարցերի հանձնաժողովի կանոնակարգ,          ՈԱԶ-01/10 ՄԳՀ-ի ուսանողների ուսումնառության արդյունքների ստուգման և գնահատման կարգ,          ՈԱԶ-01/11 ՄԳՀ-ի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և դրանց արդյունքների բողոքարկման կարգ,          ՈԱԶ-01/11a ՄԳՀ-ի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների բողոքարկման ընթացակարգ,          ՈԱԶ-01/12 ՄԳՀ-ի ստուգարքների և քննությունների անցկացման, հանձման և դրանց արդյունքների բողոքարկման կանոնակարգ,          ՈԱԶ-01/13 ՄԳՀ-ի բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման, պաշտպանության և գնահատման կարգ,          ՈԱԶ-01/14 ՄԳՀ-ի մագիստրոսական թեզի պատրաստման, պաշտպանության և գնահատման կարգ:</p>
--------	--

Հավատարմագրման դիմում-հայտում ամրագրված 3 ՄԿԾ-ների համար ներկայացնել ուսումնառության արդյունքները և համապատասխան գնահատման մեթոդները

Ուսումնառության արդյունք	Գնահատման մեթոդ
--------------------------	-----------------

**ՄԿԾ «Իրավագիտություն»**

1	գիտի պետության և իրավունքի առաջացման և զարգացման հիմնական օրինաչափությունները, պետության և քաղաքական համակարգի գործառույթները, իրավունքի գերակայության նշաններն ու սկզբունքները, իրավունքի նորմերն ու աղբյուրները	բանավոր հարցում, գրավոր հարցում (անհատական աշխատանք, թեստեր)
2	գիտի սոցիալական, հումանիտար և տնտեսական գիտությունների հիմնական մեթոդներն ու դրույթները	բանավոր հարցում
3	տիրապետում է նյութական և դատավարական իրավունքի հիմնական նորմերին և ինստիտուտներին	բանավոր հարցում, գրավոր հարցում (անհատական աշխատանք, թեստեր)
4	ունի իր մասնագիտական գործունեության ոլորտում նորմատիվ իրավական ակտեր մշակելու հմտություններ	բանավոր հարցում, գրավոր հարցում (անհատական աշխատանք, թեստեր)
5	ունի համակարգչի հետ աշխատելու հմտություններ՝ որպես տեղեկատվության կառավարման միջոց	բանավոր հարցում
6	ունի իրավունքի սուբյեկտների կողմից օրենքի համապատասխանությունն ապահովելու հմտություններ	բանավոր հարցում, գրավոր հարցում (անհատական աշխատանք, թեստեր)



7	ունի հոետորական խոսքի առանձնահատկություններ	բանավոր հարցում
	կարող է կատարել ընդհանրացումներ, վերլուծություններ, տրամաբանորեն ճիշտ, հիմնավորված և հստակ կառուցել բանավոր և գրավոր խոսքը	բանավոր հարցում, գրավոր հարցում (անհատական աշխատանք, թեստեր)
8	կարող է հաղորդակցվել պրոֆեսիոնալ օտար լեզվով	բանավոր հարցում
9	գիտի կիրառել նորմատիվ իրավական ակտերը, իրավաբանորեն ճիշտ գնահատել փաստերն ու հանգամանքները	բանավոր հարցում, գրավոր հարցում (անհատական աշխատանք, թեստեր), անկախ նախագծերի իրականացում և ներկայացում
10	կարողանում է կանխել, բացահայտել հանցագործությունները և այլ իրավախախտումները, վերացնել դրանց կատարմանը նպաստող պատճառները	բանավոր հարցում, գրավոր հարցում, անկախ նախագծերի իրականացում և ներկայացում
11	կարողանում է տալ բարձրորակ իրավաբանական եզրակացումներ և խորհրդատվություններ իրավաբանական գործունեության կոնկրետ ոլորտներում	բանավոր հարցում, գրավոր հարցում (անհատական աշխատանք)
12	Գործընկերների հետ համագործակցելու և թիմում աշխատելու կարողություն	բանավոր հարցում, գրավոր հարցում
<b>ՄԿԾ «Բուժական գործ»</b>		
1	<p>Ընդհանրական կարողություններ.</p> <ul style="list-style-type: none"> <li>- վերացական մտածողության, վերլուծության, սինթեզի կարողություն,</li> <li>- փիլիսոփայական գիտելիքների հիմքերն օգտագործելու կարողություն աշխարհայացքային դիրքորոշում ձևավորելու համար,</li> <li>- հասարակության պատմական զարգացման հիմնական փուլերն ու օրինաչափությունները վերլուծելու կարողություն՝ քաղաքացիական դիրքորոշում ձևավորելու համար,</li> <li>- ոչ ստանդարտ իրավիճակներում գործելու, ընդունված որոշումների համար սոցիալական և էթիկական պատասխանատվություն կրելու ունակություն,</li> <li>- պատրաստակամություն ինքնազարգացման, ինքնաիրացման, ինքնակրթության, ստեղծագործական ներուժի օգտագործման ունակություն,</li> <li>- ֆիզիկական կուլտուրայի մեթոդներն ու միջոցները օգտագործելու ունակություն՝ լիարժեք սոցիալական և մասնագիտական գործունեություն ապահովելու</li> </ul>	<p>Վիճակագրական տվյալների մշակման, գրականության վերլուծության, կուրսային աշխատանքների և նախագծերի պաշտպանություն, բանավոր հարցում-գրույցներ, խնդիրների լուծում:</p>

	<p>համար</p> <ul style="list-style-type: none"> <li>- Արտակարգ իրավիճակներում առաջին օգնության տեխնիկայի, պաշտպանության մեթոդների օգտագործման կարողություն,</li> <li>-կոլեկտիվում աշխատելու պատրաստակամություն, սոցիալական, էթնիկական, դավանական և մշակութային տարբերությունների հանդեպ հանդուրժողականություն:</li> </ul>	
--	---	--

<p>2</p>	<p>Ընդհանուր մասնագիտական կարողություններ.  մասնագիտական գործունեության ստանդարտ  խնդիրները լուծելու կարողություն ` օգտագործելով  տեղեկատվության, մատենագիտական ռեսուրսները,  կենսաբժշկական տերմինաբանությունը,  տեղեկատվական և հաղորդակցական  տեխնոլոգիաները , հաշվի առնելով տեղեկատվական  անվտանգության հիմնական պահանջները,  - ռուսերեն և օտար լեզուներով բանավոր և գրավոր  ձևերով հաղորդակցվելու կարողություն  մասնագիտական գործունեության խնդիրները լուծելու  համար,  - տնտեսական և իրավական գիտելիքների  հիմունքները մասնագիտական գործունեության մեջ  օգտագործելու կարողություն,  - մասնագիտական գործունեության մեջ էթիկական և  դեոնոլոգիական սկզբունքները կիրառելու  կարողություն և պատրաստակամություն,  - մասնագիտական սխալները կանխելու համար  սեփական գործունեության արդյունքները վերլուծելու  ունակություն և պատրաստակամություն,  - Բժշկական գրառումներ վարելու կարողություն,  - մասնագիտական խնդիրների լուծման համար  հիմնական ֆիզիկական, քիմիական, մաթեմատի-  կական և այլ բնական գիտությունների հայեցա-  կարգերն ու մեթոդները օգտագործելու կարողություն,  - մասնագիտական խնդիրների լուծման համար  դեղորայքի և այլ նյութերի, դրանց համակցությունների  բժշկական օգտագործման կարողություն,  - մարդու մարմնում մորֆոֆունկցիոնալ,  ֆիզիոլոգիական պայմանները և պաթոլոգիական  պրոցեսները գնահատելու ունակություն  մասնագիտական խնդիրները լուծելու համար,  -կարողություն ` ապահովելու հիվանդների խնամքի  կազմակերպումը և առողջության առաջնային  նախաբժշկական խնամքի ապահովումը,  -բժշկական օգնության տրամադրման  ընթացակարգերով նախատեսված բժշկական սարքերի  օգտագործման կարողություն:</p>	<p>Բանավոր հարցում-զրույց,  գրավոր հարցում,  թեստավորում, իրավիճակային  խնդիրների լուծում, կուրսային  աշխատանքների և  նախագծերի  պաշտպանություն,  հիվանդությունների  պատմություններ և  ռեֆերատներ , լաբորատոր  աշխատանքի գնահատում:</p>
----------	---	---

<p>3</p>	<p>Մասնագիտական կարողություններ.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Առողջության պահպանմանն ու ամրապնդմանը, ներառյալ առողջ ապրելակերպի ձևավորմանը, հիվանդությունների առաջացման և (կամ) տարածման կանխարգելմանը, դրանց վաղ ախտորոշմանը, դրանց պատճառների և պայմանների բացահայտմանը միտված մի շարք միջոցառումներ իրականացնելու դրանց առաջացման և զարգացման պայմանները, ինչպես նաև շրջակա միջավայրի գործոնների վնասակար հետևանքների վերացմանն ուղղված կարողություն և պատրաստվածություն,</li> <li>-կանխարգելիչ բժշկական զննումներ և դիսպանսեր հսկողություն իրականացնելու կարողություն,</li> <li>- հակահամաճարակային միջոցառումներ իրականացնելու, հատկապես վտանգավոր վարակների օջախներում բնակչության պաշտպանությունը կազմակերպելու կարողություն՝ ճառագայթային իրավիճակի վատթարացման, բնական աղետների և այլ արտակարգ իրավիճակների դեպքում,</li> <li>- բնակչության առողջության ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և բժշկական և վիճակագրական վերլուծության համար սոցիալական և հիգիենիկ մեթոդներ կիրառելու կարողություն,</li> <li>-կարողություն՝ հավաքելու և վերլուծելու հիվանդի գանգատները, նրա բժշկական պատմությունը, հետազոտության արդյունքները, լաբորատոր, գործիքային, ախտաբանական և այլ հետազոտություններ՝ վիճակը ճանաչելու կամ հիվանդության առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար,</li> <li>- հիվանդի հիմնական պաթոլոգիական պայմանները, ախտանիշները, հիվանդության համախտանիշները, նոզոլոգիական ձևերը որոշելու ունակություն՝ համաձայն հիվանդությունների և հարակից առողջական խնդիրների միջազգային վիճակագրական դասակարգման( 10-րդ վերանայված տարբերակ),</li> <li>- ժամանակավոր անաշխատունակության փորձաքննություն անցկացնելու, բժշկասոցիալական փորձաքննությանը մասնակցելու, անձի կենսաբանական մահը պարզելու կարողություն,</li> <li>- տարբեր նոզոլոգիական ձևերով հիվանդների կառավարման մարտավարությունը որոշելու ունակություն,</li> <li>- կարողություն՝ ամբուլատոր պայմաններում և ցերեկային հիվանդանոցներում տարբեր նոզոլոգիական ձևերով հիվանդների կառավարման և բուժման համար,</li> <li>- բժշկական օգնություն ցուցաբերելու կարողություն՝</li> </ul>	<p>Բանավոր հարցում-գրույց, գրավոր հարցում, թեստավորում, իրավիճակային խնդիրների լուծում, կուրսային աշխատանքների և նախագծերի պաշտպանություն, հիվանդությունների պատմություններ և ռեֆերատներ , լաբորատոր աշխատանքի գնահատում:</p>
----------	---	---

<p>հանկարծակի սուր հիվանդությունների, պայմանների, քրոնիկ հիվանդությունների սրման դեպքում, որոնք չեն ուղեկցվում հիվանդի կյանքին սպառնացող վտանգով և չեն պահանջում շտապ բժշկական օգնություն,</p> <ul style="list-style-type: none"> <li>- անհետաձգելի բժշկական միջամտություն պահանջող պայմաններում անհետաձգելի բժշկական օգնության տրամադրմանը մասնակցելու կարողություն,</li> <li>- ֆիզիոլոգիական հղիության, ծննդաբերության անցկացման կարողություն,</li> <li>- արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության տրամադրմանը մասնակցելու կարողություն, ներառյալ բժշկական տարհանմանը մասնակցելը,</li> <li>- բժշկական վերականգնման և սպա բուժման կարիք ունեցող հիվանդների մոտ բնական բուժիչ գործոնների, դեղորայքային, ոչ դեղորայքային թերապիայի և այլ մեթոդների կիրառման անհրաժեշտությունը որոշելու կարողություն,</li> <li>- հիվանդներին և նրանց հարազատներին սովորեցնել առողջության բարելավման հիմնական հիգիենայի միջոցները, հիմնական ֆիզիոլոգիական ցուցանիշների ինքնավերահսկման հմտությունները, որոնք նպաստում են առողջության պահպանմանն ու խթանմանը, հիվանդությունների կանխարգելմանը,</li> <li>- ռիսկի գործոնների վերացման և առողջ ապրելակերպի հմտությունների ձևավորման համար կրթական գործունեության կարողություն,</li> <li>- քաղաքացիների առողջության պաշտպանության ոլորտում, բժշկական կազմակերպություններում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում կազմակերպման և կառավարման հիմնական սկզբունքները կիրառելու ունակություն,</li> <li>- բժշկական օգնության որակի գնահատմանը մասնակցելու ունակություն՝ օգտագործելով հիմնական բժշկական և վիճակագրական ցուցանիշները,</li> <li>- արտակարգ իրավիճակներում բժշկական օգնություն կազմակերպելու ունակություն, ներառյալ բժշկական տարհանումը,</li> <li>- ապացույցների վրա հիմնված բժշկական տեղեկատվությունը վերլուծելու և հրապարակայնորեն ներկայացնելու կարողություն,</li> <li>- գիտական հետազոտություններին մասնակցելու ունակություն,</li> <li>- քաղաքացիների առողջության պահպանմանն ուղղված նոր մեթոդների և տեխնիկայի ներդրմանը մասնակցելու ունակություն:</li> </ul>	
---	--

ՄԿԾ «Ստումատոլոգիա»		
1	<p>Ընդհանուր կարողություններ.</p> <ul style="list-style-type: none"> <li>- վերացական մտածողության, վերլուծության, սինթեզի կարողություն,</li> <li>- փիլիսոփայական գիտելիքների հիմքերն օգտագործելու կարողություն՝ աշխարհայացքային դիրքորոշում ձևավորելու համար,</li> <li>- հասարակության պատմական զարգացման հիմնական փուլերն ու օրինաչափությունները վերլուծելու կարողություն՝ քաղաքացիական դիրքորոշում ձևավորելու համար,</li> <li>- ոչ ստանդարտ իրավիճակներում գործելու, ընդունված որոշումների համար սոցիալական և էթիկական պատասխանատվություն կրելու ունակություն,</li> <li>- ինքնագարգացման, ինքնաիրացման, ինքնակրթության, ստեղծագործական ներուժի օգտագործման ունակություն,</li> <li>- ֆիզիկական կուլտուրայի մեթոդներն ու միջոցները օգտագործելու ունակություն՝ լիարժեք սոցիալական և մասնագիտական գործունեություն ապահովելու համար,</li> <li>- Արտակարգ իրավիճակներում առաջին օգնության տեխնիկայի, պաշտպանության մեթոդների օգտագործման կարողություն,</li> <li>- թիմում աշխատելու, սոցիալական, էթնիկական, դավանանքային և մշակութային տարբերությունները հանդուրժողաբար ընկալելու կարողություն:</li> </ul>	<p>Վիճակագրական տվյալների մշակման, գրականության վերլուծության, կուրսային աշխատանքների և նախագծերի պաշտպանության, բանավոր հարցում-գրույցի խնդիրների լուծում:</p>
2	<p>Ընդհանուր մասնագիտական կարողություններ.</p> <ul style="list-style-type: none"> <li>- ստանդարտ մասնագիտական առաջադրանքներ լուծելու կարողություն,</li> <li>-տեղեկատվություն, մատենագիտական ռեսուրսներ, կենսաբժշկական տերմինաբանություն, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ օգտագործելով և հաշվի առնելով տեղեկատվական անվտանգության հիմնական պահանջները գործունեություն ծավալելու կարողություն,</li> <li>- մասնագիտական գործունեության խնդիրները լուծելու համար բանավոր և գրավոր ձևերով հաղորդակցման կարողություն,</li> <li>-մասնագիտական գործունեության մեջ տնտեսական և իրավական գիտելիքների հիմունքները օգտագործելու ունակություն,</li> <li>- էթիկական և դեոնոթոլոգիական սկզբունքների կիրառման կարողություն մասնագիտական գործունեության մեջ,</li> <li>- սեփական գործունեության արդյունքները վերլուծելու կարողություն մասնագիտական սխալները կանխելու</li> </ul>	<p>Բանավոր հարցում-գրույց, գրավոր հարցում, թեստավորում, իրավիճակային խնդիրների լուծում, կուրսային աշխատանքների և նախագծերի պաշտպանություն, հիվանդությունների պատմություններ և ռեֆերատներ , լաբորատոր աշխատանքի գնահատում</p>

	<p>համար,</p> <ul style="list-style-type: none"> <li>- բժշկական գրառումներ վարելու կարողություն,</li> <li>- մասնագիտական խնդիրների լուծման համար ֆիզիկական, քիմիական, մաթեմատիկական և այլ բնական գիտությունների հիմնական հասկացությունները և մեթոդները օգտագործելու կարողություն,</li> <li>- դեղերի և դրանց համակցությունների օգտագործման կարողություն մասնագիտական խնդիրներ լուծելիս,</li> <li>- մասնագիտական խնդիրները լուծելու համար մարդու մարմնում մորֆոֆունկցիոնալ, ֆիզիոլոգիական պայմանները և պաթոլոգիական գործընթացները գնահատելու ունակություն,</li> <li>- հիվանդների խնամքի կազմակերպումն ու առողջության առաջնային նախաբժշկական օգնության տրամադրումն ապահովելու կարողություն,</li> <li>- բժշկական սարքերի օգտագործման կարողություն, ինչը նախատեսված է ատամնաբուժական հիվանդություններով հիվանդներին բժշկական օգնություն ցուցաբերելու ընթացակարգերով:</li> </ul>	
3	<p>Մասնագիտական կարողություններ.</p> <ul style="list-style-type: none"> <li>- համալիր միջոցառումներ իրականացնելու կարողություն՝ ուղղված առողջության պահպանմանն ու ամրապնդմանը, ներառյալ առողջ ապրելակերպի ձևավորումը, ատամնաբուժական հիվանդությունների առաջացման և (կամ) տարածման կանխարգելումը, դրանց վաղ ախտորոշումը, դրանց առաջացման և զարգացման պատճառների և պայմանների բացահայտումը, ինչպես նաև մարդու առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների վնասակար ազդեցության վերացումը,</li> <li>- կանխարգելում իրականացնելու կարողություն ,</li> <li>- ատամնաբուժական պաթոլոգիա ունեցող հիվանդների բժշկական զննում, կլինիկական զննում և դիսպանսերային դիտարկում,</li> <li>- հակահամաճարակային միջոցառումներ իրականացնելու կարողություն, կազմակերպելու բնակչության պաշտպանությունը հատկապես վտանգավոր վարակների օջախներում, ճառագայթային իրավիճակի վատթարացման, բնական աղետների և այլ արտակարգ իրավիճակների դեպքում,</li> <li>- ատամնաբուժական հիվանդությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և բժշկական և վիճակագրական վերլուծության համար սոցիալական և հիգիենիկ մեթոդներ օգտագործելու կարողություն,</li> <li>- հիվանդների կողմից տրված բողոքները հավաքելու և վերլուծելու կարողություն. անամնեզ, հետազոտության</li> </ul>	<p>Բանավոր հարցում-գրույց, գրավոր հարցում, թեստավորում, իրավիճակային խնդիրների լուծում, կուրսային աշխատանքների և նախագծերի պաշտպանություն, հիվանդությունների պատմություններ և ռեֆերատներ, լաբորատոր աշխատանքի գնահատում:</p>

<p>արդյունքներ, լաբորատոր, գործիքային, ախտաբանական և այլ հետազոտություններ՝ վիճակը ըմբռնելու կամ ատամնաբուժական հիվանդության առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար,</p> <ul style="list-style-type: none"> <li>- հիվանդների մոտ հիմնական պաթոլոգիկ վիճակների, ախտանշանների որոշելու ունակություն,</li> <li>- հիվանդությունների և հարակից առողջական խնդիրների միջազգային վիճակագրական դասակարգմանը համաձայն ատամնաբուժական հիվանդությունների ախտանշանները, նոզոլոգիական ձևերը որոշելու կարողություն,</li> <li>- ժամանակավոր անաշխատունակության փորձաքննություն անցկացնելու, բժշկասոցիալական փորձաքննությանը մասնակցության կարողություն՝ անձի կենսաբանական մահը հաստատելու համար,</li> <li>- տարբեր ստոմատոլոգիական հիվանդների բուժման մարտավարությունը որոշելու ունակություն,</li> <li>- հիվանդներին կառավարելու և ատամնաբուժական հիվանդություններ ամբուլատոր հիմունքներով և ցերեկային հիվանդանոցային պայմաններում բուժելու կարողություն,</li> <li>- բժշկական օգնության տրամադրմանը մասնակցելու կարողություն արտակարգ իրավիճակներում, ներառյալ բժշկական տարհանմանը մասնակցելը,</li> <li>- բնական բուժիչ գործոնների, դեղորայքային, ոչ դեղորայքային թերապիա և այլ մեթոդների կիրառման անհրաժեշտությունը որոշելու կարողություն ատամնաբուժական հիվանդություններ ունեցող հիվանդների մոտ, ովքեր բժշկական վերականգնման և ապա բուժման կարիք ունեն,</li> <li>- բնակչությանը տարրական հիգիենիկ կրթության տրամադրման կարողություն, պրոֆիլակտիկ գործունեություն, հիմնական ֆիզիոլոգիական ցուցանիշների ինքնավերահսկման հմտություններ, որոնք նպաստում են առողջության պահպանմանն ու խթանմանը, ատամնաբուժական հիվանդությունների կանխարգելմանը,</li> <li>- կրթական գործունեության իրականացման կարողություն՝ ռիսկի գործոնների վերացում և առողջ ապրելակերպի ձևավորում,</li> <li>- քաղաքացիների առողջության պաշտպանություն բուժհիմնարկներում, ստոմատոլոգիական բուժօգնության գնահատման ունակություն՝ միջազգային բժշկական վիճակագրական ցուցանիշների հիման վրա,</li> <li>- արտակարգ իրավիճակներում բժշկական օգնություն կազմակերպելու ունակություն, ներառյալ բժշկական տարհանումը,</li> </ul>	
--	--



<p>- ապացույցների վրա հիմնված բժշկական տեղեկատվության վերլուծության և հանրային ներկայացման կարողություն, - գիտական հետազոտություններին մասնակցելու ունակություն, - հանրային առողջության պահպանմանն ուղղված նոր մեթոդների և տեխնիկայի ներդրմանը մասնակցելու կարողություն:</p>	
--	--

Գնահատման քաղաքականությունն արտացոլված է ներքին իրավական ակտերում և կառուցված է «գիտելիք-հմտություն-կարողություն» շղթայով: Համալսարանի զարգացման 2021-2025 թվականների ռազմավարական ծրագրում ընդգծվում է, որ Համալսարանը մշտապես բարելավում և նպաստավոր միջավայր է ստեղծում ուսանողների համար՝ ուսումնառության, այդ թվում՝ գնահատման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Առկա կրթական ծրագրերի կատարելագործման համատեքստում կարևորվում է.

- ապահովել ուսանողի գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերումը բոլոր կրթական ծրագրերի արդյունքներում,
- գնահատման բազմագործոն համակարգը դարձնել բաց, անկողմնակալ և կիրառական առումով պարզ ու հասկանալի,
- բարելավել գնահատման համակարգը՝ հիմնվելով առարկաների բնութագրերի, ուսումնառության ակնկալվող արդյունքների վրա, ինչը թույլ կտա գնահատել ակնկալվող գիտելիքները, հմտությունները և կարողությունները:

Գնահատման քաղաքականությունը հիմնված է Համալսարանի որդեգրած սկզբունքների ու արժեքների վրա, որոնք նպաստում են առաքելության իրականացմանը: Այն ներառում է հետևյալ բաղադրիչները.

- առարկայական ծրագրերի գնահատում,
- հետադարձ կապի կիրառում,
- կրթական ռեսուրսների ապահովում,
- գործընթացի կազմակերպման որակի ապահովում և բարելավում:

Համալսարանում կիրառվում է գիտելիքի գնահատման բազմագործոնային համակարգը, որը ներառում է հաճախելիության և ընթացիկ ակտիվության, ուսանողների ինքնուրույն աշխատանքի, ընթացիկ, եզրափակիչ ստուգման և ամփոփիչ ատեստավորման բաղադրիչներ:

Գնահատման կարգում ներկայացված են գնահատման չափանիշները, որոնց ընտրությունը հիմնված է կրթական ծրագրի կամ դասընթացի վերջնարդյունքների վրա: Ինչ վերաբերում է յուրաքանչյուր կոնկրետ դասընթացին, որոշվում են գիտելիքները, հմտությունները և կարողությունները, որոնք ուսանողը պետք է ձեռք բերի այս դասընթացը հաջողությամբ ավարտելու համար: Որքանով է ուսանողի ուսումը համապատասխանում ծրագրի նախատեսված արդյունքներին, որոշվում է՝ օգտագործելով գնահատման չափանիշները: Ֆակուլտետի դասախոսները ներգրավված են գնահատման չափանիշների սահմանման և կիրառման մեջ իրենց դասավանդվող դասընթացի մակարդակով:

Տարբեր ոլորտներում ուսանողների գնահատման մեթոդաբանությունը տարբերվում է՝ կախված մասնագիտությունից: Այսպիսով, «Բուժական գործ» և «Մտումատուլոգիա» կրթական ծրագրի ուսանողների գիտելիքները, հմտություններն ու կարողությունները ստուգելիս շեշտը դրվում է հիմնականում տեսական գիտելիքները գործնականում կիրառելու ունակության վրա: Ավելին, որքան բարձր է ուսման ընթացքը, այնքան ավելի շատ գործնական հմտություններ և կարողություններ պետք է ձևավորվեն ուսանողների մոտ:

Համալսարանի ուսանողները մշտապես տեղեկացված են գնահատման համակարգի պահանջների մասին: Յուրաքանչյուր առարկայի դասախոսի կողմից ուսումնասիրության սկզբում այդ պահանջներին և գնահատման չափանիշներին ծանոթացնելու միջոցով:

Գնահատման կարգը տեղադրված է բուհի կայքում: Ուսանողն իրավունք ունի բողոքարկել գնահատման արդյունքները քննության գնահատման հրապարակման պահից՝ դիմելով դասախոսին կամ քննական հանձնաժողովին, անհամաձայնության դեպքում՝ ամբիոնի վարիչին, ֆակուլտետի դեկանին: Ուսանողն իրավունք ունի կրկնել դասընթացները և վերահանձնել քննությունները:

Ավարտական ատեստավորումն անցկացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի նախարարի հրամանով և ներքին իրավական ակտերով սահմանված կարգերով (ՈԱԶ-01/11 ՄԳՀ-ի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և դրանց արդյունքների բողոքարկման կարգ, ՈԱԶ-01/11a ՄԳՀ-ի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների բողոքարկման ընթացակարգ և այլն):

Գնահատման գործընթացում ակադեմիական ազնվությունը պահպանելու և գրագողության դեմ պայքարելու նպատակով քննություններն ու լուծարքներն անցկացվում են հանձնաժողովներով, ամփոփիչ ավարտական քննությունները տեսաձայնագրվում են: Համալսարանի գնահատման կարգով չի խրախուսվում բանավոր քննությունները, անցում է կատարվում գրավոր և թեստային քննություններին, ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը պարտադիր գրախոսվում են: Գրագողության դեպքում ուսանողի աշխատանքը չի ընդունվում: Համալսարանը չունի գրագողության դեմ պայքարի ավտոմատացված համակարգ: Նախատեսվում է համակարգչային եղանակով քննությունների կազմակերպման ներդրում:

Ուսանողների գնահատման և գրագողության դեմ պայքարի արդյունավետության առումով դեռևս անելիքներ կան:

<b>ԶՍՓՈՐՈՇԻՉ դ.</b> ՄՈւՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:						
Հիմքեր	ՈԱԶ-00/09 ՄԳՀ-ի բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգ, ՈԱԶ-00/26 ՄԳՀ-ի երիտասարդ լիդերների պատրաստման քաղաքականություն, ՈԱԶ-01/16 ՄԳՀ-ի բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների մշակման և հաստատման կարգ (մեթոդական ուղեցույց), ՈԱԶ-01/21 ՄԳՀ-ի սովորողների ակադեմիական շարժունության կարգ, ՈԱԶ-01/23 ՄԳՀ-ի կրթական գործընթացի արդյունավետության գնահատման, ՄԿԾ-երի մշտադիտարկման ու վերանայման մեխանիզմներ և ընթացակարգ, ՈԱԶ-01/26 ՄԳՀ-ի միացյալ ֆակուլտետի կանոնադրություն:					
<i>Ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և ուսանողների թվաքանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովող գործող համաձայնագրեր:</i>						
	Երկիր	2019	2020	2021	2022	2023

1	Ռուսաստանի Դաշնություն	1	85	28	6	2
2	Բարբադոս	-	-	-	-	16
3	Իրան	-	3	3	-	-
4	Չինաստան	-	19	-	-	-
5	Ուկրաինա	-	46	20	-	1
6	Հայաստան (ներքին տեղափոխումներ)	6	10	8	132	60

Ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և դասավանդողների թվաքանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի դասավանդող անձնակազմի փոխանակումն ու շարժունությունը ապահովող գործող համաձայնագրեր:

Համագործակցության հուշագիր «Institute of international education»-ի հետ Պրահա, Չեխիա 2021 թ., Պրակտիկայի համաձայնագիր Ved Multispeciality Hospital-ի հետ, Ահմեդաբադ, Գուջրաթ 2021թ., Պրակտիկայի համաձայնագիր՝ Սրինգար Ջամուի և Քաշմիրի Ժամանակակից հիվանդանոցի հետ, Համագործակցության պայմանագիր Օրենբուրգի պետական բժշկական համալսարանի հետ - 2022 թ., Համագործակցության պայմանագիր Պերմի պետական բժշկական համալսարանի հետ - 2023 թ.:

Ուսանողների ներհոսք

	Երկիր և հաստատություն	2019	2020	2021	2022	2023
1	Հնդկաստան			1		1
2	Ռուսաստանի Դաշնություն				1	1

Վերլուծել և հիմնավորել մասնագիտության կրթական ծրագրերի բովանդակային հուսալիությունը, ՄՈՒԷ-ի և այլ հաստատությունների համապատասխան մասնագիտական ծրագրերի հետ համադրելիությունը, ինչպես նաև այդ մոտեցումների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանով է այն նպաստում ուսումնառողների ու դասավանդողների շարժունությանը:

ՄԳՀ-ի ուսանողների ակադեմիական շարժունությունն այս պահին բաղկացած է այլ բուհերից ուսանողների տեղափոխությունից՝ ՄԳՀ-ում ուսումը շարունակելու նպատակով: Տեղափոխվողների թվում գերակշռում են Ռուսաստանի, Ուկրաինայի և Հայաստանի բուհերի արտասահմանցի ուսանողները:

Բացի այդ, համագործակցության պայմանագրեր են կնքվել Օրենբուրգի պետական բժշկական համալսարանի և Պերմի պետական բժշկական համալսարանի հետ: Համագործակցության շրջանակներում նախատեսվում են ակադեմիական շարժունության ծրագրեր ուսանողների և դասախոսական կազմի համար:

Մի քանի անգամ Հնդկաստանի Հանրապետությունից դասախոսները հեռավար և առկա դասախոսություններ են անցկացրել հնդիկ ուսանողների համար՝ շրջանավարտներին պատրաստելու համար հնդկական FMGE ներքին հավատարմագրման քննությանը:

Համալսարանում վերջին տարիներին կրթական ծրագրերի ստեղծման և կատարելագործման գործընթացներն իրականացվում են՝ հաշվի առնելով հայրենական և արտասահմանյան բուհերի փորձը և միջազգային չափանիշները, որոնք որպես զարգացման ուղղություններ նշված են բուհի զարգացման ռազմավարական ծրագրում:

Ուսանողների ներբուհական և միջբուհական շարժունությունը կարգավորվում է «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների ակադեմիական շարժունության կարգով» (ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի N1240-Ն որոշման հավելված), ըստ որի՝ ուսանողին թույլատրվում է փոխել մասնագիտությունը կամ կրթության ձևը, եթե կրեդիտների քանակը չի որոշվում 20 կրեդիտը գերազանցող միավորների տարբերությամբ:

Անհրաժեշտ է հրատապ միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու բուհի ուսանողների և դասախոսների միջազգային շարժունությունը: ՄԳՀ-ի ղեկավարությունը, ինչպես նկարագրված է զեկույցի նախորդ պարբերություններում, համեմատել է «Բուժական գործ», «Ստոմատոլոգիա» և «Իրավագիտություն» ՄԿԾ-երը այլ համալսարանների ծրագրերի հետ և պարզել է, որ ՄԳՀ-ի և համեմատվող համալսարանների ուսումնական ծրագրերի հիմնական մասը, որոնցով իրականացվել է չափորոշիչը, մեծ մասամբ նման է: Այնուամենայնիվ, շատ պետական բուհեր ավելի մեծ ուշադրություն են դարձնում ուսանողների գործնական պարապմունքների ժամերին, ինչպես նաև ուսանողներին տրամադրում են ընտրովի առարկաների ավելի մեծ քանակ, ինչը թույլ է տալիս ուսանողին ինքնուրույն ձևավորել ուսման անհատական ուղղությունը:

Այս փուլում ուսանողների և դասախոսների շարժունության ապահովման առկա մոտեցումները գտնվում են զարգացման փուլում և նախատեսում են ձեռնարկել հետևյալ գործողությունները՝ դրանք պահպանելու և զարգացնելու համար.

2023թ. ամռանը Պերմի պետական բժշկական համալսարանի հետ նախատեսվում է ուսանող-ների շարժունության ծրագիր՝ 3-4 կուրսերի ուսանողների համար պրակտիկա անցկացնելու համար:

Համալսարանը գրանցվել է Erasmus+ համակարգում և նախատեսում է մասնակցել ուսանողների և դասախոսների շարժունության ծրագրերին: Նամակագրություն է իրականացվում The international Federation of Medical Students Associations (IFMSA)-ի հետ՝ գրանցման և ՄԳՀ-ի ուսանողներին բժշկական պրակտիկայի ծրագրերին մասնակցելու հնարավորության նպատակով:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Է.** ՄՈւՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Հիմքեր	<p>ՈԱԶ-02/03 ՄԳՀ-ի հարցաշարեր,</p> <p>ՈԱԶ-01/16 ՄԳՀ-ի բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների մշակման և հաստատման կարգ (մեթոդական ուղեցույց),</p> <p>ՈԱԶ-01/23 ՄԳՀ-ի կրթական գործընթացի արդյունավետության գնահատման, ՄԿԾ-երի մշտադիտարկման ու վերանայման մեխանիզմներ և ընթացակարգ,</p> <p>ՈԱԶ-00/09 ՄԳՀ-ի բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգ,</p> <p>ՈԱԶ-01/19 ՄԳՀ -ի դասախոսների անցկացման կարգ:</p>
--------	--

*Վերլուծել ՄԿԾ-ի մշտադիտարկման, գնահատման և վերանայման մեխանիզմները և դրանց արդյունավետությունը:*

*Նկարագրել վերջին 5 տարիների ընթացքում մասնագիտության կրթական ծրագրի վերանայման շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքները և դրանց հիման վրա իրականացրած բարելավումները:*

ՄԳՀ-ն մշակել է ՄԿԾ-ի և առարկայական ծրագրեր մշակելու կանոնակարգեր, բենչմարքինգի քաղաքականություն: ՄԳՀ-ում իրականացվող հիմնական կրթական ծրագրերը թարմացվել են 2022-2023 ուսումնական տարում: Փոփոխությունները նախապատրաստելիս իրականացվել է բենչմարքինգ, հաշվի են առնվել հավատարմագրման հանձնաժողովների դիտողությունները, շրջանավարտների և գործատուների առաջարկությունները: Այսպիսով, NAAR հավատարմագրման գործակալության մեկնաբանությունների հիման վրա «Բուժական գործ» կրթական ծրագրի ուսումնական պլանում ավելացվել են կամրնտրական առարկաներ, ներդրվել է «Հոգեբանություն և մանկավարժություն» առարկան, որը ձևավորում է ապագա բժշկի մանկավարժական հմտությունները: Շրջանավարտների առաջարկների հիման վրա ավելացվել է հիմնական և կլինիկական առարկաների գործնական պարապմունքների ժամերի քանակը:

ԲՈԻՀ-ը ՄԿԾ-ի հաստատման, մոնիտորինգի և գնահատման գործընթացները փորձում է բարելավել, քանի որ դրանք թույլ են տալիս հետևել աշխատաշուկայի փոփոխություններին և դրանք համապատասխանեցնել հիմնական շահագրգիռ կողմերի ցանկություններին:

Համալսարանի ներքին իրավական ակտերով նախատեսված է կրթական ծրագրի կազմման, հաստատման և իրականացման կարգը, ըստ որի՝ կրթական ծրագրի մշակումից և հաստատումից հետո նախատեսվում է մշտադիտարկում, գնահատում և կրթական ծրագրի կատարելագործում:

2022 թ. ուսանողների և շրջանավարտների հարցումներ են անցկացվել՝ պարզելու կրթական ծրագրերից բավարարվածությունը բարեփոխումներ իրականացնելու համար:

Կազմվել են հաշվետվություններ դասախոսի և դասավանդվող առարկայի հարցումների բավարարվածության վերաբերյալ, փոփոխություններ են կատարվել կրթական ծրագրերում և ուսումնական ծրագրերում:

Այս բոլոր մեխանիզմների աշխատանքի արդյունքները ներկայացվում են ուղղության պատասխանատու պրոռեկտորին, ով անհրաժեշտության դեպքում նախաձեռնում է համապատասխան վերջնական փոփոխություններ: Կրթական ծրագրերը բարելավելու նպատակով իրականացվել են հետևյալ բարեփոխումները.

- պայմանագրերի կնքման միջոցով բուհերի և աշխատաշուկայի միջև համագործակցության ամրապնդում և ակտիվացում,
- բենչմարքինգի արդյունքում նոր առարկաների ներդրում,
- ուսանողակենտրոն սկզբունքի ապահովում:

Օտարերկրյա ուսանողների համար «Անգլերեն» միջանկյալ լեզվով «Բուժական գործ» ՄԿԾ-ը ՄԳՀ-ում գործում է 4 տարի, սակայն արդեն թարմացվել է 3 անգամ՝ հաշվի առնելով

հավատարմագրող ընկերությունների, ներքին և արտաքին շահագրգիռ կողմերի մեկնաբանությունները: Շարունակական հարցումները և արտաքին ատուդիոները հնարավորություն են տալիս բացահայտել ծրագրի թերությունները և արագ վերացնել դրանք՝ հաշվի առնելով իրավասությունների վրա հիմնված մոտեցումը, որը կենտրոնացած է գործնական գիտելիքների ձեռքբերման վրա: «Բուժական գործ» ՄԿԾ-ի վերջին տարբերակում շատ հիմնական առարկաների ուսումնական ծրագրում ավելացել է գործնական պարապմունքների թիվը, զգալիորեն ընդլայնվել է փոփոխական մասը, վերանայվել են առարկաների աշխատանքային ծրագրերը, ներառում են հետազոտական բաղադրիչ, իսկ աշխատանքային ծրագրերի գրականությունը թարմացվել է:

«Ստոմատոլոգիա» ՄԿԾ-ն թարմացվել է 2023 թվականին՝ հիմնականում կենտրոնանալով այն փոփոխությունների վրա, որոնք նախկինում ներդրվել են «Բուժական գործ» ՄԿԾ-ում: Մասնավորապես՝ ավելացել է հիմնական առարկաների պրակտիկ պարապմունքների ժամերի քանակը, ավելացել է փոփոխական մասի ծավալը՝ համեմատական արդյունքների հիման վրա ներդրվել են նոր առարկաներ՝ իմպլանտոլոգիա և պրոթեզավորում, էնդոդոնթիա, կլինիկական ստոմատոլոգիա և այլն:

«Իրավագիտություն» կրթական ծրագիրը վերանայվել է, այժմ կազմվում են նոր առարկայական ծրագրեր, կամընտրական առարկաների ավելացմամբ, ինչպես նաև ապահովվում է դրանց համապատասխանությունը ՄԿԾ-ի վերջնարդյունքներին:

*Վերլուծել Չափանիշ 3-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները: Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:*

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>1. Բոլոր մշակված ՄԿԾ-ները հիմնված են ուսումնառության վերջնարդյունքների և շրջանավարտների կողմից ձեռք բերված կարողությունների վրա՝ շեշտը դնելով գործնական բաղադրիչի վրա:</p> <p>2. ՄԿԾ-ը մշակելիս հաշվի են առնվել բոլոր շահագրգիռ կողմերի կարծիքները:</p> <p>3. Ներդրվել են ուսուցման մի շարք մեթոդներ, ինչպես նաև դասախոսներին գնահատելու ռեյտինգային գնահատման չափանիշներ:</p> <p>4. Կրթական ծրագրերի մի մասը վերանայվել է՝ ուսումնական պլանների, առարկաների աշխատանքային ծրագրերի թարմացմամբ՝ հավատարմագրման հանձնաժողովների դիտողություններին և առաջարկություններին:</p>	<p>1. Որոշ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչի բացակայություն:</p> <p>2. Ուսանողների փոքր թվաքանակ կրթական գործունեության որոշակի ոլորտներում:</p> <p>3. Վերապատրաստման որոշ ոլորտներում պրակտիկայի բազաների փոքր թիվ:</p> <p>4. Պրոֆեսորադասախոսական կազմի ցածր մոտիվացիան կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված մեթոդական աշխատանք իրականացնելու համար, որն ավելի հաճախ նկատվում է</p>

<p>համապատասխան: 5. Ինտերակտիվ ուսուցման մեթոդների կիրառում:</p>	<p>համատեղությամբ աշխատողների շրջանում:</p>
<p>Զարգացման ոլորտներ</p>	<p>Վտանգներ</p>
<p>1.Անհրաժեշտ է ակտիվացնել դասախոսների և ուսանողների շարժունությունը: 2. Նոր շահագրգիռ կողմերի ավելի հաճախակի ներգրավում որոշ կրթական ծրագրերի արդյունավետությունը բարձրացնելու համար: 3. Իրականացնել բնակչության իրավական և բժշկական գրագիտության բարձրացմանն ուղղված սոցիալական ծրագրեր: 4. Մշակել սոցիալական գործունեության ծրագրեր, մասնավորապես, մեկնարկում է նախագիծ բժշկական ուսանողների համար՝ կամավոր այցելություններ ծերանոցներ, մի շարք բուժհաստատություններ բժշկական և հոգեբանական անհրաժեշտ բուժօգնության տրամադրման նպատակով: 5. Բոլոր ուսումնական ծրագրերի համար գործնական հմտությունների ձեռքբերման նոր ձևերի և մոդուլների մշակում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության առաջարկություններին համապատասխան՝ պետական ավարտական քննությունների անցկացման վերաբերյալ: 6. Օտարերկրյա բուհերի հետ համատեղ կրթական ծրագրերի մշակում և իրականացում (այդ թվում՝ երկակի): 7. Դասախոսների և ուսանողների համար անհրաժեշտ է ստեղծել ՏՏ ենթակառուցվածք, որը ներառում է ուսուցման համար անհրաժեշտ ողջ տեղեկատվության տեղադրումը դասախոսների և ուսանողների անձնական էլեկտրոնային կաբինետներում:</p>	<p>1.Տեխնիկական առաջընթացով և բժշկության մեջ օգտագործվող տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ պայմանավորված որոշակի կոմպետենցիաների որոշակի փոփոխություններ: 2. ՀՀ-ու դիմորդների թվի կրճատում՝ կապված ժողովրդագրական իրավիճակի հետ: 3. Արտաքին շահակիցների ոչ բավարար շահագրգռվածությունը կրթական ծրագրերի կատարելագործման հարցում:</p>

*Թույլ կողմերը և վտանգները վերացնելու միջոցառումներ.*

1. Միջոցներ ձեռնարկել ուսանողների թվի ավելացման համար. ակտիվացնել աշխատանքը

միջնորդական գործակալությունների հետ, ավելացնել դպրոցականների և քոլեջի ուսանողների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումների քանակը:

2. Պարբերաբար ՊԴ կազմի համար անցկացնել դասախոսների վերապատրաստումներ ՄԿԾ-երի և դաընթացների ծրագրերի մշակման և ներդրման, նոր ուսումնական ծրագրերի վերապատրաստման վերաբերյալ:
3. Մասնակցել դրամաշնորհային ծրագրերին՝ ֆինանսական միջոցներ ներգրավելու նպատակով:
4. Հետազոտական գործունեությունն ակտիվացնելու համար ներգրավել լավագույն ուսանողներին: ՄԳՀ-ի վերջերս ստեղծված գիտահետազոտական կենտրոնի համար ձևավորվել է աշխատանքային պլան, որում նախատեսվում է անցկացնել ՄԳՀ-ի պարտադիր ուսանողական կոնֆերանսներ և հաստատել ՈԻԳԸ աշխատանքի թեմաներ:
5. Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ ակտիվացնելու բուհի ուսանողների և դասախոսների միջազգային շարժունությունը: Օրինակ՝ 2023 թվականի ամռանը Պերմի պետական՝ բժշկական համալսարանի հետ նախատեսվում է ուսանողների շարժունության ծրագիր՝ 3-4-րդ կուրսերի ուսանողների համար արտադրական պրակտիկա անցնելու նպատակով:
6. Շարունակել կատարելագործել ուսանողների գնահատման համակարգը, գնահատման չափանիշները դարձնել ներգրավել ավելի պարզ և հասկանալի:



#### IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

*Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:*

Համալսարանը կարևորում է ուսանողների ձեռքբերումները կրթության և գիտահետազոտական ոլորտում, նրանց բավարարվածությունը մատուցվող կրթական ծառայությունների որակից, նպաստում է նրանց ինքնուրույն մտածողության, հետազոտական և ստեղծագործական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը՝ հոգալով սովորողների արդյունավետ սոցիալական աջակցության և ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման մասին: Ռազմավարական ծրագրում արտացոլված համալսարանի նպատակներից է մարդասիրական, սոցիալական, գիտական և հատուկ գիտելիքներով, հմտություններով և կարողություններով օժտված բարձրակարգ մասնագետների պատրաստումը, որոնք շրջանավարտին թույլ կտան հաջողությամբ աշխատել ընտրած մասնագիտական ոլորտում, աշխատաշուկայում լինել մրցունակ, կարողանալ մշտապես կատարելագործել իրենց գիտելիքներն ու կարողությունները, զբաղվելու գիտամանկավարժական գործունեությամբ :

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.** ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

<p>Հիմքեր</p>	<p><u>ՈԱԶ-00/05 «Մխիթար Գոշ» համալսարանի օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում աշխատող դիվանագետների ընտանիքների անդամների ընդունելության կարգ.</u></p> <p><u>ՈԱԶ-00/19 «Մխիթար Գոշ» համալսարանի ընդունելության կարգ քստ բակալավրի և անընդհատ- ինտեգրացված կրթական ծրագրերի.</u></p> <p><u>ՈԱԶ-00/24 «Մխիթար Գոշ» համալսարանի ուսանողներին նյութական օգնության տրամադրման կարգ.</u></p> <p><u>ՈԱԶ-01/21 «Մխիթար Գոշ» համալսարանի սովորողների ակադեմիական</u></p>
---------------	---

		<u>շարժունության կարգ:</u>				
Ուսումնական հաստատությունում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:						
Ուսանողների թիվը		2019	2020	2021	2022	2023
Անընդատ-ինտեգրացված ծրագիր Բակալավրիատ	Առկա	105	100	587	640	593
	Հեռակա	268	248	270	279	274
Մագիստրատուրա Ուսանողների թիվը	Հեռակա	4	7	5	7	4
Ուսումնառողների շարժունությունը						
Ուսումնառողների շարժը վերջին 5 տարվա կտրվածքով						
Ուսանողների ներհոսք						
	Երկիր	2019	2020	2021 <sup>n</sup>	2022	2023
1	Ռուսաստանի Դաշնություն	1	85	28	6	2
2	Բարբադոս	-	-	-	-	16
3	Իրան	-	3	3	-	-
4	Չինաստան	-	19	-	-	-
5	Հայաստան (ներքին փոխանցումներ)	6	10	8	132	60
Հեռացումներ և վերականգնումներ						
	Ուսանողների թիվ	2019	2020	2021	2022	2023
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	33	17	74	181	80
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/թիվը	14	11	18	42	41
<p><i>Վերլուծել հաստատությունում գործող ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p><i>Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները և տրամադրել տվյալ խնդիրների լուծման տարբերակները / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>ՄԳՀ-ի ղեկավարությունը վերլուծում է ուսանողների տարեկան հավաքագրման մեխանիզմներն ու գործընթացները և կարծում է, որ այս գնահատման այս փուլում առկա գործընթացները համեմատաբար արդյունավետ են, քանի որ ՄԳՀ-ի ուսանողների թիվը վերջին երեք տարիների ընթացքում եղել է կայուն և կազմում է մոտ 900 մարդ: Սակայն այս թվի կեսից ավելին բժշկական ֆակուլտետի արտասահմանցի ուսանողներ են, իսկ ուսուցման որոշ</p>						

ուղորդվում ուսանողների թիվը մնում է փոքր: Առաջնորդվելով սրանով՝ ՄԳՀ-ի վարչակազմը որոշեց ակտիվացնել աշխատանքը հավաքագրող գործակալությունների հետ, ավելացնել դպրոցականների և քոլեջի ուսանողների մասնագիտական ուղորդմանն ուղղված միջոցառումների քանակը:

Այս պահին համալսարանում գործում է միջնակարգ կրթության հիմքով քոլեջ: Համալսարանի քաղաքականությունը նպատակաուղղված է ապահովելու, որ քոլեջի ուսանողները շարունակեն սովորել Համալսարանում ԲՈՒՀ-ական ծրագրերով:

Օտարերկրյա դիմորդների հավաքագրման ժամանակ համալսարանը դիմում է միջնորդ հավաքագրողների օգնությանը, Համալսարանը գովազդվում է սցիալական ցանցերի միջոցով: Մեծ նշանակություն ունեն շրջանավարտների առաջարկությունները, ինչպես նաև մասնակցությունը միջազգային կրթական տոնավաճառներին (2022թ. մայիսին համալսարանի ռեկտորի պաշտոնակատար դոկտոր Աշոկ Պատելը մասնակցել է MBBS ընդունելության ցուցահանդեսին Հնդկաստան, Կոտա Ռաջաստան):

Երևանում և Վանաձորում ավագ դպրոցների աշակերտների հետ իրականացվում է կարիերայի ուղորդում, անցկացվում է բաց դռների օր, անցկացվում են առաջին բուժօգնության դասեր: Երկու տարի անընդմեջ Համալսարանի ներկայացուցիչները մասնակցում են Երևանում անցկացվող «Կրթություն և կարիերա» EXPO-ին: Համալսարանի 1-ին կուրս ընդունվելու համար փաստաթղթերը հնարավոր է ներկայացնել առցանց՝ բուհի պաշտոնական էլ. փոստին: Նամակն ուղարկվում է ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին: Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը ստուգում է դիմորդի փաստաթղթերի փաթեթը, պահանջում բացակայող փաստաթղթերը (անհրաժեշտության դեպքում): Շուրջօրյա գործում է նաև Համալսարանի աջակցության թեժ գիծը, որին դիմորդները կարող են դիմել նաև փաստաթղթերի ներկայացման հետ կապված հարցերով:

Օտարերկրյա դիմորդների հետ շփումն իրականացվում է ուղղակիորեն էլեկտրոնային փոստի միջոցով հաղորդակցվելու, ակնթարթային մեսենջերներում, ինչպես նաև հավաքագրողների միջոցով:

Ընդունելության քննություններն անցկացվում են Համալսարանի ներքին կանոնակարգերին համապատասխան՝ ՈԱԶ-00/19 «Մխիթար Գոշ» համալսարանի ընդունելության կարգ ըստ բակալավրի և անընդհատ-ինտեգրացված կրթական ծրագրերի, ինչպես նաև օտարերկրյա դիմորդների ընդունելության կանոնակարգի (ՈԱԶ-00/05): Բժշկական ֆակուլտետի ուսանողները ներքին թեստեր են հանձնում երկու առարկայից: Այնուամենայնիվ, Հնդկաստանից բոլոր օտարերկրյա դիմորդները պետք է անցնեն NEET քննությունը (national eligibility cum entrance test): Միայն դա է ուսանողին իրավունք տալիս սովորել բժշկական ֆակուլտետում: ՄԳՀ-ն մշակել է այլ համալսարաններից ուսանողների տեղափոխման քաղաքականություն (ՈԱԶ-01/21 «Մխիթար Գոշ» համալսարանի սովորողների ակադեմիական շարժունության կարգ): ՄԳՀ-ի ուսանողները բավականին մեծ թվով տրանսֆերային ուսանողներ են: Ուսանողների մեծ մասը նախկինում սովորել է Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի բուհերում, սակայն աշխարհաքաղաքական իրավիճակից ելնելով և այլ պատճառներով, որոշել է ուսումը շարունակել ՄԳՀ-ում: «Մխիթար Գոշ» համալսարան

տեղափոխվելու համար ուսանողը պետք է ներկայացնի այլ ուսումնական հաստատության ակադեմիական տեղեկանք, առարկաները և կրեդիտների քանակը, ինչպես նաև միջնակարգ կրթության դիպլոմի պատճեն: Ընդունող հանձնաժողովը ուսումնասիրում է փաստաթղթերը և որոշում կայացնում տեղափոխության հնարավորության մասին:

Ուսանողները ՄԳՀ-ից հեռացվում են մի շարք պատճառներով՝ ուսանողի կողմից պայմանագրային պարտավորությունները (առավել հաճախ՝ ֆինանսական) չկատարելու կամ ակադեմիական ձախողման պատճառով: Ուսումնական մասի, դեկանատի և անձնակազմի աշխատանքն ուղղված է ուսանողների դասերին հաճախելու մոտիվացիայի բարձրացմանը, ուսանողների հիմնական գիտելիքների նկատմամբ վերահսկողության ապահովմանը, ուսանողների ծնողների հետ կապ հաստատելուն՝ մի շարք խնդիրների, այդ թվում՝ ուսման վարձերի պարտքերի լուծման համար: Ամեն ամիս դեկանատները տեղեկություններ են հավաքում ուսանողների ակադեմիական պարտքի մասին, անհաջող ուսանողներին հրավիրում են անհատական գրույցի և բացատրական աշխատանքներ են կատարվում արդյունքների վերաբերյալ, կիսամյակի վերջում նման հանդիպումների արդյունքներով ուսանողները կարող են հրավիրվել կարգապահական հանձնաժողովի՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով պրոռեկտորի գլխավորությամբ: Վերջին երեք տարիների ընթացքում ուսանողներից դուրս մնացածների թվի աճը կարող է վերագրվել նաև վերջին 3 տարիների ընթացքում ուսանողների թվի ընդհանուր աճին:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Բ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:**

Հիմքեր	ՈԱԶ-00/08 ՄԳՀ-ի որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, ՈԱԶ-02/02 ՄԳՀ-ի որակի ապահովման կենտրոնի կանոնակարգ, ՈԱԶ-02/05 ՄԳՀ-ի հարցումների անցկացման կարգ, ՈԱԶ-02/03 ՄԳՀ-ի հարցաշարեր:
--------	---

*Վերլուծել ուսանողների կարիքների վերհանման ՄՈՒՀ-ի քաղաքականության և ընթացակարգերի իրականացման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Ուսանողներին ուղղված միջավայրի ստեղծումը Համալսարանի առաջնահերթություններից է: ՄԳՀ-ի ուսանողների ներկայացուցիչները մշտապես ընդգրկված են ՄԳՀ-ի ռեկտորատում և գիտական խորհրդում: Այսպիսով, ուսումնական գործընթացի հետ կապված բոլոր փոփոխությունների քննարկման գործընթացում ընդգրկված են ուսանողների ներկայացուցիչները: Ուսանողների հետ հետադարձ կապի լավագույն միջոցներից են շահագրգիռ կողմերի հարցումները: Համալսարանը հարցում է անցկացնում լայն շրջանակում: Այն ներառում է ՄԳՀ-ի ուսանողներին, նրա շրջանավարտներին, դասախոսներին և գործատուներին:


Այսպես, ՄԳՀ-ի բժշկական ֆակուլտետի շրջանավարտների հարցման ժամանակ 2022 թվականին առաջարկներ են ստացվել հիմնական և կլինիկական առարկաների գործնական պարապմունքների ժամերի քանակի ավելացման վերաբերյալ: Այս առաջարկությունները հաշվի

են առնվել 2022-2023 թվականների նոր ուսումնական պլան կազմելիս:

Ուսանողների կարծիքը կրթական գործընթացի վրա նրանց ազդեցության աստիճանի մասին բացահայտվում է ուսանողական հարցումներով: Այսպես, օրինակ, բժշկական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողներին տրված հարցին՝ «Դուք հնարավորություն ունեցե՞լ եք ազդելու կրթական ծրագրի բովանդակության վրա, ինքնուրույն ընտրել որևէ առարկա», ստացվել են հետևյալ պատասխանները.

- Ունեցել եմ հնարավորություն ազդելու կրթական ծրագրի բովանդակության վրա -51,78%
- Ուսումնական ծրագրի բովանդակության վրա ազդելու հնարավորություն չեմ ունեցել-19,64%
- դժվարանում եմ պատասխանել-28,58%

Question 2 Do you have the opportunity to make influence of the content of the educational program, to choose the discipline what you want, to give the topic to the lecturer to discuss?



ՄԳՀ-ի ղեկավարությունը արդյունավետ է համարում ուսանողների կրթական կարիքների բացահայտման գործող մեխանիզմները, քանի որ Համալսարանի որակի ապահովման կենտրոնը պարբերաբար անցկացնում է տարբեր հարցումներ, որոնց արդյունքում կազմվում է վերլուծական հաշվետվություն մի շարք առաջարկներով: Վերջին մեկ տարվա ընթացքում ուսանողների կողմից ղեկավարությանը ուղղված դիմումների ու բողոքների թիվը զգալիորեն նվազել է:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ գ.** ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Հիմքեր	<p><u>ՈԱԶ-00/22 «Մխիթար Գոշ» համալսարանի ֆակուլտետի օրինակելի կանոնադրություն,</u></p> <p><u>ՈԱԶ-01/07 «Մխիթար Գոշ» համալսարանի ամբիոնի կանոնադրություն,</u></p> <p><u>ՈԱԶ-01/17 «Մխիթար Գոշ» համալսարանի ակադեմիական պարտքերի լրացման</u></p>
--------	--

	<p><u>կարգ.</u>  <u>ՈԱԶ-01/18 «Միխթար Գոշ» համալսարանում սովորողների մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձման ընթացակարգ,</u>  <u>ՈԱԶ-01/20 ՄԳՀ-ի ուսանողի ուղեցույց:</u></p>	
<i>Պատասխանել հետևյալ հարցին:</i>	%	
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված խորհրդատվական ծառայությունների մասին:	100 (սոցիալական ցանցեր)	
Ուսանողների ո՞ր տոկոսն է ընդգրկված լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում:	40	
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված խորհրդատվական ծառայություններից:	75	
Հետևյալ հարցերին պատասխանել այո կամ ոչ:	ԱՅՈ      ՈՉ	
Արդյոք ուսումնառողներին հատկացվո՞ւմ են խորհրդատուներ:	այո	
Եթե ոչ, արդյոք դա նախատեսվո՞ւմ է:		
<p><i>Վերլուծել լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների և ակադեմիական օժանդակություն ու ուղղորդում տրամադրելու համար գործընթացի կազմակերպման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>Համալսարանը ստեղծել և ամրագրել է դասախոսների համար ակադեմիական խորհրդատվությունների ժամանակացույց (առցանց և օֆլայն), ինչը հատկապես պահանջված է հեռակա բաժնի ուսանողների կողմից՝ կապված հեռակա բաժնի ուսանողների ինքնուրույն աշխատանքի մեծ թվով ժամերի հետ:</p> <p>Համալսարանի կրթական ծրագրերն ուղղված են անհատական հատկանիշների համակողմանի զարգացմանը՝ հաշվի առնելով ուսանողների կարիքները ընդհանուր մշակութային և մասնագիտական կարողությունների ձևավորման գործում: Մակայն, բացի սրանից, Համալսարանում սովորելը մարդու սոցիալականացման և նրա մեջ ընդհանուր մշակութային կարողությունների ձևավորման կարևորագույն փուլն է:</p> <p>Համալսարանը կազմակերպում է ուսանողների արտաուսումնական աշխատանք հետևյալ հիմնական ուղղություններով.</p> <ul style="list-style-type: none"> <li>• հետազոտական աշխատանք,</li> </ul>		

- մասնակցություն զանգվածային սպորտային միջոցառումներին,
- ուսանողական նախաձեռնություններ,
- մշակութային հարմարավորականության միջոցառումներ (ուղևորություններ, էքսկուրսիաներ, թանգարանային այցելություններ),
- այլ ժամանցային գործունեություն ուսանողական ինքնակառավարման մարմիններին (ուսանողական խորհուրդ և ուսանողական գիտական ընկերություն, խմբի և կուրսի ղեկավարի գործառույթներ կատարելը) մասնակցելը ենթադրում է ամուր քաղաքացիական դիրքի ձևավորում, անձի սոցիալական և բարոյական բարձր կայունություն, նվիրվածություն և պատասխանատվություն: Ուսանողները ձեռք են բերում գործնական փորձ առաջնորդության, աշխատանքի պլանավորման, նախագծի սկզբունքով աշխատանքը կառուցելու և մարդկանց հետ աշխատելու կարողություն:

Ուսանողների՝ ստեղծագործական խմբերին մասնակցելը զարգացնում է հռետորական հմտությունները և ունկնդիրների մեծ լսարանի հետ աշխատելու փորձը, զարգացնում է ինքնաներկայացման կարողությունը:

Տարբեր միջոցառումների և կոնֆերանսների նախապատրաստման ընթացքում ուսանողների մոտ ձևավորվում է սթրեսի և ժամանակի ճնշման տակ աշխատելու կարողություն:

Տարբեր մարզաձևերում ուսանողական հավաքականները ձևավորում են լավագույն արդյունքի հասնելու ցանկություն, առկա ռեսուրսների առավելագույն օգտագործում առաջադրանքը կատարելու համար: Խրախուսվում է առողջ ապրելակերպը: Այսպիսով, Համալսարանում միայն 2021/2022 ուսումնական տարում ուսանողները մասնակցել և մրցանակներ են շահել բուհի և քաղաքային մակարդակներում կրիկետի, շախմատի, վոլեյբոլի, բադմինտոնի մրցումներում: 2022 թվականին Համալսարանի ուսանողներն առաջին անգամ մասնակցեցին Երևանում անցկացվող միջբուհական սպորտային մրցույթին:

Ամեն տարի փետրվարին Համալսարանն անցկացնում է մարզական ներքին օլիմպիադա: 2022 թվականի մայիսին ուսանողները մասնակցեցին քաղաքային կրիկետի մրցաշարին: Համալսարանական մարզահամալիրում ուսանողների համար կազմակերպվում են սպորտային-ժամանցային միջոցառումներ: Համալիրը ներառում է վոլեյբոլի խաղահրապարակ, մարզասրահ՝ տեխնիկայով (Երևան): Մարզասրահ և լողավազան (Վանաձոր): Գործում են հաստատված գրաֆիկով սպորտային բաժիններ (վոլեյբոլ, բադմինտոն, կրիկետ, շախմատ):

Արտասուսումնական գործունեության վերը նշված բոլոր տեսակներին մասնակցելը նպաստում է առողջ մրցակցության, գործնական հմտությունների ձևավորմանը և բարդ իրավիճակները արժանապատվորեն հաղթահարելու և կարևոր որոշումներ կայացնելու ունակությանը: Համալսարանն ունի պարի և վոկալ ստուդիաներ: Ուսանողական գիտական ընկերության շրջանակներում ուսանողները ամբիոնների դասախոսների հետ զբաղվում են հետազոտական աշխատանքով:

Առաջին կուրսի ուսանողների համար ամեն տարի անցկացվում է «Կողմնորոշման օր», որի ժամանակ ուսանողական խորհրդի անդամները, ինչպես նաև Համալսարանի աշխատակիցները առաջին կուրսի ուսանողներին ծանոթացնում են բուհի հիմնական կանոններին: Կազմակերպվում են էքսկուրսիաներ քաղաքում և մարզում: Նշվում են ազգային տոները: 1-ին կուրսի յուրաքանչյուր խմբի համար նշանակվում է ավագ ուսանող-համադրող:

ՄԳՀ-ի ղեկավարությունը արդյունավետ է համարում արտաուսումնական միջոցառումների կազմակերպման և ակադեմիական աջակցության առկա գործընթացները, քանի որ ուսանողները գնալով ավելի քիչ են դիմում այս ոլորտի խնդիրներով ՄԳՀ-ի ղեկավարությանը և ղեկաններին:

**ԶՍՓՈՐՈՇԻՉ Պ.** ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

Հիմքեր	<p><u>ՈԱԶ-00/22 «Մխիթար Գոշ» համալսարանի ֆակուլտետի օրինակելի կանոնադրություն,</u>  <u>ՈԱԶ-01/07 «Մխիթար Գոշ» համալսարանի ամբիոնի կանոնակարգ,</u>  <u>ՈԱԶ-01/17 «Մխիթար Գոշ» համալսարանի ակադեմիական պարտքերի լրացման կարգ,</u>  <u>ՈԱԶ-01/18 «Մխիթար Գոշ» համալսարանում սովորողների մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձման ընթացակարգ,</u>  <u>ՈԱԶ-01/20 ՄԳՀ-ի ուսանողի ուղեցույց:</u></p>
--------	---

<i>Պատասխանել հետևյալ հարցին:</i>	%
Ուսանողների <sup>օ</sup> ր տոկոսն է տեղեկացված իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին:	100
Ուսանողների <sup>օ</sup> ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	50
Ուսանողների <sup>օ</sup> ր տոկոսն է բավարարված այդ ծառայություններից:	80

*Վերլուծել լրացուցիչ վարչական օժանդակություն ու ուղղորդում տրամադրելու համար գործընթացի կազմակերպման արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*


Ամեն տարի ուսանողների համար կազմակերպվում և անցկացվում են բաց հանդիպումներ բուհի ռեկտորի և պրոռեկտորների հետ: Աշխատասենյակների դռների վրա նշված են բուհի ռեկտորի, պրոռեկտորների ընդունելության ժամերը: Դեկանատն ընթացիկ ռեժիմով իրականացնում է ամենօրյա խորհրդատվություն ուսանողների համար: Համալսարանի աջակցության թեժ գիծը բաց է 24 ժամ, և ուսանողները կարող են կապ հաստատել նաև իրենց հարցերով և մտահոգություններով: Համարը նշված է Համալսարանի կայքում և հասանելի է բոլոր շահագրգիռ կողմերին:

Ստեղծվել է նաև ուսանողների հոգեբանական և սոցիալական աջակցության կենտրոն, որտեղ ցանկացած ուսանող կարող է անվճար խորհրդատվություն ստանալ:



ՈԱԿ-ի կողմից անցկացված ուսանողների հարցումները ցույց են տալիս, որ ուսանողների մեծ մասը գոհ է դեկանատի և ռեկտորատի աշխատանքից: Օրինակ՝ ստորև ներկայացնում ենք բժշկական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողների հարցման արդյունքները.

Question 5 Cheking the student's satisfaction of administration work We ask you to rate the level of your satisfaction of following members of admini...-5 -- Fully satisfied How much are you satisfied?



ՄԳՀ-ի ղեկավարությունը արդյունավետ է համարում վարչակառավարչական անձնակազմի կողմից լրացուցիչ աջակցության առկա միջոցառումներն ու գործընթացները, քանի որ, ըստ հարցումների արդյունքների, ուսանողները ընդհանուր առմամբ դրական են գնահատել վարչակառավարչական անձնակազմի գործունեությունը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:**

Հիմքեր	ՈԱԶ -00/01 «Մխիթար Գոշ» համալսարանի կանոնադրություն, ՈԱԶ- 03/06 ՄԳՀ-ի շրջանավարտների կարիերայի և աշխատանքի տեղավորման կենտրոնի կանոնակարգ, ՈԱԶ-00/26 «Մխիթար Գոշ» համալսարանի երիտասարդ առաջնորդների պատրաստման քաղաքականություն, Շրջանավարտների գրանցամատյան:
Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված կարիերային նպաստող ծառայությունների մասին:	100
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	45
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ ծառայություններից:	85

*Վերլուծել ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Համալսարանն ունի կարիերայի և զբաղվածության կենտրոն և շրջանավարտների ասոցիացիա, որի համար հատուկ WhatsApp խումբ է կազմակերպվել: Պոտենցիալ գործատուներին գործընկերության մեջ ներգրավելու աշխատանքներն իրականացվում են ՄԳՀ-ի ռեկտորի հսկողության ներքո: Գործում է գործատուների ռեզիստր: Անցկացվում է աշխատանքի ամենամյա տոնավաճառ, որին հրավիրվում են շահագրգիռ անձինք:

Ինչ վերաբերում է օտարերկրյա ուսանողներին, ապա նրանք իրենց հիմնական մասնագիտությամբ աշխատանքի իրավունք ունեն միայն իրենց երկրի տարածքում հավատարմագրման քննությունը հանձնելուց հետո: Համալսարանը մինչ այս պահը իրականացնում է կարիերայի ուղղորդման աշխատանքներ՝ ներառյալ պրակտիկայի հնարավորություն այդ երկրներում գործող կազմակերպություններում: Կատարվում է շրջանավարտների հարցում՝ ներառյալ հավատարմագրման քննությունը հանձնելու և հետագա աշխատանքի անցնելու արդյունքները:

Այս ուսումնական տարում շրջանավարտների աշխատանքային խորհրդակցությունները նախատեսված են 2023 թվականի մայիսին, ինչը թույլ կտա բարձր կուրսերի ուսանողներին ժամանակին ռեզյումե պատրաստելու հմտություններ ձեռք բերել, ինչպես նաև ստանալ պոտենցիալ գործատուների մասին արդիական տեղեկատվություն: Ռեզյումե կազմելու հիմնական կանոնները ներկայացված են ՄԳՀ-ի կայքում՝ շրջանավարտների բաժնում:

ՄԳՀ-ի ղեկավարությունը գործող կարիերայի կենտրոնի ծառայություններն արդյունավետ է համարում, քանի որ միավորված ֆակուլտետի գրեթե բոլոր շրջանավարտներն աշխատում են և ունեն մշտական աշխատանք: Սակայն կարիերայի կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքներին անհրաժեշտ է բժշկական ֆակուլտետի արտասահմանցի ուսանողների ավելի ակտիվ ներգրավվածություն:

**ՉՍՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:**

Հիմքեր	ՈԱԶ -03/04 ՄԳՀ-ի գիտահետազոտական կենտրոնի կանոնակարգ, ՈԱԶ- 03/05 ՄԳՀ -ի ուսանողական գիտական ընկերության կանոնադրություն:
--------	---

ՄՈՒՀ-ի համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի

	Ուսումնառողներ	2019	2020	2021	2022	2023
Դիպլոմավորված մասնագետ		5	5	10	10	15
Բակալավր		-	-	-	5	5

Մագիստրոս	4	2	5	6	4	
Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվն ըստ տարիների						
	Գիտահետազոտական ծրագիր	2019	2020	2021	2022	2023
1	ՄԳՀ-ի ամենամյա ուսանողական գիտաժողով, նվիրված հազվագյուտ հիվանդությունների օրվան				22	15
2	Օտարերկրյա ուսանողների ադապտացում ՀՀ-ում				2	
3	Գիտաժողով Արտակարգ իրավիճակների ակադեմիայում՝ Քաղաքացիական պաշտպանության միջազգային օր:				4	3
4	Հայաստանի երիտասարդ գիտնականների 8-րդ ազգային գիտաժողով					1
5	Արյունաբանական կենտրոնի աշխատակիցների կողմից իրականացվող նախագծեր՝ Թունավոր կոագուլոպաթիա					3
6	Արյունաբանական կենտրոնի անձնակազմի կողմից իրականացվող նախագծեր. Հեմոֆիլիայի վիճակագրություն					1
7	ՄԳՀ ՈւԳԸ-ի վրա հիմնված նախագիծ. «Comparative study of patients with Covid-19 and Covid-19 patients with history of Tuberculosis in India».					5
8	ՄԳՀ ՈւԳԸ-ի վրա հիմնված նախագիծ. «BMI-ի կախվածությունը անպտղությամբ կանանց օրգանիզմի հորմոնալ կարգավիճակից. արյան չափված պարամետրերի հարաբերական վերլուծություն					3
Ուսումնառողների հեղինակությանը և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը						
	Տպագրված աշխատանք	2019	2020	2021	2022	2023
1	"PSYCHOLOGICAL AND SOCIOCULTURAL ADAPTATION OF MEDICAL UNIVERSITY INTERNATIONAL STUDENTS IN ARMENIA" Volume 13 - Issue 2 (November 2022) of GSC Advanced Research and Reviews (GSCARR)					2
2	Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի օտարերկրյա տրանսֆերային ուսանողների ադապտացիայի ուսումնասիրություն Ֆ.Ի. Բալավալա, Յա.Ն. Տրոինիչ, Տ.Ի. Կոզլովա, Դ.Յա. Չաուդհարի (ներկայացված է տպագրության)					1

	Օրենքուրգ - ORGMU-ի հավաքածու					
3	Civil defence organizational issues of the population in emergency situations Վաղմարե Շարուն Պրակաշ/, Մոհամմադ Շահնավազ, Արանհա Գլադլինե Ժասմին				3	

*Վերլուծել հաստատության գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

2022 թվականին ՄԳՀ-ի կազմում ընդգրկվել է գիտահետազոտական կենտրոն, որի հիմնական գործառույթներն են Համալսարանի և՛ աշխատակիցների, և՛ ուսանողների գիտական գործունեության կազմակերպումն ու համակարգումը: ՄԳՀ-ի կառուցվածքի վերանայումը և հետազոտական կենտրոնի կազմակերպումը նպաստեցին ՄԳՀ-ի ուսանողների ներգրավմամբ հետազոտական նախագծերի ակտիվացմանը:

Բացի այդ, իրավագիտության և ընդհանուր բժշկության ծրագրերի նորացված ուսումնական պլանները պարունակում են առարկաներ, որոնք ուղղված են ուսանողների հետազոտական կարողությունների զարգացմանը (օրինակ՝ հետազոտության մեթոդաբանություն, բժշկագիտության արդի խնդիրներ):

**ԶՍՓՈՐՈՇԻՉ Է.** ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Հիմքեր	<p><u>ՈԱԶ -00/01 «Մխիթար Գոշ» համալսարանի կանոնադրություն,</u></p> <p><u>ՈԱԶ -00/10 «Մխիթար Գոշ» համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգ.</u></p> <p><u>ՈԱԶ - 00/12 «Մխիթար Գոշ» համալսարանի էթիկայի և բժշկական դեոնոլոգիայի կանոններ,</u></p> <p><u>ՈԱԶ-01/11 «Մխիթար Գոշ» համալսարանի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և դրանց արդյունքների բողոքարկման կարգ,</u></p> <p><u>ՈԱԶ-01/21 «Մխիթար Գոշ» համալսարանի սովորողների ակադեմիական շարժունության կարգ,</u></p> <p><u>ՈԱԶ- 03/05 ՄԳՀ-ի ուսանողական գիտական ընկերության կանոնադրություն,</u></p> <p><u>ՈԱԶ-01/09 «Մխիթար Գոշ» համալսարանի ուսանողական խորհրդի կանոնադրություն,</u></p> <p><u>ՈԱԶ-01/16 ՄԳՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների մշակման և հաստատման կարգ (Մեթոդական ուղեցույց).</u></p> <p><u>ՈԱԶ-01/20 ՄԳՀ-ի ուսանողի ուղեցույց:</u></p>
--------	---

Պատասխանել հետևյալ հարցերին:

%

Ուսանողների որ տոկոսն է տեղեկացված համապատասխան ծառայությունների վերաբերյալ:	100
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում համապատասխան ծառայությունից:	30
Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացից:	70

*Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող ուսումնառողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմնի աշխատանքների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Ուսանողները ազդում են Համալսարանի կրթական գործընթացի և ՄԳՀ-ի այլ գործունեության վրա՝ մասնակցելով Համալսարանի ղեկավար մարմինների աշխատանքին: Մասնավորապես, ուսանողների ներկայացուցիչները գիտական խորհրդի, ռեկտորատի, ֆակուլտետային խորհուրդների անդամներ են: Այս իրավունքներն ամրագրված են ՄԳՀ-ի կանոնադրությամբ, ՄԳՀ-ի գիտական խորհրդի և ռեկտորատի կանոնակարգերով, ֆակուլտետի, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության կանոնադրություններում:

Սակայն Համալսարանում ուսանողների իրավունքների պահպանման հիմնական պատասխանատու մարմինը ուսանողական խորհուրդն է: Յուրաքանչյուր ոք կարող է ծանոթանալ նաև իր իրավունքներին և պարտականություններին, որոնք ավելի մանրամասն նկարագրված են ուսանողի ուղեցույցում:

Ուսանողներն իրավունք ունեն բողոքարկելու, եթե համաձայն չեն գնահատականի հետ, իրավունք ունեն մասնակցելու ակադեմիական շարժունության ծրագրերին (եթե այս պահին կան ակտիվ ծրագրեր), իրավունք ունեն համապատասխան իրավիճակի դեպքում դիմում ներկայացնել էթիկայի հանձնաժողով: Ուսանողները իրավունք ունեն հետազոտական աշխատանք կատարել Համալսարանի դասախոսների ղեկավարությամբ:

Այսպիսով, հարկ է նշել, որ ՄԳՀ- ն հարգում է ուսանողների իրավունքները ոչ միայն որպես բարձրագույն ուսումնական հաստատության աշխատանքի անհրաժեշտ բաղադրիչ, այլ նաև որպես միջազգային շուկայում մարքեթինգային աճի նշիչ, որն արտահայտվում է ուսանողների տարեկան ընդունելության մեջ, իսկ օտարերկրացիները նախընտրում են դրական մարքեթինգային իմիջով համալսարաններ:

**ՉՍՓՈՐՈՇԻՉ Ը.** ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Հիմքեր	<p><u>ՈԱՀ- 03/06 ՄԳՀ-ի շրջանավարտների կարիերայի և աշխատանքի տեղավորման կենտրոնի կանոնակարգ,</u></p> <p><u>ՈԱՀ-00/26 «Միխթար Գոշ» համալսարանի երիտասարդ առաջնորդների պատրաստման քաղաքականություն,</u></p> <p><u>Շրջանավարտների գրանցամատյան:</u></p>
--------	---

*Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող*

*Ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՄԳՀ-ն ունի մի շարք ծառայություններ, որոնք խորհրդատվական օգնություն են տրամադրում ուսանողներին. կարիերայի և զբաղվածության կենտրոն (ՈԱԶ- 03/06 ՄԳՀ-ի շրջանավարտների կարիերայի և աշխատանքի տեղավորման կենտրոնի կանոնակարգ), ուսանողների հոգեբանական և սոցիալական աջակցության կենտրոն, կան սպորտային բաժիններ և խմբակներ: Ուսանողների հետ դաստիարակչական աշխատանքներն իրականացվում են կանոնավոր կերպով, ուսանողները մասնակցում են բնապահպանական միջոցառումների, սոցիալական տարբեր թեմաներով քննարկումների: Բացի այդ, բոլոր ուսանողները հնարավորություն ունեն անմիջականորեն շփվել Համալսարանի ղեկավարության հետ՝ մի շարք խնդիրների լուծման համար: Գործում է նաև աջակցության թեժ գիծ: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրակացնել, որ ՄԳՀ ուսանողների աջակցության ծառայությունները բավականին զարգացած են և գործում են բարձր մակարդակով:

**Շրջանավարտների զբաղվածության մակարդակը վերջին հինգ տարվա համար (թվով):**

	Զբաղվածություն/ուսման շարունակություն	2019	2020	2021	2022	2023
1	Ավարտելուց անմիջապես հետո	72	56	74	92	
2	Նախքան ավարտելը	38	26	39	48	
3	Մասնագիտությամբ	48	42	52	63	
4	Ոչ մասնագիտությամբ	24	14	22	29	
5	Ավարտելուց հետո ուսումը շարունակող ուսանողների տոկոսը	21	29	21	17	
6	Ավարտելուց 2-5 տարի հետո զբաղվածության մակարդակը	70	56	74	91	
7	Գործազուրկ ուսանողների տոկոսը	38	38	39	54	
8	Ավարտելուց 5 տարի հետո զբաղվածության մակարդակը	-	-	-	-	-

*Վերլուծել Չափանիշ 4-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:*

*Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:*

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Ուսանողներին ուղղված միջավայր և ուսանողական	Որոշ կրթական ծրագրերի

<p>ծառայությունների հասանելիություն: Թեժ գծի հեռախոսահամարներ՝ ուսանողներին և դասախոսներին հուզող ցանկացած խնդրի համար: Ուսանողների համար գործում է հոգեբանական խորհրդատվության համակարգ: Ուսանողները հնարավորություն ունեն մշտական հիմունքներով, բժշկական գաղտնիքի կանոնների պահպանմամբ, ստանալ հոգեբանական խորհրդատվություն մշտական հոգեբանից: Ուսանողներին նյութական աջակցության համակարգ: Մի շարք ուսանողներ ստացել են համալսարանում ուսման վարձի զեղչեր: Համալսարանն ունի մի շարք սպորտային բաժիններ՝ վոլեյբոլ, բադմինտոն, պարային ստուդիա 2022 թվականից շահագործման է հանձնվել ուսանողների և դասախոսների բուֆետ-ճաշասենյակ:</p> <p>2. Համալսարանի հիմնական ֆակուլտետներում ուսանողների կայուն թիվը:</p> <p>3. Ուսանողների ներգրավում Համալսարանի կառավարման մեջ: Ձևավորվել և իրականացվում է ուսանողների ներկայացվածությունը բուհի կառավարման գործընթացներում ապահովելու քաղաքականություն:</p> <p>4. Գիտխորհրդի, ռեկտորատի, ֆակուլտետների խորհուրդների նիստերին ներկա են ուսանողության ներկայացուցիչներ:</p> <p>5. Հետազոտական գործունեության իրականացման հնարավորություն. Ուսանողների մասնակցություն հետազոտական ծրագրերին, ուսանողական գիտական խմբակների գործունեությանը, հանրապետական և միջազգային գիտաժողովներին՝ գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացմամբ:</p> <p>6. Որակի վերահսկում ՄԳՀ-ի որակի ապահովման կենտրոնի կողմից:</p> <p>7. Գործնական ուսուցում ստանալու հնարավորություն: Ուսանողների վաղ պրակտիկան կլինիկաներում և մասնագիտացված կազմակերպություններում:</p> <p>8. Բոլոր ֆակուլտետների ուսանողների համար կրթական և գիտական գրականության ֆոնդի առկայությունը, ներառյալ Համալսարանի բոլոր ուսանողների համար «Ուսանողի խորհրդատու» էլեկտրոնային գրադարանային համակարգ մուտքը և ազգային ու միջազգային գիտական տվյալների բազաները առցանց Համալսարանի ընթերցասրահներից:</p>	<p>քիչ թվով դիմորդներ և ուսանողներ</p>
---	--

<p>Համալսարանն ապահովում է հայերեն, ինչպես նաև ռուսերեն և անգլերեն գրականության հասանելիություն՝ կախված ուսման ոլորտից:</p> <p><b>9.</b> Համալսարանը սահմանել և իրականացնում է ուսանողների ընդունելության քաղաքականություն՝ հիմնված օբյեկտիվության սկզբունքների վրա, ներառյալ հաշմանդամություն ունեցող ուսանողների ընդունելության առանձնահատկությունները:</p> <p><b>10.</b> Լիսաբոնի կոնվենցիայի համաձայն՝ որդեգրվել է քաղաքականություն այլ կրթական կազմակերպություններից, այդ թվում՝ արտասահմանյան կազմակերպություններից ուսանողների տեղափոխման համար (ՈԱԶ-01/21 ՄԳՀ-ի սովորողների ակադեմիական շարժունակության կարգ):</p> <p><b>11.</b> Առկա է ուսանողներից, դասավանդողներից, գործատուներից հետադարձ կապ ստանալու համակարգ՝ գնահատելու համար ուսումնական գործընթացի կազմակերպման պայմանները և ընթացքը (հարցաշարեր):</p>	
<p>Հնարավորություններ</p>	<p>Վտանգներ</p>
<p>Շուկայավարման քաղաքականության ակտիվացում՝ ավելի շատ դիմորդներ ներգրավելու համար: Ուսանողների շարժունակության զարգացում:</p>	<p>Անկայուն աշխարհաքաղաքական իրավիճակ: Բարձր մրցակցություն կրթական ծառայությունների հայկական շուկայում:</p>
<p>Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման համար պետք է ձեռնարկվեն հետևյալ միջոցները.</p> <ol style="list-style-type: none"> <li>1) Ակտիվացնել աշխատանքը հավաքագրող գործակալությունների հետ, ավելացնել դպրոցականների և քոլեջի ուսանողների մասնագիտական ուղղորդմանն ուղղված միջոցառումները, շարունակել մասնակցել կրթական ցուցահանդեսներին:</li> <li>2) Ավելի ակտիվորեն ներգրավել ուսանողներին կարիերայի կենտրոնի կողմից անցկացվող միջոցառումներին:</li> <li>3) Հաջորդ ուսումնական տարվանից սկսել նախատեսվող ուսանողների շարժունակության ծրագրերի իրականացումը:</li> </ol>	



**V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ**

**ՉԱՓԱՆԻՇ:** *ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:*

*Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:*

Համալսարանի հաջողության կարևոր գրավականներից և երաշխիքներից է որակյալ ՊԴ կազմի առկայությունը և մշտական համալրումը նոր, պրոֆեսիոնալ, երիտասարդ կադրերով (ՈԱԶ-00-02 ՄԳՀ-ի գարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան): Կադրերի և, առաջին հերթին, ՊԴ կազմի որակական ցուցանիշների ապահովումը համարվում է բուհի հետագա զարգացման կարևորագույն պայմաններից մեկը: Համալսարանի ՊԴ կազմի պատրաստվածության բարձր մակարդակն անմիջականորեն կապված է ուսումնական գործընթացի բարձր որակի հետ, ինչը նպաստում է աշխատաշուկայում անհրաժեշտ գիտելիքների և մասնագիտական հմտությունների ձևավորմանը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.** ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Հիմքեր	<p><u>ՀՀ աշխատանքային օրենսգիրք,</u></p> <p><u>ՈԱԶ-00/01 «Միխթար Գոչ» համալսարանի կանոնադրություն,</u></p> <p><u>ՈԱԶ-00/02 ՄԳՀ-ի գարգացման 2021-2025 թթ. ռազմավարական ծրագիր և պլան,</u></p> <p><u>ՈԱԶ-00/08 ՄԳՀ-ի որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր,</u></p> <p><u>ՈԱԶ-00/17 ՄԳՀ-ում ՊԴ կազմի գործունեության տարեկան գնահատման և վարկանիշավորման կարգ:</u></p> <p><u>ՈԱԶ-00/20 ՄԳՀ-ի ՊԴ կազմի ձևավորման կանոնակարգ,</u></p> <p><u>Պաշտոնների անձնագրեր,</u></p> <p><u>ՈԱԶ -00/15 ՄԳՀ-ի կադրերի բաժնի կանոնակարգ,</u></p> <p><u>ՈԱԶ -00/26 ՄԳՀ-ի երիտասարդ առաջնորդների պատրաստման քաղաքականություն,</u></p> <p><u>ՈԱԶ- 03/06 ՄԳՀ շրջանավարտների կարիերայի և աշխատանքի տեղավորման կենտրոնի կանոնակարգ:</u></p>
--------	--

*Վերլուծել ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական որակների համապատասխանությունը ՄՈՒՀ-ի առաքելությանը և կրթական ծրագրի*

*նպատակներին:*

ՄԳՀ-ի ՊԴ կազմի մասնագիտական որակները համապատասխանում են Համալսարանի առաքելությանը և կրթական ծրագրերի նպատակներին:

Ռազմավարական ծրագրում նշված Համալսարանի հիմնարար արժեքների շարքում նշվում է պրոֆեսիոնալիզմը՝ հետևյալ բովանդակությամբ. Համալսարանը ձգտում է կրթության, հետազոտությունների և անձնակազմի կառավարման ոլորտներում կիրառել միջազգային լավագույն տեխնոլոգիաներն ու նվաճումները: Մեզանում կարևորվում է յուրաքանչյուրի արհեստավարժությունը և անհատական պատասխանատվությունը: Սա նշանակում է, որ մոնիտորինգը, վերահսկողությունը, հաշվետվությունները և որակի ապահովումն իրականացվում են Համալսարանի գործունեության ցանկացած ոլորտում:

*Վերլուծել ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնասովանողական կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Համալսարանի աշխատակիցները համապատասխանում են բարձրագույն կրթության դասախոսների համար առաջադրված հիմնական չափանիշներին. ունեն բարձրագույն ուսումնական հաստատությունների դիպլոմներ, դասախոսների մասնագիտությունը, ներառյալ կլինիկական ամբիոնների դասախոսները, համապատասխանում է դասավանդվող առարկաների մասնագիտական պահանջներին:

Համալսարանում առկա է նաև գիտական աստիճաններ և կոչումներ ունեցող աշխատողների պարտադիր ներկայություն: Կլինիկական առարկաների դասախոսների թվում բոլորը բժիշկներ են, որոնք համատեղում են դասավանդման աշխատանքները կլինիկական բազաներում աշխատանքի հետ:

Պրոֆեսորադասախոսական կազմի (ՊԴԿ) մասնագիտական որակներին ներկայացվող հիմնական պահանջները ձևակերպված են նախ և առաջ «Կրթության մասին» ՀՀ օրենքում, ԿԳ նախարարի 05.11.1996թ. թիվ 311 հրամանում:

Համալսարանի ՊԴԿ-ի համալրման համար հայտարարվում է մրցույթ:

Բժշկական ֆակուլտետի համար, եթե կնքված պայմանագրի հիման վրա առարկան կցվում է կոնկրետ կլինիկական բազայի, ապա այս կլինիկայի աշխատակիցների միջև հայտարարվում է մրցույթ: Սրա միջոցով ստուգվում է մրցույթին մասնակցող դասախոսների մասնագիտական որակների համապատասխանությունն կրթական ծրագրերի առաքելությանը և նպատակներին:

Համալսարանում համապատասխան ֆակուլտետի կողմից իրականացվող կրթական ծրագրերն ապահովելու համար նախատեսված են տարբեր տեսակի աշխատանքային պայմանագրեր՝ հիմնական, ներքին և արտաքին համատեղություն, կես դրույքով, ինչպես նաև ծառայությունների մատուցման պայմանագիր: Գործում է նաև ժամավճարի համակարգ, որը հնարավորություն է տալիս երաշխավորել կրթական ծրագրերի ապահովումը նեղ

մասնագիտացում և գործնական հմտություններ ունեցող մասնագետներով:

Համալսարանն ունի լիակատար ինքնավարություն ակադեմիական անձնակազմի համալրման գործընթացում՝ ունենալով իրավունք ընտրելու ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրները կամ միաժամանակ օգտագործելու երկու աղբյուրները՝ որակյալ թեկնածուների բավարար հոսք ապահովելու համար:

Ամբիոնի վարիչի պաշտոնի համար թեկնածուների ընտրության մեխանիզմը կարգավորվում է հանրապետական մակարդակով: Համալսարանի նախկին ուսանողներից կադրերի ռեզերվի քաղաքականություն է վարվում: Այսպիսով, ՄԳՀ-ն ունի աշխատակիցներ, ովքեր նախկինում կրթություն են ստացել ՄԳՀ: Օրինակ,

- Ժաննա Ալոյան բ.գ.թ. – ՄԳՀ-ի և Վանաձորի պետական համալսարանի դասախոս - 2010 թվականին ստացել է բանասիրության և մանկավարժության բակալավրի կոչում «Մխիթար Գոշ» համալսարանում:

- Հրայր Պապոյան բ.գ.թ. – ՄԳՀ-ի դասախոս և Վանաձորի պետական համալսարանի դեկան, ստացել է իրավագիտության բակալավրի աստիճան ՄԳՀ-ում 2014թ.:

- Համալսարանի գլխավոր հաշվապահ Թամարա Պապոյանը 2005 թվականին ավարտել է համալսարանի բակալավրիատը, իսկ 2007 թվականին ավարտել է կառավարում մասնագիտության մագիստրատուրան:

- Վահրամ Գրիգորյան – ՄԳՀ-ի ընդհանուր ֆակուլտետի դեկանի տեղակալը նույնպես համալսարանի շրջանավարտ է:

ՄԳՀ-ում աշխատանքի ընդունումը, այլ պաշտոնի տեղափոխումը, աշխատանքից ազատումը կատարվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով և աշխատանքային պայմանագրով: Աշխատանքի ընթացքում աշխատողը պարտավոր է ծանոթանալ համապատասխան պաշտոնի անձնագրին, իր կատարած աշխատանքին առնչվող Համալսարանի ներքին իրավական ակտերին, անցնել անվտանգության տեխնիկայի ուսուցում՝ սանիտարահիգիենիկ և հրդեհային անվտանգության կանոններին համաձայն, որոնց համապատասխանությունը դրանցում ամրագրված դրույթներին պարտադիր է:

Համալսարանում աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները դադարում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու միջոցով:

Հետևելով ՀՀ աշխատանքային օրենսգրքին, Համալսարանի ներքին իրավական ակտերի հետ համատեղ, վերապատրաստման, կադրերի աշխատանքի ընդունման, տարբեր ոլորտներում գործնական ուսուցման բազաների հետ համագործակցության պայմանագրերի կնքումը օգնում է Համալսարանին ունենալ կայուն կադրերի կազմ, որը բավարար է գործունեության բոլոր ոլորտներում կրթական ծրագրեր իրականացնելու համար:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Բ.** ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

ՈԱԶ -00/17 ՄԳՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի տարեկան գործունեության գնահատման և վարկանիշավորման կարգ,  
ՈԱԶ-00/20 ՄԳՀ-ի ՊԴԿ ձևավորման կանոնակարգ,

Հիմքեր	ՈԱԶ-01/15 ՄԳՀ-ի կադրերի բաժնի կանոնակարգ, Պաշտոնների անձնագրեր:
--------	--

*Հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի կոմպետենցիաների համապատասխանությունը մասնագիտության կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որակավորումներին:*

ՄԳՀ-ում իրականացվող յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են ՊԴ կազմի մասնագիտական որակներին և որակավորման բարձրացմանը ներկայացվող հստակ պահանջներ: ՀՀ օրենսդրության համաձայն՝ կլինիկական առարկաների դասախոսներից պահանջվում է ունենալ պրակտիկա կամ օրդինատուրա՝ ուսուցանվող առարկայի նեղ շրջանակով, ինչպես նաև մասնագիտական զարգացման վկայական առնվազն 5 տարին մեկ անգամ:

Օրինակ, ակնաբուժության դասախոս Հերմինե Զարգարյանը ունի Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի դիպլոմ՝ «բժիշկ» որակավորմամբ, ինչպես նաև Մ.Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանում օրդինատուրա անցնելու մասին դիպլոմ՝ «ակնաբուժություն» մասնագիտությամբ:

Բժշկական հիմնական առարկաների (անատոմիա, հյուսվածաբանություն, տեղագրական անատոմիա) դասախոսները պետք է լինեն բժշկական համալսարանի շրջանավարտ և ունենան «բժիշկ» որակավորման դիպլոմ: Դասախոսներն, ովքեր դասավանդում են հումանիտար գիտություններում, նույնպես պետք է ունենան համապատասխան դիպլոմ: Այսպես, օրինակ, հոգեբանության և մանկավարժության դասախոս Մարիամ Թորոսյանը ունի Երևանի պետական համալսարանի դիպլոմ՝ հոգեբանության մագիստրոսի կոչում, «Հոգեբանություն. կլինիկական հոգեբանություն և հոգեթերապիա» մասնագիտությամբ:

Շատ աշխատակիցներ համատեղում են իրենց աշխատանքը ՄԳՀ-ում կլինիկական գործունեության հետ կամ աշխատում են Երևանի այլ բուհերում: Այսպես, հումանիտար առարկաների ամբիոնի վարիչ Տաթևիկ Մերջանյանը, մ.գ.թ., «Հայոց լեզու» առարկան դասավանդում է ինչպես «Մխիթար Գոշ» համալսարանում, այնպես էլ Երևանի պետական համալսարանում: Քիմիայի դասախոսներ՝ քիմ.գ.թ. Հասմիկ Խաչատրյանը և քիմ.գ.թ. Անի Հասրաթյանը համատեղում են իրենց աշխատանքը «Մխիթար Գոշ» համալսարանում Երևանի մեկ այլ բժշկական համալսարանում՝ «Հայբուսակ»-ում դասավանդելու հետ, ինչպես նաև հանդիսանում են «Մնջոյան» գիտական ինստիտուտի աշխատակիցներ, որտեղ իրականացնում են գիտության տարբեր ոլորտների նախագծեր և մասնակցում դրամաշնորհային ծրագրերի:

Համալսարանում դասավանդելու մեջ ներգրավված են նաև դասախոսներ ԱՊՀ այլ համալսարաններից և Հնդկաստանի Հանրապետությունից: Հնդկաստանի Հանրապետությունից դասախոսների ներգրավումը հիմնականում ուղղված է ուսանողներին հավատարմագրման նախապատրաստելուն հենց բնակության երկրում: Մյուս կողմից, սա նպաստում է Հնդկաստանի Հանրապետության ապագա բժիշկների պատրաստման ծրագրի ինտեգրմանը Մխիթար Գոշ համալսարանի «Բուժական գործ» կրթական ծրագրին:

Այսինքն՝ կրթական ծրագրերի իրականացման մեջ ներգրավված շատ դասախոսներ ունեն

փորձ այլ բուհերից կամ շարունակում են համատեղել իրենց գործունեությունը միանգամից մի քանի բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչը նպաստում է դասավանդման մեթոդների վերաբերյալ տեսակետների ընդլայնմանը, փորձի փոխանակմանը և առարկաների աշխատանքային ծրագրերի ժամանակին թարմացմանը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Գ.** ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Հիմքեր	<p>ՈԱԶ -00/17 «Մխիթար Գոշ» համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի տարեկան գործունեության գնահատման և վարկանիշավորման կարգ,          ՈԱԶ-01/19 ՄԳՀ-ի դասալսումների անցկացման կարգ,          ՈԱԶ-02/05 ՄԳՀ-ի հարցումների անցկացման կարգ,          ՈԱԶ -02/03 ՄԳՀ-ի հարցաշարեր,          Վերապատրաստումների ժամանակացույց:</p>
--------	---

*Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի պարբերաբար գնահատման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Արդեն աշխատող ՊԴԿ մասնագիտական որակները պարբերաբար ստուգվում են ամբիոնների վարիչների, ֆակուլտետների ղեկանների, որակի ապահովման կենտրոնի, անհրաժեշտության դեպքում՝ պրոռեկտորների կողմից անցկացվող դասալսումներով:

Գոյություն ունի դասալսումների նախապես սահմանված ժամանակացույց, որը կազմում է ուսումնամեթոդական բաժնի վարիչը ՈԱԿ-ի մասնագետների հետ: Համաձայն ՈԱԶ-01/19 ՄԳՀ-ի դասալսումների անցկացման կարգի՝ դասերի ունկնդրման արդյունքների հիման վրա լրացվում է գնահատման հատուկ ձև: Դասախոսը պարտադիր կարգով ծանոթանում է ունկնդրման արդյունքներին, ուսումնամեթոդական մասի ղեկավարի մեկնաբանություններին, պատասխանում հարցերին:

ՈԱԿ-ը մշտապես հարցումներ է անցկացնում տարբեր կուրսերի ուսանողների շրջանում՝ դասախոսների աշխատանքի որակի և ուսումնական գործընթացից ուսանողների բավարարվածության վերաբերյալ: Ուսումնական տարվա ընթացքում անկետավորումներն անցկացվում են շարունակաբար: Ուսանողների հարցաշարը ներառում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են.

- Դասախոսը գիտի՞ ինչպես պահել լսարանի ուշադրությունը,
- Որքանո՞վ է մատչելի և ամբողջական նյութը,
- Արդյո՞ք դասախոսը մոտիվացնում է ուսանողներին ինքնուրույն աշխատանքի և գիտական գործունեության,
- Արդյո՞ք դասախոսը պահպանում է էթիկայի և դեոնտոլոգիայի կանոնները:

Հարցումն անցկացվում է ՄԳՀ-ի Google հարթակում, ինչը զգալիորեն արագացնում է արդյունքների մշակման գործընթացը: Տեխնիկական անհրաժեշտության դեպքում հարցումը կարող է իրականացվել նախապես տպագրված ձևաթղթերի վրա:

Հարցման արդյունքների և դասերի ունկնդրման հիման վրա կարող է որոշում կայացվել ներկայացնել դասախոսին ֆակուլտետի խորհրդում առաջխաղացման կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու, եթե դրա համար հիմքեր կան:

Յուրաքանչյուր դասախոս կազմում է իր անհատական պլանը՝ հաշվի առնելով սեփական կրթական, գիտական գործունեությունը, հասարակական, դաստիարակչական աշխատանքը և որակավորման բարձրացումը:

Համալսարանը մշակել է ՈԱԶ-00/17 «Մխիթար Գոշ» համալսարանում ՊԴԿ տարեկան գործունեության գնահատման և վարկանիշավորման կարգ: Բոլոր ուսումնական ստորաբաժանումները յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում ներկայացնում են վերադասին հաշվետվություն նախորդ տարում կատարված աշխատանքների վերաբերյալ և միաժամանակ ներկայացնում առաջարկություններ՝ կապված մասնագիտական, մեթոդական խնդիրների հետ:

Քննարկումների արդյունքում մշակվում են համապատասխան առաջարկություններ՝ ուղղված դասախոսի դասավանդման որակի բարձրացմանը:

Ներքին կարգապահական կանոնների համաձայն՝ ծառայողական պարտականությունների օրինակելի կատարման, շարունակական անբասիր աշխատանքի, աշխատանքում նորարարության և այլ ձեռքբերումների համար դասախոսը խրախուսվում է՝

- 1) շնորհակալության հայտարարում,
- 2) միանվագ դրամական պարգևատրում,
- 3) հուշանվերով պարգևատրում,
- 4) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում,
- 5) կարգապահական տույժի հանում:

ՄԳՀ-ի վարչական անձնակազմի աշխատանքը գնահատվում է՝ օգտագործելով վերը նշված շրջանավարտների բավարարվածության հարցումները: 2022 թվականի այս հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հինգ միավորանոց համակարգով ուսանողները բարձր են գնահատում և՛ դեկանների (4,72), և՛ դեկավարության (4,53) աշխատանքը:

Համալսարանում երկար տարիների փորձ ունեցող և իրենց լավ դրսևորած աշխատակիցները կարիերայի աճի հնարավորություն ունեն: Այսպես, օրինակ, կենսաբանական և բժշկական առարկաների ամբիոնի վարիչ Լ.Ս. Սահակյան սկզբում դարձել է ամբիոնի վարիչ, իսկ դրանից հետո՝ Համալսարանի գիտական քարտուղար:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ղ.** Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈԻՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Հիմքեր	<p><u>ՈԱԶ -00/10 «Մխիթար Գոշ» համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգ.</u></p> <p><u>ՈԱԶ-01/15 «Մխիթար Գոշ» համալսարանի կադրերի բաժնի կանոնակարգ.</u></p> <p><u>ՈԱԶ-01/07«Մխիթար Գոշ» համալսարանի ամբիոնի կանոնակարգ.</u></p> <p><u>ՈԱԶ- 01/22b ՄԳՀ «Բուժական գործ» ՄԿԾ-ի զարգացման 2022-2023թթ. ռազմավարություն.</u></p> <p><u>ՈԱԶ -01/26 ՄԳՀ միացյալ ֆակուլտետի կանոնադրություն.</u></p>
--------	---

Որակավորման բարձրացման ժամանակացույց

Պաշտոնների անձնագրեր:

*Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործման գործընթացների արդիականությունը վերջին 3 տարիների համար /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՄԳՀ-ն վարում է կանոնավոր առաջադեմ վերապատրաստման քաղաքականություն ինչպես դասախոսական անձնակազմի համար, (մանկավարժության և մասնագիտական ոլորտներում) այնպես էլ վարչակառավարչական անձնակազմի համար: ՄԳՀ-ի աշխատակիցների մասնագիտական զարգացումը տեղի է ունենում կադրերի բաժնի կողմից վարվող ժամանակացույցի համաձայն: Որակավորման բարձրացման հաճախականությունը առնվազն 3 տարում 1 անգամ է:

ՊԴԿ հետ մեկտեղ պարբերական վերապատրաստում անցնել պահանջվում է նաև վարչակառավարչական անձնակազմից:

Համալսարանը պարտավորվում է ֆինանսապես աջակցել աշխատակիցների (դասախոսների) և վարչակառավարչական անձնակազմի խորացված վերապատրաստմանը մանկավարժության և մասնագիտական ոլորտներում:

Մանկավարժական ներուժի զարգացման նպատակին հասնելու համար ԲՈՒՀ-ը կատարելագործում է դասախոսական կազմի վերապատրաստման ծրագրերը, հաստիքների համալրման չափորոշիչները և գործընթացները, կրթական ծրագրերին համապատասխան սահմանում ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները:

Այդ նպատակով համալսարանը հուշագրեր է ստորագրել Չեխիայի Պրահայի Միջազգային կրթության IC ինստիտուտի և Բրյուսելի Բելգիական կրթական պորտալի հետ, որտեղ Համալսարանի դասախոսներն անցել են մեթոդաբանության և մանկավարժության ժամանակակից ասպեկտների վերաբերյալ վերապատրաստման խորացված դասընթացներ: Բացի այդ, բուհում դասախոսական կազմի համար պարբերաբար անցկացվում են մանկավարժության վերաբերյալ սեմինար-դասընթացներ: Կադրերի որակի ներքին աուդիտի հիման վրա մանկավարժական վերապատրաստման խորացված ուսուցումն իրականացվում է Երևանի պետական համալսարանի բազայի վրա՝ համաձայն կնքված պայմանագրի և աշխատողների վերապատրաստման կարգի, որն անցկացնում է կադրերի բաժինը: 2023 թվականի համար նախատեսվում է համալսարանի միջոցների հաշվին դասախոսական կազմից վերապատրաստել 40 հոգի:

Ամեն տարի ՊԴԿ ներկայացուցիչները մասնակցում են տարբեր գիտական համաժողովների, սեմինարների, պրակտիկաների՝ իրենց հմտությունները բարելավելու և փորձի փոխանակման նպատակով: Ուսանողների համար ևս կազմակերպվում են գիտաժողովներ, այդ թվում՝ առցանց ձևաչափերով, բժշկագիտության և գիտության բնագավառի միջազգային դասախոս-պրոֆեսորների մասնակցությամբ:

Օրինակ.

Միասնական ֆակուլտետի փիլիսոփայության դասախոս Նաիրա Ղազարյանն ունի «Time Management, Prioritising for Time & Workload in the framework of ErasmusDays 2021» 2021

թվականի հոկտեմբերի 14-ին վկայական:

Լատիներեն և ռուսաց լեզուների դասախոս Կարինե Գրիգորյանն անցել է Երևանի պետական համալսարանի մանկավարժության և հոգեբանության վերապատրաստման դասընթացները:

Միավորված ֆակուլտետի դասախոս Փիլոյան Լիանան ավարտել է մաթեմատիկայի, ինֆորմատիկայի և Excel, PowerPoint, Internet, Outlook Express ծրագրերի խորացված դասընթացներ:

Ստոմատոլոգիայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ. Համլետ Կարապետյանը 2022 թվականին ավարտել է բարձրագույն կրթությունը «KNRTU» Դաշնային պետական բյուջետային ուսումնական հաստատության լրացուցիչ մասնագիտական կրթության ինստիտուտում՝ «Թվային կրթական միջավայրում ուսուցման նորարարական մոտեցումներ. S2S և մուլտիմեդիա» ծրագրով:

Անահիտ Անտոնյանը - բժշկական մասնագիտությունների և գիտական գործունեության գծով պրոռեկտոր, բ.գ.թ. մասնակցել է «Ժամանակակից գիտություն. կառավարման և հետազոտության ստանդարտներ II», Չեխիա, Պրահայի I- IC INSTITUTE of international education-ի կազմակերպած կոնֆերանսին:

Նյարդավիրաբուժության դասախոս Վարազդատ Սահակյանը վերապատրաստվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից «Զանգվածային պատահարների կառավարման թրեյներների վերապատրաստում» ծրագրով:

2023թ-ի ապրիլին համալսարանի վարչական անձնակազմի և դասախոսների համար անցկացված վերջին վերապատրաստումներից մեկը ՀՀ ՈԱԱԿ-ում առարկաների աշխատանքային ծրագրերի և դասախոսների անհատական դասավանդման պլանների պատրաստման վերաբերյալ վերապատրաստումն էր:

2022/2023 ուսումնական տարում ՊԴԿ և վարչակառավարչական անձնակազմի խորացված վերապատրաստումը նպաստեց ուսումնական գործընթացի ինտերակտիվ ձևերի թվի զգալի բարձրացմանը, ինչի մասին վկայում են գործնական պարապմունքները լսելու ընթացքում ձեռք բերված տվյալները:

**ԶԱՓՈՐՈՇԻՉ Է.** ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Հիմքեր	Հիմնական ՊԴ կազմի ցանկը (նշելով որակավորում-ները, գիտական աստիճանները և/կամ կոչումները), Հիմնական ՊԴ կազմի կայունությունն ապահովող քաղաքականությունը և ընթացակարգերը, Համատեղությամբ աշխատող դասավանդողների ցանկը(նշելով որակավորում-ները, գիտական աստիճանները և/կամ կոչումները), ՈԱԶ-00/20 «Միսիթար Գոշ» համալսարանի ՊԴԿ ձևավորման կանոնակարգ:
--------	--

*Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողությունների արդիականությունը վերջին 3 տարիների համար / կատարել համառոտ*



*մեջբերումներ համապատասխան հիմքերից:*

Վերջին 5 տարիների ընթացքում տեղի է ունեցել ՊԴԿ աշխատակիցների թվաքանակի ավելացում՝ հիմնականում «Բուժական գործ» ՄԿԾ-ի շրջանակներում օտարերկրացի ուսանողների ուսուցման համար ներգրավված դասախոսների հաշվին: Միննույն ժամանակ, ըստ Որակի ապահովման կենտրոնի հարցման տվյալների, դասախոսական կազմի 70%-ը կարծում է, որ իրենց աշխատանքային իրավունքները լիովին պահպանվում են, 20%-ը պատասխանել է, որ դրանք հիմնականում պահպանվում են, և միայն 1 հարցվող է կարծում, որ իր աշխատանքային իրավունքները պարբերաբար խախտվում և չեն պահպանվում: Այս տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ դասախոսական կազմի մեծ մասը գոհ է Համալսարանի կադրային քաղաքականությունից:


Ուսումնական հաստատության մոտիվացիոն կարևորագույն բաղադրիչներից մեկը աշխատավարձի չափն է: Եթե բուհը ցանկանում է կադրային առումով մրցունակ լինել պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նկատմամբ, ապա պետք է անպայման ուշադրություն դարձնի դրան: Դասախոսների հարցման արդյունքում ստացված տվյալների համաձայն՝ աշխատողների 67%-ը լիովին գոհ է իր աշխատավարձից, 14%-ը՝ դժգոհ, իսկ 19%-ը դժվարացել է պատասխանել այս հարցին:

Հետագայում նախատեսվում է մշակել տարբերակված հավելավճար դասախոսական անձնակազմի համար, ովքեր օտարերկրյա ուսանողների համար կրթական ծրագիր են իրականացնում միջնորդ լեզվով՝ կախված անգլերենի իմացության մակարդակից: Արդեն մշակվել և հաստատվել է ՊԴ կազմի գործունեության վարկանիշային գնահատման կարգը, որը նախատեսվում է ներդնել հաջորդ ուսումնական տարվանից:

Կարևոր է նաև, որ Համալսարանի «Բուժական գործ» կրթական ծրագրի դասախոսներից շատերը ոչ միայն երկար տարիներ են աշխատում ՄԳՀ-ում, այլև գործող բժիշկներ և կլինիկաների աշխատակիցներ են: Օրինակ՝ «Անեսթեզիոլոգիա և վերակենդանացում» առարկայի դասախոս Լիլիա Համլետի Թադևոսյանը, բ.գ.թ., Քանաքեռ-Զեյթուն ծննդատան անեսթեզիոլոգ է և մի քանի տարի է, ինչ իր հիմնական աշխատանքը համատեղում է Համալսարանում դասավանդելու հետ:

Համալսարանի դասախոսները հետևողականորեն ապահովում են ՄԳՀ-ի շրջանավարտների գիտելիքների անհրաժեշտ մակարդակը, ինչի մասին է վկայում միջանկյալ և ավարտական քննությունները հաջողությամբ հանձնող ուսանողների կայուն բարձր մակարդակը: Բացի այդ, Որակի ապահովման կենտրոնի հարցումներում ուսանողները արձանագրում են բավարարվածության բարձր տոկոս ինչպես ՊԴ կազմից, այնպես էլ վարչական և ղեկավար անձնակազմից:

Question 5 Cheking the student's satisfaction of administration work We ask you to rate the level of your satisfaction of following members of admini...-5 -- Fully satisfied How much are you satisfied?



Համալսարանի ղեկավարության և դասախոսների հետ փոխգործակցությամբ բավարարվածության վերաբերյալ ուսանողների հարցումներ կատարելիս տվյալներ են ստացվել, որ ուսանողների ավելի քան 93%-ը լիովին կամ գրեթե ամբողջությամբ գոհ է իրենց հետ դասախոսների փոխգործակցությունից: Մեզ համար ամենակարևորը ՊԴԿ հետ շփման մասին բացասական պատասխան տված ուսանողների բացակայությունն էր:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ** գ.ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հիմքեր	<p>ՈԱԶ -00/17 «Մխիթար Գոշ» համալսարանում ՊԴԿ տարեկան գործունեության գնահատման և վարկանիշավորման կարգ,</p> <p>ՈԱԶ-00/26 «Մխիթար Գոշ» համալսարանի երիտասարդ առաջնորդների պատրաստման քաղաքականություն,</p> <p><u>ՈԱԶ-01/32 ՄԳՀ-ի երիտասարդ դասախոսի դպրոցի կանոնակարգ,</u></p> <p><u>Որակավորման բարձրացման ժամանակացույց,</u></p> <p><u>Պաշտոնների անձնագրեր:</u></p>
--------	---

*Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը վերջին 3 տարիների համար / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՄԳՀ-ն մշակել է կանոնակարգ դասախոսական կազմի մասնագիտական զարգացման քաղաքականության և ընթացակարգերի վերաբերյալ (ՈԱԶ-01/32 «Մխիթար Գոշ» համալսարանի երիտասարդ դասախոսի դպրոցի կանոնակարգ), որը սահմանում է աշխատելու փորձ չունեցող դասախոսին բուհական աշխատանքում գրագետ ներգրավելու ընթացակարգերը: Երիտասարդ դասախոսների դպրոցի աշխատանքի ուղղություններն են.

-երիտասարդ մասնագետների աշխատանքի կազմակերպումը կրթության

բովանդակության, ձևերի, մեթոդների և միջոցների կատարելագործման ուղղությամբ,  
 -բաց դասերի վերլուծություն՝ որպես մենթորների փորձը վերահսկվող երիտասարդ դասախոսներին փոխանցելու ձև,  
 -օժանդակություն ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների, ուսումնական և մեթոդական համալիրների մշակման գործում,  
 -աջակցություն երիտասարդ դասախոսներին կրթական գործընթացում ժամանակակից մոտեցումների և նորարարական մանկավարժական տեխնոլոգիաների ներդրման գործում,  
 -ժամանակակից կրթության հիմնախնդիրների վերաբերյալ գիտամեթոդական աշխատանքների կազմակերպում և իրականացում,  
 -մեթոդական գրականության նորույթների ուսումնասիրություն և ծանոթացում, անհատական և խմբակային խորհրդատվություն ուսումնամեթոդական բաժնի աշխատակցի հետ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար:**

<p>Հիմքեր</p>	<p>Վարչական աշխատակազմի ցանկը՝ ըստ հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների</p> <p>Հավելված ( Համալսարանի կանոնադրության հավելված. ՄԳՀ-ի կառուցվածքի սխեման),</p> <p>ՈԱԶ -00/01 «Մխիթար Գոշ» համալսարանի կանոնադրություն,</p> <p>ՈԱԶ -00/15 ՄԳՀ-ի կադրերի բաժնի կանոնակարգ,</p> <p>ՈԱԶ-00/23 «Մխիթար Գոշ» համալսարանի տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման կանոնակարգ:</p>
---------------	---

*Վերլուծել ՄՈՒՀ-ի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի արդյունավետությունը վերջին 3 տարիների համար / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

2022 թվականին համալսարանի կառուցվածքը թարմացվել է, ստեղծվել են նոր վարչական պաշտոններ, ինչպիսիք են՝ ռազմավարական զարգացման գծով պրոռեկտոր, բժշկական մասնագիտությունների և գիտության գծով պրոռեկտոր, գիտահետազոտական կենտրոնի ղեկավար: Համալսարանի ՈԱԿ-ի կառուցվածքը թարմացվել և ընդլայնվել է: Գործում են փաստաթղթերի կառավարման և ուսումնամեթոդական բաժինները և տեխնիկական պատասխանատու՝ լաբորանտի պաշտոնը: Այս ամենը նպաստեց պլանավորման և հաշվետվության համակարգի ներդրմանը, դասախոսական կազմի վերահսկմանը և աշխատանքի որակի բարելավմանը:


2022-2023 ուսումնական տարվա ընթացքում ՄԳՀ-ի ներքին իրավական ակտերի բազան զգալիորեն թարմացվել է: Ուսումնական բաժինը, ամբիոնների աշխատակիցների և դասախոսների ներգրավմամբ, թարմացրել է ուսումնական պլանները և առարկաների աշխատանքային ծրագրերը: Մի շարք վերապատրաստումներ և դասընթացներ են անցկացվել

ՄԳՀ-ի դասախոսների համար: Կադրերի բաժինը ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հետ համատեղ աշխատանքներ է տանում վարչական անձնակազմի և ՊԴ կազմի հմտությունների կատարելագործման ուղղությամբ:

Համալսարանի վարչական աշխատանքում ներգրավված աշխատակիցները համապատասխանում են վարչակառավարչական անձնակազմի համար առաջադրված հիմնական չափանիշներին, ունեն համապատասխան ոլորտների բարձրագույն ուսումնական հաստատությունների դիպլոմներ, համապատասխանում են պաշտոնների անձնագրերում տրված բնութագրերին: Կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները մշտապես անցնում են մասնագիտական վերապատրաստումներ: Վարչակառավարչական անձնակազմի համապարփակ գնահատումն իրականացվում է նաև ՄԳՀ-ի Որակի ապահովման կենտրոնի կողմից՝ կադրերի բաժնի հետ համատեղ՝ պարբերական վերապատրաստման անհրաժեշտություն, վարչակառավարչական անձնակազմի գործունեության գնահատման և դասախոսների հարցման արդյունքների հիման վրա:

Նաև, ՄԳՀ-ի կանոնադրության համաձայն, վարչակառավարչական անձնակազմը Համալսարանի աշխատակազմի ընտրովի մաս է, որը պահանջում է 5 տարին մեկ ընտրություն զբաղեցրած պաշտոնում՝ նախորդ ժամանակաշրջանի կատարած աշխատանքի և վստահված կառուցվածքային ստորաբաժանման իրականացրած ծրագրերի վերաբերյալ հաշվետվությամբ, ինչի արդյունքում վարչակառավարչական անձնակազմը թարմացվելու հնարավորություն ունի:

Question 5 Cheking the student's satisfaction of administration work We ask you to rate the level of your satisfaction of following members of admini...-5 -- Fully satisfied How much are you satisfied?



Համալսարանի ղեկավարության և դասախոսների հետ փոխգործակցությամբ բավարարվածության վերաբերյալ ուսանողների հարցումներ կատարելիս տվյալներ են ստացվել, որ ուսանողների ավելի քան 93%-ը լիովին կամ գրեթե ամբողջությամբ գոհ է իրենց հետ դասախոսների փոխգործակցությունից: Մեզ համար ամենակարևորը ՊԴԿ հետ շփման մասին ամբողջովին բացասական պատասխան տված ուսանողների բացակայությունն էր:

*Վերլուծել Չափանիշ 5-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը,*

*արտաքին հնարավորությունները և վտանգները:*

*Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:*

<i>Ուժեղ կողմեր</i>	<i>Թույլ կողմեր</i>
<p>ՄԿԾ-ն միջնորդ լեզվով իրականացնող դասախոսների անգլերեն լեզվի իմացության բարձր մակարդակ:</p> <p>Դասախոսների 80%-ը իրենց գործունեության ոլորտում գործող մասնագետներ են:</p> <p>ՄԳՀ-ն ունի դասախոսական անձնակազմի խորացված վերապատրաստման քաղաքականություն:</p> <p>Գոյություն ունի ՊԴԿ գնահատման և հետադարձ կապ ստանալու հստակ մեխանիզմ:</p> <p>Դասախոսական կազմի բարձր հետաքրքրվածությունը ՄԳՀ-ում աշխատանքի նկատմամբ:</p> <p>ՊԴԿ-ը, գործատուները, ուսանողները մասնակցում են որոշ ուսումնական ծրագրերի մշակմանը և թարմացմանը:</p> <p>Օրինակ՝ նախատեսվում է թարմացնել կամընտրական առարկաների բլոկը «Կառավարում» ՄԿԾ-ում ծրագրում: «Բուժական գործ» կրթական ծրագրում իրականացվել է որոշ կլինիկական առարկաների գործնական պարապմունքների ժամերի ավելացում, իսկ փոփոխական մասը՝ վերանայվել:</p> <p>Գործում է կադրերի ռեզերվային քաղաքականություն Համալսարանի վարչական և ղեկավար աշխատակիցներից: Մասնավորապես, վարչակառավարչական անձնակազմը, ինչպես նաև ՊԴԿ-ը առնվազն 3 տարին մեկ անցնում են խորացված վերապատրաստում:</p>	<p>Կրթական գործունեության որոշ ուղղություններում գիտական աստիճաններ ունեցող աշխատողների ցածր տոկոսը:</p> <p>Երիտասարդ դասախոսների բարձր տոկոսը, ինչը պահանջում է նրանց կրթական գործունեության որակի վերահսկում:</p> <p>Համալսարանի մի շարք աշխատակիցների ոչ բավարար տեղեկացվածություն լրկալ իրավական դաշտի վերաբերյալ:</p>
<i>Հնարավորություններ</i>	<i>Վտանգներ</i>
<p>Ներդնել տարբերակված աշխատավարձերի մեխանիզմ:</p> <p>Մշակել տեղական կադրերին աջակցելու, մասնագիտական առաջխաղացումը խրախուսելու մեխանիզմներ:</p> <p>Բարելավել հարցումների արդյունքների վերլուծությունը և հարցումների լուսաբանումը:</p>	<p>Դասախոսական կազմի արտահոսքը կրթական այլ հաստատություններ (ներքին մրցակցություն Հայաստանի Հանրապետության շուկայում) և արտասահման:</p> <p>Բժշկական պրակտիկայում դասախոսների բարձր ռոտացիա</p>

<p>Բարելավել դասախոսների գնահատման մեխանիզմները, մեծացնել նրանց ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներին:</p> <p>Մեծացնել փորձ չունեցող դասախոսների ակտիվ ներգրավվածությունը երիտասարդ դասախոսի դպրոցում:</p> <p>Ավելացնել Համալսարանի աշխատակիցների թիվը միջազգային նախագծերում, մասնավորապես՝ Չեխիայի Պրահայի Միջազգային կրթության IC ինստիտուտի և Բելգիայի կրթական պորտալի հետ կնքված համագործակցության պայմանագրերի հիման վրա: Բելգիայում այս պահին սովորել է 10 հոգի, Պրահայում՝ 5 հոգի: Նախատեսվում է ձեռք բերված փորձը տեղափոխել վերապատրաստման այլ ոլորտներ:</p>	<p>գործնական պարապմունքների ցանկացած բազայի հետ պայմանագիրը խզելու դեպքում:</p>
--	---

*Թույլ կողմերը հաղթահարելու և վտանգները վերացնելու համար նախատեսվում է.*

1. Ինչպես երիտասարդ դասախոսների, այնպես էլ աշխատանքային փորձ ունեցող ՊԴ կազմի մոտիվացիայի բարձրացում, ՊԴ կազմի գնահատման վարկանիշային կարգի և աշխատավարձի խթանման ներմուծում:
2. ՊԴ կազմի ակտիվ ներգրավում հետազոտական գործունեության մեջ ՄԳՀ-ի գիտահետազոտական կենտրոնի բազայի վրա:
3. Մեմինարների կազմակերպում՝ ՊԴԿ-ին համալսարանի լոկալ իրավական բազային ծանոթացնելու նպատակով, ՊԴ կազմի որակավորան բարձրացում, երիտասարդ դասախոսի դպրոցի ակտիվացում, մենթորիության զարգացում:
4. Կլինիկական բազաների հետ երկարաժամկետ պայմանագրերի կնքում, սեփական կլինիկաների ստեղծում, սարքավորումների և տեխնոլոգիաների ձեռքբերում:

## VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

**ԶԱՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

*Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:*

ՄԳՀ-ը պարտադիր ուշադրություն է դարձնում հետազոտական և նորարարական գործունեության բարելավմանը: ՄԳՀ-ի զարգացման ռազմավարական ծրագիրը հստակ սահմանում է գիտահետազոտական գործունեության բարելավման և ամրապնդման նպատակները՝ բարձրացնելով այս ոլորտում համալսարանի կարգավիճակն Հայաստանում և տարածաշրջանում. «Ընդլայնել և խորացնել համագործակցությունը Հայաստանի և արտերկրի առաջատար գիտակրթական հաստատությունների հետ» (ՈԱԶ-00/02-ՄԳՀ-ի զարգացման 2021-2025թթ ռազմավարական ծրագիր և պլան):

**ԶԱՓՈՐՈՇԻՉ ա.** ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Հիմքեր	<p><u>ՈԱԶ- 00/01 «Մխիթար Գոշ» համալսարանի կանոնադրություն,</u></p> <p><u>ՈԱԶ- 00/02 «Մխիթար Գոշ» համալսարանի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան,</u></p> <p><u>ՈԱԶ-00/10 ՄԳՀ-ի գիտական խորհրդի կանոնակարգ,</u></p> <p><u>ՈԱԶ- 03/12 ՄԳՀ-ի 2022-2025թթ. գիտահետազոտական գործունեության ռազմավարական պլան,</u></p> <p><u>ՈԱԶ- 03/04 ՄԳՀ-ի գիտահետազոտական կենտրոնի կանոնակարգ,</u></p> <p><u>ՈԱԶ-03/05 ՄԳՀ-ի ուսանողական գիտական ընկերության կանոնադրություն,</u></p> <p><u>ՈԱԶ- 03/01 ՄԳՀ-ի գիտական, ուսումնական, ուսումնամեթոդական գրականության հրատարակման կարգ,</u></p> <p><u>Քաղվածք գիտխորհրդի թիվ 2/22 նիստի արձանագրությունից 24.12.22թ.:</u></p>
--------	--

*Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՄԳՀ-ի ռազմավարական հետազոտական ծրագրի նպատակն է իրականացնել համապատասխան գիտական հետազոտություններ, ինտեգրնել գիտությունն ու կրթությունը, ստեղծել և արդյունավետ փոխանցել նոր գիտելիքներ և տեխնոլոգիաներ առողջապահության,

իրավագիտության և ՄԳՀ-ի հետ կապված ուսուցման այլ ոլորտներում՝ դրանով իսկ ամեն տարի ավելի ու ավելի մեծ ուշադրություն դարձնելով ուսանողների գիտահետազոտական և նորարարական գործունեության բարելավմանը:

Օտարերկրյա ուսանողների համար բժշկական ֆակուլտետի գործունեության սկզբից (2018թ.) և ՊԴ կազմը բարձր որակավորում ունեցող բժիշկներով համալրվելուց ի վեր Համալսարանի գործունեության համար նոր հորիզոններ են բացվել: 2022 թվականին որոշվել է ստեղծել Համալսարանի գիտահետազոտական կենտրոն, որի գործունեությունը կենտրոնացած է ոչ միայն բուհի դասախոսների աշխատանքի վրա, այլև ուսանողների առավելագույն ներգրավվածության վրա: 2023 թվականին այն բացվել է և գիտահետազոտական կենտրոնի պետի պաշտոնում աշխատանքի է ընդունվել աշխատակից:

Գիտահետազոտական կենտրոնի գործունեությունը հետապնդում է հետևյալ նպատակները.

- Համալսարանում բժշկագիտության առաջադեմ տեխնոլոգիաների զարգացում և դրանց հիման վրա նորարարական արտադրանքների ներդրում, որոնք ապահովում են հանրային առողջության պահպանումն ու բարելավումը:
- Հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների իրականացում ՄԳՀ-ի առաջնահերթ ոլորտներում:
- Փորձարարական և կլինիկական լաբորատոր հետազոտությունների արդիական մեթոդների մասնավորեցում և ներդրում:

Այս նպատակներին հասնելու համար գիտահետազոտական կենտրոնը ապահովում է հետևյալ խնդիրների լուծումը.

- իրականացնել անկախ և համատեղ համապարփակ հետազոտություն Համալսարանի ամբիոնների հետ, ներառյալ ամբիոնների անձնակազմը,

-գիտական խորհրդատվական և գործնական աջակցության տրամադրում ուսանողներին իրենց ատենախոսությունների կատարման գործում,

- տեսական և գործնական բժշկության ամենաարդիական նպատակների իրականացման համար հետազոտական կենտրոնի հիման վրա ուսանողների անկախ հետազոտական խմբերի ստեղծում,

- գիտահետազոտական կենտրոնում ուսանողների հետ տեսական և գործնական պարապմունքների անցկացում՝ ժամանակակից հետազոտական մեթոդների և սարքավորումների օգտագործման տեխնիկայի յուրացման նպատակով:

-երիտասարդ գիտնականների որակավորման, մասնագիտական գործունեության պատրաստման աշխատանքների իրականացում գիտական մտածողության զարգացման համար,

- հրատարակչական նոր կենտրոնի ստեղծում, «Մխիթար Գոշ» ամսագրի կարգավիճակի վերականգնում,

-գիտական կլոր սեղանների, գիտաժողովների կազմակերպում:

Կենտրոնի ձևավորումը և վերակառուցումն իրականացնում է գիտխորհուրդը՝ ռեկտորի հրամանով, Համալսարանի կանոնադրությանը համապատասխան:

ՄԳՀ-ի հետազոտական կենտրոնի հիման վրա ուսանողներն իրենց ղեկավարների հետ աշխատում են հետևյալ նախագծերի վրա.



-«Մարմնի քաշի գործակցի կախվածությունը անպտղությանը տառապող կանանց օրգանիզմի հորմոնալ կարգավիճակից,

Արյան չափված պարամետրերի հարաբերական վերլուծություն «Comparative study of patients with Covid-19 and Covid-19 patients with history of Tuberculosis in India»:

24.03.2023թ. ՈւԳԸ թիվ 1 նիստում ստոմատոլոգիայի 1-ին կուրսի ուսանողներ Մոհամմադ Մոռադին, Պուրիա Ազադին, Էրֆան Գոլջանին, Մահդի Մալեքին ներկայացրեցին «Data analysis» շնորհանդեսը «Մարմնի քաշի գործակցի կախվածությունը անպտղությամբ տառապող կանանց օրգանիզմի հորմոնալ կարգավիճակից. արյան չափված պարամետրերի հարաբերական վերլուծություն» հետազոտական նախագծում կատարված աշխատանքի վերաբերյալ: Ծրագրի ղեկավար Կենսաբժշկական առարկաների ամբիոնի ասիստենտ Բ.Գ.Թ. Ա. Խաչատրյան:

Մ. Հերացու անվան Պետական բժշկական համալսարանի անձնակազմի հետ համատեղ իրականացվում է հետազոտական ծրագիր: Ամփոփելով նախագծի առաջին փուլը, հրապարակվել է թեմայի վերաբերյալ հետևյալ հոդվածը "Psychological and sociocultural adaptation of medical university international students in Armenia" Volume 13 - Issue 2 (November 2022) of GSC Advanced Research and Reviews (GSCARR): Այս աշխատանքը նպատակ ունի ուսումնասիրել ՀՀ-ում օտարերկրյա ուսանողների հարմարվողականության օպտիմալ պայմանները և կարող է օգտագործվել բազմաթիվ սոցիալական ծառայությունների աշխատանքում: Մ. Մնջոյանի անվան ինստիտուտի դասախոսները աշխատում են տարբեր գիտական նախագծերի վրա՝ Օրգանական քիմիայի գիտահետազոտական կենտրոնի հիման վրա: Այսպես, քիմիայի դասախոս Անի Հասարթյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Synthesis of substituted 2-pyridones and glutarimides on the basis of arylamides of acetoacetic and amidoesters of malonic acids» ունի կիրառական բնույթ:

Համալսարանի դեղաբանության դասախոսը, աշխատելով դոկտորական ատենախոսության վրա՝ «Բարձր հակաուռուցքային ակտիվությամբ միացությունների հայտնաբերումը տարբեր կառուցվածքների բենզո[h]քինազոլինների միջև» թեմայով, օգտագործում է իր հետազոտության արդյունքները դասախոսության ժամանակ:

2004 թվականից Համալսարանը հրատարակում է ՀՀ արդարադատության նախարարության և ԿԳՆ բարձր որակավորման հանձնաժողովի կողմից ճանաչված «Մխիթար Գոշ» գիտամեթոդական ամսագիրը:

Ամսագրում տպագրվում են ինչպես Համալսարանի ՊԴ կազմը, այնպես էլ Հայաստանի Հանրապետության այլ բուհերի և հաստատությունների որակավորված մասնագետներ մանկավարժության, կառավարման և իրավագիտության բնագավառում, գիտամեթոդական գործունեության ոլորտներում: 2021 թվականից ամսագիրը ժամանակավորապես դադարեցրել է իր հրատարակչական աշխատանքը՝ Covid-19 համաճարակի ժամանակ ամսագրի խմբագրական և հրատարակչական խորհրդի որոշ անդամների ողբերգական կորստի պատճառով:

Այս պահին ձևավորվել է խմբագրական և հրատարակչական խորհրդի նոր կազմ, որը ներկայացվում է ՄԳՀ-ի գիտխորհրդի քննարկմանը: Ներկայացվել է տեղեկատվական գրություն և ներկայացվել Բարձրագույն որակավորման հանձնաժողով ամսագիրը

հավաստագրվածների ցանկում վերագրանցելու վերաբերյալ:

Գիտակցելով բուհի առջև դրված խնդիրները՝ վերջին տարիների գիտական հետազոտությունների արդյունքները սկսեցին ներմուծվել ոչ միայն համալսարանական ամբիոնների ուսումնական գործընթացում, այլև կլինիկական բժիշկների աշխատանքում: Գիտական աշխատանքների, ուսումնական և մեթոդական նյութերի հիման վրա մշակվում են կլինիկական փորձեր:

Գիտական հետազոտությունների արդյունքները ներդրվում են ինչպես համալսարանական ամբիոնների ուսումնական գործընթացում, այնպես էլ բժշկական պրակտիկ գործունեության մեջ: Դրանք հիմք են հանդիսանում ուսումնական նյութերի մշակման, ինչպես նաև տարբեր առարկաների ուսուցման գործընթացում օգտագործվող կլինիկական փորձերի մշակման և օպտիմալացման համար: Այսպես, քթի և պարանոսային սինուսների ախտորոշման և նվազագույն ինվազիվ էնդոսկոպիկ վիրաբուժության ժամանակակից տեխնոլոգիաները ներդրվել են քիթ-կոկորդ-ականջաբանության առարկայի ուսումնական ծրագրում:

Համալսարանի որոշ դասախոսներ, այդ թվում՝ գործատուների ներկայացուցիչներ, վարչակազմի աշխատակիցներ մենագրությունների, մեթոդական ձեռնարկների և գիտական հրապարակումների հեղինակ են: Այս բոլոր աշխատանքները հաշվի են առնվել առարկաների աշխատանքային ծրագրերը կազմելիս, և բազմաթիվ հրապարակումներ ներառվել են աշխատանքային ծրագրի լրացուցիչ կամ հիմնական գրականության ցանկում:

Բժշկական ֆակուլտետի ամբիոնների ուսումնական գործընթացում ընդգրկված կլինիկաների ղեկավարները պարբերաբար առաջարկում են թարմացումներ և փոփոխություններ կրթական ծրագրում՝ կիրառելով սեփական գիտական հետազոտությունների արդյունքները:

Այսպես, Ընտանեկան բժշկության կենտրոնի «Կարդիոմեդ» կլինիկայի ղեկավարն առաջարկել է «Ապահովագրական բժշկության ներդրումը ՀՀ-ում», պետական նախագծերի արդյունքների հիման վրա ներդնել «Բուժման կանխարգելիչ մեթոդներ», «Սրտի կորոնար հիվանդության բուժման միջազգային չափանիշների տեղայնացում» կրթական մոդուլները: ՀՀ առողջապահության նախարարությանն առընթեր ընտանեկան բժիշկների միջազգային ասոցիացիաների հետ մշակվել է շաքարային դիաբետի վերաբերյալ ընտանեկան բժշկի արձանագրություն-տեղեկագիրք: Կատարված աշխատանքների հիման վրա կլինիկայի ղեկավարն առաջարկել է ներդնել «Գիտական հետազոտությունների մեթոդիկա» առարկայի աշխատանքային ծրագիր:

Թերապիայի ամբիոնի վարիչի ձեռնարկը՝ բ.գ.դ. պրոֆ. Ա.Վ. Աստվածատրյանի «Սրտամկանի սուր իշեմիա և հարակից պաթոլոգիաները» թվարկված է «Ներքին հիվանդություններ» մասնագիտական հիմնական գրականության ցանկում: Իսկ ռազմավարական զարգացման գծով պրոռեկտորի դասագիրքը, բ.գ.թ. Ա.Օ. Միրոնչևի "Topographic and clinical anatomy of the human body. The teaching aid for foreign students" ընդգրկված է «Տոպոգրաֆիական անատոմիա և օպերատիվ վիրաբուժություն» առարկայի լրացուցիչ գրականության ցանկում:

Բացի այդ, մի շարք այլ առարկաների համար ներառված են Համալսարանի

աշխատակազմի համապատասխան հրապարակումները վերջին 5 տարիների ընթացքում, իսկ որոշ առարկաների համար վերանայվել է թեմայի ուսումնասիրման համար հատկացված ժամերի քանակը, որով դասախոսը խորությամբ զբաղվում է: Այսպես, օրինակ, մանրէաբանության դասախոս, բ.գ.թ., դոցենտ Ա.Գ. Սուքիասյանը մասնակցում է լեյշմանիոզի ուսումնասիրության դրամաշնորհային ծրագրին: Այս առումով տվյալ թեման ներառվել է «Մանրէաբանություն» առարկայի մեջ, իսկ դասախոսի հրապարակումները նշված են այդ առարկայի լրացուցիչ գրականության ցանկում: Anna Sukiasyan, Ara Keshishyan, Dezdemonia Manukyan, Gayane Melik-Andreasyan, Liana Atshemyan, Hripsime Apresyan, Margarita Strelkova, Marcus Frohme, Sofia Cortes, Katrin Kuhls. Re-Emerging Foci of Visceral Leishmaniasis in Armenia – First Molecular Diagnosis of Clinical Samples. Cambridge University Press 2019: doi.org/10.1017/S0031182019000064. ISSN: 0031-1820 (Print), 1469-8161 (Online). ՄԳՀ-ի դասախոսների հրապարակումներն արտացոլված են նաև այնպիսի առարկաների ցանկում, ինչպիսիք են՝ «Ընդհանուր քիմիա», «Օրգանական քիմիա», «Հյուսվածաբանություն», «Բջջաբանություն», «Սաղմնաբանություն», «Ճառագայթային ախտորոշում», «Ուռուցքաբանություն», «Արյունաբանություն», «Թերապիա», «Ռազմադաշտային բժշկություն»: Այս գիտական աշխատանքների կատարման ընթացքում ձեռք բերված բոլոր տվյալները դասախոսների կողմից օգտագործվում են գործնական պարապմունքներ անցկացնելու և այս առարկաների դասընթացները վարելու համար:

Ելնելով այն հանգամանքից, որ ՄԳՀ-ի հետազոտական կենտրոնը ձևավորվել է վերջերս, անհրաժեշտ է առաջիկա 5 տարիների համար ձևավորել տարբեր գիտական ոլորտների զարգացման հստակ ռազմավարություն: Դա հնարավորություն կտա ակտիվացնել ուսանողական գիտական գործունեությունը, գիտական կոչումներ ստանալու հնարավորությունը, վերականգնել հրատարակչական գործունեությունը և մեծացնել դասախոսական կազմի և ուսանողների մասնակցությունը գիտաժողովներին, գիտագործնական այլ միջոցառումներին: ՄԳՀ-ի աշխատակիցների դրամաշնորհային գործունեությունը զարգացնելու նպատակով 2022 թվականին Համալսարանը գրանցվել է Erasmus + ծրագրում, որը հնարավորություն է ընձեռում մասնակցել տարբեր միջազգային դրամաշնորհային ծրագրերի:

**ՉԱՓՈՂՈՇԻՉ Բ.** ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հիմքեր	<p><u>ՈԱԶ- 00/02 «Մխիթար Գոշ» համալսարանի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան,</u></p> <p><u>ՈԱԶ- 03/01 ՄԳՀ-ի գիտական, ուսումնական, ուսումնամեթոդական գրականության հրատարակման կարգ.</u></p> <p><u>ՈԱԶ- 03/12 ՄԳՀ-ի 2022-2023թթ. գիտահետազոտական գործունեության ռազմավարական պլան,</u></p> <p><u>ՈԱԶ-01/14 «Մխիթար Գոշ» համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման, պաշտպանության և գնահատման կարգ.</u></p>
--------	--

*Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերի իրականացման արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՄԳՀ-ի 2022-2025 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում արտացոլվում է դասախոսական կազմի և ՈՒԳԸ այս ժամանակահատվածի գիտական աշխատանքը: Այսպես, Ռազմավարական ծրագրի 6-րդ կետում ասվում է.

*«ընդլայնել շահակիցների ներգրավվածությունը Համալսարանի կրթական, հետազոտական, հանրային գործունեությանը, բարձրացնել ուսանողական ինքնակառավարման մարմինների, կարիերայի կենտրոնի, շրջանավարտների միության ներգրավվածությունը հաստատության առջև կանգնած խնդիրների լուծման աշխատանքներում»,* իսկ 6.1. կետը խոսում է ՈՒԳԸ-ի և ուս.խորհրդի ակտիվ գործունեության խրախուսման, կրթական գործունեության մասին տեղեկացվածության մակարդակի բարձրացման, Համալսարանում իրագործվող կրթական բարեփոխումներում նրանց մասնակցության բարձրացման մասին: Գիտահետազոտական գործունեության վերաբերյալ ռազմավարական ծրագրի 7-րդ կետում ասվում է՝ *«Խթանել հետազոտական և ստեղծագործական գործունեությունը, նպաստել ՀՀ և արտերկրի առաջավոր գիտական կենտրոնների հետ համագործակցային-գործընկերային կապերի ձևավորմանն ու զարգացմանը»:*

Ռազմավարական ծրագիրն արտացոլում է բժշկության, իրավունքի, մանկավարժության, կառավարման և տնտեսագիտության տեսական և գործնական ոլորտներում Համալսարանի գիտական և ստեղծագործական գործունեության միջառարկայական և համագործակցային ուղղվածությունը զարգացնելու անհրաժեշտությունը.

- խրախուսել նոր գիտելիքների ձևավորումը հետազոտությունների միջոցով և դրանց կիրառումը կրթական գործընթացում,
- բարելավել գիտական հետազոտությունների արդյունավետությունը,
- ակտիվացնել հրատարակչական գործունեության իրականացումը,
- մշակել և ներդնել ՊԴ կազմի գիտահետազոտական գործունեության արդյունավետության գնահատման ցուցիչներ (դրա համար ՄԳՀ-ն մշակել է դասախոսական կազմի վարկանիշավորման ծրագիր, որը նախատեսվում է ներդնել նոր ուսումնական տարվանից) և այլն:

Ելնելով գիտահետազոտական գործունեության զարգացման ռազմավարությունից՝ մշակվել է ՄԳՀ-ի 2022-2025թթ. գիտահետազոտական գործունեության կարճաժամկետ պլանը:

Դասախոսների, երիտասարդ գիտնականների և ուսանողների գիտական աշխատանքները տպագրության ներկայացնելու մեթոդաբանությունը և կարգը սահմանված է ՈԱԶ- 03/01 ՄԳՀ գիտական, ուսումնական, ուսումնամեթոդական գրականության հրատարակման կարգում:

Սա արտացոլում է Համալսարանի մտադրությունը հետազոտական գործունեության համար հստակ ռազմավարություն մշակելու և կառուցելու անհրաժեշտության մասին:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ գ.** ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Հիմքեր	<p><u>ՈԱԶ- 00/01 ՄԳՀ-ի կանոնադրություն,</u></p> <p><u>ՈԱԶ-00/02 ՄԳՀ-ի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան,</u></p> <p><u>ՈԱԶ-03/12 ՄԳՀ-ի 2022-2025թթ. գիտահետազոտական գործունեության ռազմավարական պլան,</u></p> <p><u>ՈԱԶ-03/04 ՄԳՀ-ի գիտահետազոտական կենտրոնի կանոնակարգ,</u></p> <p><u>ՈԱԶ-03/01 ՄԳՀ-ի գիտական, ուսումնական, ուսումնամեթոդական գրականության հրատարակման կարգ,</u></p> <p><u>ՈԱԶ-00/12 ՄԳՀ-ի էթիկայի և բժշկական դեոնոլոգիայի կանոններ,</u></p> <p><u>ՈԱԶ- 00/12a ՄԳՀ-ի ակադեմիական ազնվության քաղաքականություն,</u></p> <p><u>ՈԱԶ-00/13 ՄԳՀ-ի էթիկայի ու բժշկական դեոնոլոգիայի, ակադեմիական ազնվության, կոռուպցիոն ռիսկերի հարցերի հանձնաժողովի կանոնակարգ:</u></p>
--------	--

*Վերլուծել ՄՈՒՀ-ում հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Հետազոտական աշխատանքների արդյունքները, նախագծերը քննարկվում են ֆակուլտետային խորհուրդների, ՈՒԳԸ խորհուրդների նիստերում: Նախնական վերանայումից հետո աշխատանքները ներկայացվում են տարբեր ուսանողական գիտահետազոտական կոնֆերանսներում և հրապարակվում են թեզիսներ այդ աշխատանքների վերաբերյալ:

ՄԳՀ-ում հետազոտական աշխատանքը համապատասխանում է Համալսարանի գիտահետազոտական ոլորտում զարգացման ռազմավարական ծրագրին, մասնավորապես հետևյալ կետերին.

- կատարված հետազոտական աշխատանքների ծավալի ավելացում,
- գիտության առաջնահերթ ոլորտների խթանում՝ դրանք գործնականում ներդնելու նպատակով,
- հետազոտական աշխատանքում ներգրավված ուսանողների թվի ավելացում,
- ուսանողներին ուսումնական և հետազոտական գործունեությանը նախապատրաստում:

Համալսարանը պայմաններ է ստեղծում ՊԴ կազմի գիտական գործունեության համար: Վերջին տարիներին Համալսարանի լաբորատորիաները թարմացվել են՝ նոր սարքավորումներ են ձեռք բերվել քիմիայի, կենսաքիմիայի, մանրէաբանության լաբորատորիաների համար: Փորձերի ռեակտիվները պարբերաբար ձեռք են բերվում, գրադարանի ֆոնդը թարմացվում է: Կնքվել է պայմանագիր EBS «Student Consultant» GEOTAR MEDIA-ի հետ, որի տեղեկատվական շտեմարանները պարունակում են անհրաժեշտ ինչպես կրթական, այնպես էլ գիտական գրականություն:

Բանակցություններ են ընթանում «Հայաստանում Ռուսական տարածաշրջանային

ակադեմիա» հիմնադրամի հետ համաձայնագիր կնքելու համար, որի նպատակն է՝ նպաստել ինովացիոն գործունեության, ակադեմիական շարժունության, համատեղ գիտական հետազոտությունների, ինստիտուցիոնալ զարգացման ոլորտներում համագործակցության ամրապնդմանը: Այն նախատեսում է նաև համագործակցություն հետևյալ ուղղություններով.

- համատեղ գիտահետազոտական ծրագրերի մշակում և իրականացում,
- նորարարական գործունեության համատեղ իրականացում,
- վերապատրաստումների կազմակերպում և անցկացում, կողմերի ներկայացուցիչների պատվիրակությունների փոխանակում,
- կողմերի կադրերի վերապատրաստման, որակավորման բարձրացման համատեղ նախագծերի կազմակերպում,
- համատեղ մասնակցություն սեմինարներին, գիտաժողովներին, ֆորումներին և ուսումնական ու գիտական այլ միջոցառումներին,
- աջակցություն ակադեմիական և գիտական համագործակցությանը,
- արդյունաբերական ձեռնարկությունների, հիմնադրամների, բիզնես կառույցների, պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կառույցների հետ համագործակցության զարգացում՝ նորարարական գործունեության զարգացմանը նպաստելու խնդիրների համատեղ լուծման նպատակով:

Գիտահետազոտական կենտրոնի ստեղծումը ենթադրում է ուսանողական շրջանակների ակտիվ ներգրավվածություն գիտական աշխատանքներում: Այս պահին գործում են ուսանողական խմբեր՝ կենսաբժշկական առարկաների, ախտորոշիչ թերապիայի ամբիոնների դասախոսների ղեկավարությամբ: Ունենք հազվագյուտ կլինիկական դեպքերի վերլուծությանը, օրթոպեդիկ վիրահատությունների մասնակցող կամավոր ուսանողներ: Ուսանողները մասնակցում են նաև արյան հիվանդություններով հիվանդների տվյալների վիճակագրական մշակմանը կենսաբժշկական առարկաների ամբիոնի վարիչի ղեկավարությամբ: Կատարված աշխատանքների արդյունքների մասին զեկուցվել են ՈԻԳԸ նիստերում, ուսանողների և երիտասարդ գիտնականների գիտաժողովներում: 2023 թվականին գիտահետազոտական կենտրոնի և «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդեսի աշխատանքը վերականգնվել է թարմացված խմբագրությամբ: Երիտասարդ գիտնականներին մոտիվացնելու նպատակով Համալսարանը ստեղծել է դասախոսի վարկանիշավորման կանոնակարգ, որը նախատեսվում է իրականացնել 2023-2024 ուս. տարում:

Նման քաղաքականության իրականացումը ենթադրում է գիտական գործունեությամբ զբաղվող երիտասարդ մասնագետների խրախուսում, վարձատրության միջոցով մոտիվացիա և կարիերայի աճի առաջարկներ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Պ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:**

Հիմքեր	<p><u>ՈԱԶ- 03/12 ՄԳՀ-ի 2022-2025թթ. գիտահետազոտական գործունեության ռազմավարական պլան,</u></p> <p><u>ՈԱԶ- 03/04 ՄԳՀ-ի գիտահետազոտական կենտրոնի կանոնակարգ,</u></p> <p><u>ՈԱԶ- 03/05 ՄԳՀ-ի ուսանողական գիտական ընկերության կանոնադրություն,</u></p> <p><u>ՈԱԶ-01/14 ՄԳՀ-ի մագիստրոսական թեզի պատրաստման, պաշտպանության և</u></p>
--------	--

	<u>գնահատման կարգ,</u> <u>ՈԱԶ- 03/04 ՄԳՀ-ի գիտահետազոտական կենտրոնի կանոնակարգ,</u> <u>ՈԱԶ- 03/01 ՄԳՀ-ի գիտական, ուսումնական, ուսումնամեթոդական</u> <u>գրականության հրատարակման կարգ:</u>					
ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ						
	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	2020	2021	2022	2023
1	«Բնական և տեխնիկական գիտությունները ժամանակակից աշխարհում», կենսաբանական գիտություններ, թողարկում 2, Մոսկվա, ՌԴ		1			
2	Сб.мат. рос.форума по тромбозу и гемостазу совместно с 10-й конф.по клинической гемостаз.и гемореол., Москва, ՌԴ		1			
3	<i>Russ. J. Org. Chem., 56, N 8,</i> doi.org/10.1134/S1070428020080229, ՌԴ		1			
4	Научный журнал “Интернаука” 4 (1), часть 3., ՌԴ			1		
Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը						
	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	2020	2021	2022	2023
1.	Austrian Journal of Technical and Natural Sciences № 5–6 2020 May – June, pp. 3-7, Ավստրիա:	Impact Factor	1			
2.	HemaSphere, The Official Journal of the European Hematology Association, Նիդեռլանդներ	Impact Factor		5	7	
3.	Research and Practice in Thrombosis and Haemostasis	Impact Factor	2	5	7	
4.	Open Journal of Epidemiology, 2020, N10 (4), p. 355-368, ԱՄՆ	Impact Factor	2			
5.	Agronomy Research, ԱՄՆ	-			1	
6.	German International Journal of Modern Science №8, 2021 // Deutsche international Zeitschrift für zeitgenössische Wissenschaft, №8 2021, vol. 2, ISSN (print) 2701-9369, ISSN (online) 2701-8377, DOI: 10.24412/2201-8369-2021-8-2-9-10, p.9-10, Գերմանիա:			1		

7.	The European Journal of Biomedical & Life Sciences, Ավստրիա		1	1		
8.	International Electronic Scientific and Practical Journal “Way Science” (ISSN 2664-4819 (Online)), part 1, Ուկրաինա			1		
9.	Journal of science. Lyon, ISSN 3475-3281, p. 3-6, Ֆրանսիա	Impact Factor		1		
10.	«Евразийское Научное Объединение», Биологические науки, ՌԴ		1			
11.	J. Basic Microbiol. .doi: 10.1002/jobm.201900439., Գերմանիա	Impact Factor	1			
12.	«European science review» <a href="http://globalimpactfactor.com/the-european-science-review/">http://globalimpactfactor.com/the-european-science-review/</a> , Հունաստան		1			
13.	European Heart Journal Supplements (Supplement B), B15–B17	Impact Factor		2		
14.	Cambridge University Press doi.org/10.1017/S0031182019000064. ISSN: 0031-1820 (Print), 1469-8161 (Online), Մեծ Բրիտանիա					
15.	«Միոն», պաշտոնաթերթ, Երուսաղեմ, Իսրայել:				1	
16.	Asian Journal of Psychiatry, Asian Journal of Psychiatry 66(389):102862.- 10.1016/j.ajp..102862	Impact Factor		1		
17.	Immunobiology, Issue 2, 152349, ԱՄՆ					1
18.	European Psychiatry, 65(1), E75. doi:10.1192/j.eurpsy., Մեծ Բրիտանիա	Impact Factor			1	1
19.	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	2020	2021	2022	2023
<b>ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկի</b>						
	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	2020	2021	2022	2023
1	НПУА вестник сборник научных статей часть II, химические и природоохранные технологии, ՌԴ	Impact factor		1	1	
2	ՀԱՊՀ Լրաբեր Գիտական Հոդվածների Ժողովածու, մաս II, Հայաստան:				1	
3	Bulletin of High Technology, Republic of Artsakh, Արցախի Հանրապետություն:			1		
4	BIOTECHNOLOGY: Science and Practice.			1		



	Innovation and Business», Հայաստան:					
5	Интернаука: электрон. научн. журн.		1			
6	Bulletin Of High Technology, Agriculture, STEPANAKERT, Արցախի Հանրապետություն:			1		
7	The New Armenian Medical Journal, Vol.15 (2021), No 1, p. 91-94, Հայաստան:			1		
8	Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ գիտական հանդես, Հայաստան:	-	2			
9	Хим. ж. Армении, Chem. J. of Armenia, 2019, vol, Հայաստան:		2			
10	Armenian Journal of Special Education, Հայաստան:				2	
11	«Հայագիտության հարցեր», հանդես, Հայաստան:		1			
12	Armenian Experience. Medical World, Հայաստան:		1			

*Վերլուծել ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականության արդյունավետությունը և վերջին հինգ տարիների նվաճումները / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Համալսարանի աշխատակիցների վերջին 5 տարիների համապատասխան հրապարակումները ներառված են դասավանդման որոշ ծրագրերում, իսկ որոշ առարկաներում վերանայվել և ավելացվել է թեմայի ուսումնասիրման համար հատկացված ժամերի քանակը, որը դասախոսը խորությամբ ուսումնասիրում է: Այսպես, օրինակ, մանրէաբանության դասախոս, կ.գ.թ., դոց. Ա.Գ. Սուքիասյանը մասնակցում է լեյշմանիոզի ուսումնասիրության դրամաշնորհային ծրագրին: Այդ կապակցությամբ այս թեման ներառվել է «Մանրէաբանություն» առարկայի մեջ, իսկ դասախոսի հրապարակումները նշված են այս առարկայի լրացուցիչ գրականության ցանկում: Anna Sukiasyan, Ara Keshishyan, Dezdemonia Manukyan, Gayane Melik-Andreasyan, Liana Atshemyan, Hripsime Apresyan, Margarita Strelkova, Marcus Frohme, Sofia Cortes, Katrin Kuhls. Re-Emerging Foci of Visceral Leishmaniasis in Armenia – First Molecular Diagnosis of Clinical Samples. Cambridge University Press 2019: doi.org/10.1017/S0031182019000064. ISSN: 0031-1820 (Print), 1469-8161 (Online).

Թերապիայի ամբիոնի վարիչի ձեռնարկ բ.գ.դ. պրոֆ. Ա.Վ. Աստվածատրյանի «Սրտամկանի սուր իշեմիա և հարակից պաթոլոգիաները» թվարկված է «Ներքին հիվանդություններ» մասնագիտական հիմնական գրականության ցանկում: Իսկ ռազմավարական զարգացման գծով պրոռեկտորի դասագիրքը, բ.գ.թ. Ա.Օ. Միրոնյանի "Topographic and clinical anatomy of the human body. The teaching aid for foreign students" ընդգրկված «Տեղագրական անատոմիա և օպերատիվ վիրաբուժություն» առարկայի լրացուցիչ

գրականության ցանկում:

«Endoscopic method of the surgical treatment of the frontal sinus pathologies as a choice of modern approach» միջազգային կոնֆերանսում «Modern science. Management and standards of scientific research II» զեկույցով հանդես է եկել բժշկական մասնագիտությունների և գիտական գործունեության գծով պրոռեկտորը( կազմակերպված է AC Institute of International Education, Prague Czech Republic 2020թ. նոյեմբերի 17-18): Հետագայում այս աշխատանքի արդյունքները հիմք հանդիսացան ուսումնական նյութերի մշակման, ինչպես նաև քիթ-կոկորդ-ականջաբանության ոլորտում ուսանողների ուսուցման գործընթացում օգտագործվող կլինիկական արձանագրությունների մշակման և օպտիմալացման համար:

Սոցիալական և հումանիտար առարկաների ամբիոնի փիլիսոփայության դասախոսը ներկայացրել է «Երեք երեցների 150-ամյակը: Մահաթմա Գանդի, Հովհաննես Թումանյան, Կոմիտաս», «Մահաթմա Գանդիի ուղին. Հայաստանը դեպի խաղաղություն և ոչ բռնություն» գիրքը(որի հրապարակումը կազմակերպել են Գանդի Սմրիտին և Դելիի հայկական մշակութային կենտրոնը, 10 փետրվարի, 2020 թ.):

ՄԳՀ-ի դասախոսների հրապարակումները արտացոլված են նաև այնպիսի առարկաների գրականության ցանկում, ինչպիսիք են՝ «Ընդհանուր քիմիա», «Օրգանական քիմիա», «Հյուսվածաբանություն», «Բջջաբանություն», «Մաղմնաբանություն», «Ճառագայթային ախտորոշում», «Ուռուցքաբանություն», «Արյունաբանություն», «Թերապիա, «Ռազմադաշտային բժշկություն»: Այս գիտական աշխատանքների կատարման ընթացքում ձեռք բերված բոլոր տվյալները դասախոսների կողմից օգտագործվում են գործնական պարապմունքներ անցկացնելու և այդ առարկաների դասախոսության ժամանակ:

Հիմնվելով Ընտանեկան բժշկության կենտրոնի ղեկավարի CLINIC International Society for Quality in Health Care (ISQua) «Pioneer locally built integrated care pathway improves care for patients with Ischemic heart disease in an armenian primary health care» ISQUA2023-ABS-2726 աշխատանքի վրա, մշակվել է «Սրտի կորոնար հիվանդության բուժման միջազգային ստանդարտների տեղայնացում» փաստաթուղթը: Վերջինս օգտագործվում է որպես ընտանեկան բժշկի ուղեցույց «Ընտանեկան բժշկություն և պոլիկլինիկական բիզնես» առարկայի գործնական պարապմունքների ժամանակ:

**ՉԱՓՈՂՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:**

Հիմքեր	<p><u>ՈԱԶ-00/02 ՄԳՀ-ի գարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան,</u></p> <p><u>ՈԱԶ-03/04 ՄԳՀ-ի գիտահետազոտական կենտրոնի կանոնակարգ,</u></p> <p><u>ՈԱԶ- 03/05 ՄԳՀ-ի ուսանողական գիտական ընկերության կանոնադրություն,</u></p> <p><u>ՈԱԶ-02/05 ՄԳՀ-ի հարցումների անցկացման կարգ,</u></p> <p><u>ՈԱԶ-01/23 ՄԳՀ-ի կրթական գործընթացի արդյունավետության գնահատման, մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման ու վերանայման մեխանիզմներ և ընթացակարգ,</u></p> <p><u>ՈԱԶ-02/03 ՄԳՀ-ի հարցաշարերը,</u></p> <p><u>ՈԱԶ-03/12 ՄԳՀ-ի 2022-2025թթ. գիտահետազոտական գործունեության ռազմավարական պլան:</u></p>
--------	---

	%
Պատասխանել հետևյալ հարցերին: Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	63
Դասավանդողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	55
Գործատուների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	-

*Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Գիտական հետազոտությունների արդյունքները ներդրվում են ինչպես համալսարանական ամբիոնների ուսումնական գործընթացում, այնպես էլ բժշկական աշխատանքի մեջ: Դրանք հիմք են հանդիսանում ուսումնական նյութերի մշակման, ինչպես նաև տարբեր առարկաների ուսանողների ուսուցման գործընթացում օգտագործվող կլինիկական արձանագրությունների մշակման և օպտիմալացման համար: Այսպես, քթի և հարքթային ծոցերի ախտորոշման և նվազագույն ինվազիվ էնդոսկոպիկ վիրաբուժության ժամանակակից տեխնոլոգիաները ներդրվել են քիթ-կոկորդ-ականջաբանությունն առարկայի ուսումնական ծրագրում:

ՄԳՀ-ն ունի հետազոտական ներուժ վերապատրաստման հիմնական ոլորտներում՝ սկսած հիվանդությունների մոլեկուլային և գենետիկական ուսումնասիրությունից, նախակլինիկական և համաճարակաբանական ուսումնասիրություններից՝ բուժման գործընթացի նոր մեթոդների և ռազմավարությունների գնահատմամբ: Դա ապահովվում է Մնջոյանի անվան կենսաքիմիայի գիտահետազոտական կենտրոնի և Երևանի Գենետիկայի կենտրոնի հետ համատեղ աշխատանքային պայմանագրի առկայությամբ:

Վերջերս վերանայվել է միասնական ֆակուլտետի ռազմավարական ծրագիրը, որտեղ այլ ոլորտների հետ մեկտեղ նախատեսվում է գիտական ուղղության մշակում: «Հայաստանում Ռուսաստանի տարածաշրջանային ակադեմիա» հիմնադրամի հետ համաձայնագիր է պատրաստվել, որը նոր հնարավորություններ է բացում այս ոլորտում:

Ուսանողների ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներին Համալսարանի կարևոր պահանջն է: Ուսման առաջին իսկ տարիներից ուսանողներին ծանոթանում են հետազոտության տարբեր մեթոդների՝ գենետիկ, կենսաքիմիական, հիստոքիմիական, կազմաբանական, իմունոլոգիական, ֆիզիոլոգիական, ինչպես նաև գիտական բժշկական գրականության տվյալների քննադատական գնահատման մեթոդաբանությանը: Ուսանողները մասնակցում են հետազոտական աշխատանքներին՝ այցելելով Համալսարանի բոլոր ամբիոններում ստեղծված գիտական խմբակներ, որտեղ պայմաններ են ստեղծվում նրանց հետազոտական հմտությունները զարգացնելու համար:

Այսպես, "Psychological and sociocultural adaptation of medical university international students in Armenia" Volume 13 - Issue 2 (November 2022) of GSC Advanced Research and Reviews (GSCARR) թեմայով հետազոտական նախագծի առաջին փուլն ավարտվեց գիտական հոդվածի տպագրմամբ կենսաբժշկական գիտությունների ամբիոնի վարիչի ղեկավարությամբ:

Ուսանողները միաժամանակ տիրապետում են գիտական հետազոտության մեթոդներին, սովորում են ապացույցների վրա հիմնված բժշկության մեթոդները: Օրինակ, ՄԳՀ-ի գիտահետազոտական կենտրոնի հիման վրա ՈՒԳԸ անդամները դասախոսների ղեկավարությամբ աշխատում են «Մարմնի զանգվածի գործակցի կախվածությունը անպտղությամբ տառապող կանանց մարմնի հորմոնալ կարգա-

վիճակից. արյան չափված պարամետրերի հարաբերակցության վերլուծություն» նախագծերի վրա:

Այլ ՄԿԾ-երի ուսումնական պլանները նաև նախատեսում են առարկաներ, ներառյալ ընտրովի, որոնք ուսումնասիրելով ուսանողները ձեռք են բերում գիտելիք և հմտություններ հետազոտական գործունեության մեջ:

Երևանի և Վանաձորի միացյալ ֆակուլտետներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքն իրականացվում է մագիստրոսական թեզերի տեսքով:

Ուսանողները վերլուծում են կլինիկական դեպքեր, կոնկրետ իրավիճակային առաջադրանքներ՝ ապացույցների վրա հիմնված բժշկության ասպեկտներով: Այդ նպատակով ուսանողական գիտական ընկերությունն աշխատում է «Comparative study of patients with Covid-19 and Covid-19 patients with history of Tuberculosis in India» նախագծի վրա: Կազմակերպվում են ներբուհական ուսանողական կոնֆերանսներ, օլիմպիադաներ, սեմինարներ, կլոր սեղաններ՝ ուսանողների կարողությունները հետազոտության արդյունքների քանակական և որակական գնահատման և բժշկական պրակտիկայում ստացված տվյալների օգտագործման ուսանողների կարողությունները զարգացնելու համար (<https://www.mkhitargosh.am/ru/конференции--гранты-и-конкурсы.html>):

Առողջապահության և բժշկական գիտությունների տարբեր ոլորտներում ժամանակակից գիտական հետազոտությունների արդյունքները ներառված են գիտակարգերի աշխատանքային ծրագրերում, որոնք, ի թիվս այլի, արտացոլված են կլինիկական ուղեցույցներում և խնամքի չափանիշներում:

Այսպես, «Օտորինոլարինգոլոգիա» առարկայի ծրագիրը ներառում է քիթ-կոկորդ-ականջ օրգանների ժամանակակից ախտորոշիչ գործիքների ուսումնասիրություն՝ մանրադիտակ, ֆիբրոսկոպիա, էնդոսկոպիա, ստորոբուկոպիա և այլն:

Աշխատանքային ծրագրերը թարմացնելիս հատուկ ուշադրություն է դարձվում շրջանավարտների հմտությունների և կարողությունների ցանկը բժշկական օգնության տրամադրման կլինիկական արձանագրություններին, ընթացակարգերին և չափորոշիչներին մոտեցնելուն:

Ուսանողները, դասախոսի հսկողության ներքո, մշակել և ներկայացրել են կլինիկական դեպքեր One-step repair of bilateral pectoralis major muscles rupture/ complete tear/ tendon avulsion of the humerus ուսանողների և երիտասարդ գիտնականների գիտական համաժողովում 2023թ. նվիրված հազվագյուտ հիվանդությունների միջազգային օրվան (22.04.2023թ.):

Համալսարանը խթանում է ուսանողների նախապատրաստումը բժշկության ոլորտում գիտական հետազոտությունների մասնակցության և պլանավորման համար: Ուսանողների մասնակցությունը գիտական հետազոտություններին սկսվում է ուսումնառության I կուրսից: Գիտական հետազոտություններ պլանավորելու և վարելու, ստացված տվյալների վերլուծության և ներկայացման կարողությունները զարգացվում են ամբիոնների գիտական խմբակների, ուսանողների, երիտասարդ գիտնականների տարբեր գիտական և գործնական կոնֆերանսներում բանավոր և ցուցադրական (պաստառային) զեկույցներին մասնակցելու, շնորհանդեսների և հրապարակումների միջոցով:

Այսպիսով, 2022-2023թթ. առաջին անգամ Համալսարանի բժշկական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողն արժանացավ ուսանողների և երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողովին մասնակցելու դրամաշնորհի, ով փայլուն կերպով ներկայացրեց «Հիվանդությունը ոչ Հոջկինյան լիմֆոմաները Հայաստանում 2017-2021թթ.»։ Յուրյանի անվ. Արյունաբանության ազգային ինստիտուտի կողմից կազմակերպված հեմոֆիլիայի միջազգային օրվան նվիրված գիտաժողովում ՄԳՀ-ի 3-րդ կուրսի ուսանողները հանդես եկան «Coagulopathies», «Hemophilia» զեկույցներով՝ կենսաբժշկական առարկաների ամբիոնի վարիչ Լ. Սահակյան ղեկավարությամբ։

Ուսումնառության ողջ ընթացքում ուսանողների մեջ սերմանվում են գիտական մեթոդաբանության սկզբունքները, վերլուծական և քննադատական մտածողության մեթոդները, որոնք ներառված են հիմնական առարկաների, հատուկ դասընթացների և ընտրովի կրթաբլոկի դասընթացների ծրագրերում։ Մասնավորապես, ուսումնական պլաններում ներդրվել են գիտահետազոտական մեթոդիկային, բժշկական գիտությանը և կրթության ժամանակակից հիմնախնդիրներին նվիրված դասընթացներ։ Արդյունքում ուսանողները միաժամանակ տիրապետում են գիտական հետազոտության մեթոդներին, յուրացնում են ապացույցների վրա հիմնված բժշկության մեթոդները։

*Վերլուծել Չափանիշ 6-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները։*

*Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները։*

Ուժեղ կողմեր.

- ՊԴ կազմը տպագրում է սեփական գիտական աշխատանքները Impact factor-ով միջազգային ամսագրերում։
- Դասախոսները գիտական մենթորություն են իրականացնում ուսանողների նկատմամբ և, որպես ՌԻԳԸ-ի աշխատանքի մի մաս, իրականացնում են հետազոտական նախագծեր՝ դրանով իսկ մասնակցելով գիտահետազոտական ոլորտում հմտությունների ձևավորմանը։
- Համալսարանում ստեղծվել է գիտահետազոտական կենտրոն, ձևավորվել է Համալսարանի հետազոտական ռազմավարության ծրագիրը,
- Պայմանագիր է կնքվել «Հայաստանում Ռուսաստանի տարածաշրջանային ակադեմիա» հիմնադրամի հետ։
- Առկա է պայմանագիր ՀՀ ԳԱԱ օրգանական և դեագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի Ա.Լ. Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի հետ։

#### Թուլ կողմեր

- ՊԴ կազմի ոչ բավարար մոտիվացվածությունը:
- ՄԳՀ «Մխիթար Գոշ» գիտամեթոդական ամսագրի թողարկման կասեցումը:
- Փորձերի անցկացման համար սեփական վիվարիումի բացակայություն:

#### Հնարավորություններ

1. Գիտահետազոտական ինստիտուտների հետ պայմանագրերի կնքում:
2. Մասնակցություն դրամաշնորհային ծրագրերին, ներառյալ Էրազմուս+:
3. «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդեսի հրատարակության վերականգնում:
4. Դասախոսական կազմի մասնագիտական հետաքրքրություններին համապատասխան ամբիոնների գիտահետազոտական գործունեության ռազմավարությունների ձևավորում:

#### Վտանգներ

1. Ուսանողների գիտության բացակայությունը՝ դասախոսական կազմի ցածր մոտիվացիան պահպանվելու դեպքում՝ իրականացնելու իրենց հետազոտությունները:

Թույլ կողմերը և վտանգները վերացնելու միջոցառումներ.

- Միջազգային դրամաշնորհներին մասնակցելու նպատակով, մասնավորապես, ՄԳՀ-ն անցել է Էրազմուս+ ծրագրում գրանցման ընթացակարգը: Անհրաժեշտ է ընտրել գործընկեր համալսարաններ, որոնց հետ պետք է ներկայացնել մասնակցության հայտ:
- «Մխիթար Գոշ» ամսագրի վերականգնման համար արդեն նշանակվել են խմբագրական-հրատարակչական խորհրդի անդամներ: Գիտխորհրդում հաստատվել է կազմը և գրություն ուղարկվել Բարձրագույն որակավորման հանձնաժողովին՝ ամսագրի վերաթողարկման վերաբերյալ:
- Դասախոսական կազմի գործունեության վարկանիշային գնահատման ներդրում՝ տարբերակված վարձատրությամբ: Մա կբարձրացնի դասախոսական կազմի մոտիվացիան ակտիվ հետազոտական աշխատանքի համար, ներառյալ ուսանողներին այս աշխատանքում ներգրավելու համար:
  - Գիտական աշխատանքի միջգերատեսչական վեկտորի ձևավորում, որն արտացոլված է ՄԳՀ-ի հետազոտական գործունեության ռազմավարության մեջ:

**VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

**ՉԱՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար:

*Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:*

Համալսարանի ենթակառուցվածքը վերջին մի քանի տարիների ընթացքում զգալի փոփոխություններ է կրել, ինչը հնարավորություն է տվել բավարարել կրթական գործընթացի ժամանակակից պահանջներն ու միտումները և շահագրգիռ անձանց տրամադրել մի շարք սոցիալական ռեսուրսներ: Այսպիսով, ՄԳՀ-ը ձգտում է իրականացնել իր ռազմավարական ծրագիրը, որն ընդգծում է Համալսարանի ռեսուրսային բազայի զարգացման և կրթական և գիտական գործունեության իրականացման համար ժամանակակից պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունը: Այդ նպատակով ձևավորվել են իրականացման համար անհրաժեշտ մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ Համալսարանի տարածքային հնարավորությունների ընդլայնումից, ՄԳՀ-ի համակարգչային բազայի, գրադարանային ֆոնդի, լաբորատոր ֆոնդի թարմացումից մինչև սիմուլյացիոն կենտրոնի համալրում, զարգացում և ներդրում, ռեսուրսների խնայողության քաղաքականություն և առկա հնարավորությունների արդյունավետ օգտագործում:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.** ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Հիմքեր	<p>ՈԱԶ-00/01 ՄԳՀ-ի կանոնադրություն,</p> <p>ՈԱԶ-00/02 ՄԳՀ-ի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան,</p> <p>ՈԱԶ-03/03 ՄԳՀ-ի գրադարանի կանոնադրություն,</p> <p>ՈԱԶ-00/07 ՄԳՀ-ի ռեսուրսախնայողության և առկա միջոցների արդյունավետ օգտագործման քաղաքականություն,</p> <p>Լաբորատորիաների ցանկ՝ իրենց անձնագրերով(ՈԱԶ-01/28-1 ՄԳՀ-ի անատոմիայի և տեղագրական անատոմիայի ուսումնական լաբորատորիայի անձնագիր, ՈԱԶ-01/28-2 ՄԳՀ-ի ուսումնական լաբորատորիայի անձնագիր (կենսաբանություն, հիստոլոգիա, միկրոբիոլոգիա, համաճարակաբանություն, իմունաբանություն, նորմալ ֆիզիոլոգիա, ՈԱԶ-01/28-3 ՄԳՀ-ի բժշկական ֆիզիկայի ուսումնական լաբորատորիայի անձնագիր, ՈԱԶ-01/28-4 ՄԳՀ-ի քիմիայի և բիոքիմիայի ուսումնական լաբորատորիայի անձնագիր)</p> <p>Շինարարական սխեմաներ,</p> <p>ԳԵՈՏԱՐ- մեդիայի հետ պայմանագիր:</p>
Պատասխանել հետևյալ հարցերին:	<b>%</b>
Արդյո՞ք ուսումնառողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	80
Արդյո՞ք դասավանդողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	76



*Վերլուծել ուսումնական ռեսուրսների համապատասխանությունը հաստատության որակավորումների շրջանակի հետ:*

Որակյալ ենթակառուցվածքի ստեղծումը 2021-2025թթ ՄԳՀ-ի ռազմավարական զարգացման ծրագրի նպատակներից մեկն է (ՈԱԶ- 00/02 «Մխիթար Գոշ» համալսարանի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան): Հաշվետվությունը գրելու պահին Համալսարանն ունի 837 ուսանող, կրթական ծրագրերն իրականացվում են 3 մասնաշենքերում՝ 58 դասասենյակներով: Համալսարանի ուսումնական մասնաշենքերը Վանաձորում (Աղյուսակ 1) և Երևանում (Աղյուսակ 2) համապատասխանում են լիցենզավորման պահանջներին:

**Աղյուսակ 1**

Գործունեության վայրը՝ ՀՀ, Լոռու մարզ, ք.Վանաձոր, Տիգրան Մեծ, 30-1/1  
 Շինության տեսակը՝ տիպային  
 Շինարարական իրավունքի տեսակը՝ օգտագործում  
 Շինության ընդհանուր մակերեսը կազմում է 2391.22 քմ, որից.

Անվանումը	Քանակը	Յուրաքանչյուրի տարածքը միջին (մ2)
Լսարան	37	40 (max 72)
Լաբորատորիա	3	22
Առարկայական կաբինետ	4	30
Լաբորատորիա / Արհեստանոց	1	40
Մարզադահլիճ	1	150
Գրադարան	1	38
Ընթերցասրահ	1	59
Համակարգչային լսարան	2	25
Օժանդակ (բակ, դիմացի այգի, պահեստ և այլն)	1	2166

Գործունեության վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Սեբաստիա 3/7  
 Շինության տեսակը՝ տիպային  
 Շինարարական իրավունքի տեսակը՝ օգտագործում  
 Շինության ընդհանուր մակերեսը կազմում է 2192 քմ, որից

Անվանումը	Քանակը	Յուրաքանչյուրի տարածքը միջին (մ2)
Լսարան	21	48 (max 79)
Լաբորատորիա	8	19
Առարկայական կաբինետ	5	25
Արհեստանոց	1	25
Մարզադահլիճ	1	263
Գրադարան	1	18
Ընթերցարահ (համակարգիչներով)	1	45
Համակարգչային լսարան	1	45
Բուֆետ-ճաշարան	1	69
Մարզադաշտ	1	500
Օժանդակ (բակ, դիմացի այգի, պահեստ և այլն)	1	2000

*Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի արդյունավետությունը նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Ամեն տարի Համալսարանի բյուջեից միջոցներ են հատկացվում մասնաշենքերի, լաբորատորիաների և այլ շինությունների վերանորոգման և արդիականացման համար: Արդյունքում ՄԳՀ-ի մասնաշենքերը հագեցված են անհրաժեշտ մակարդակով, այդ թվում՝ հակահրդեհային արձագանքման համակարգ, որը ստեղծվել է 2023 թվականին և փորձարկվել է համապատասխան ծառայությունների կողմից:

ՄԳՀ-ի գրադարանային ֆոնդի համալրումը ՄԳԸ-ի ռազմավարական զարգացման ծրագրով սահմանված խնդիրներից է: Համալսարանի կայքը տրամադրում է տեղեկատվություն ուսումնական գործընթացի գրադարանային աջակցության մասին (<https://www.mkhitargosh.am/ru/library-umg-.html>): Գրադարանային հավաքածուներում կարևոր շեշտադրում է արվում էլեկտրոնային ռեսուրսների վրա:

Այսպիսով, գիտակցելով կադրերի պատրաստման բոլոր ոլորտները ժամանակակից կրթական և գիտական գրականությամբ թարմացնելու անհրաժեշտությունը, որը հասանելի է բոլոր ուսանողներին ոչ միայն բուհի տարածքում կամ տանը՝ թղթային ձևով, այլև յուրաքանչյուր ուսանողի՝ ամենուր՝ ցանկացած թվային սարքից, 2023թ. Համալսարանը պայմանագիր է կնքել GEOTAR-Media «Ուսանողի խորհրդատու» էլեկտրոնային գրադարանային համակարգի (ELS) լիցենզիա գնելու մասին, որն ապահովում է գրքի

մատակարարման 1/100 հարաբերակցությունը: Երևանի և Վանաձորի մասնաշենքերի գրադարաններում յուրաքանչյուր ուսանող ըստ ցանկության ստանում է անհատական «կարֆինետ» ELS-ում: Գրադարանի աշխատանքը կարգավորվում է գրադարանի կանոնադրությամբ (ՈԱԶ-03/03 ՄԳՀ-ի գրադարանի կանոնադրություն): Անգլերեն ուսումնական գրականության ֆոնդը համալրվում է ամեն տարի: Գրադարանի ընթերցասրահներն ամբողջությամբ կահավորված են համակարգիչներով, պատճենահանող և տպագրական սարքավորումներով:

Բոլոր դասասենյակները (լսարանները և լաբորատորիաները) ընդարձակ են և վերանորոգված, հազեցած ժամանակակից պահանջներին համապատասխան: Օրինակ՝ քիմիայի, կենսաքիմիայի, մանրէաբանության, ֆիզիկայի, անատոմիայի լաբորատորիաները համալրված են 27.04.2010 թվականի պետական կրթական չափորոշիչների, « Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի և լաբորատորիաների անձնագրերի համաձայն: Յուրաքանչյուր լաբորատորիա ունի իր սեփական անձնագիրը, որը պարունակում են լաբորատորիայի նյութական բազան, ուսումնական գործընթացի նպատակը և շրջանակը (ՈԱԶ-01/28-1 ՄԳՀ-ի անատոմիայի և տեղագրական անատոմիայի ուսումնական լաբորատորիայի անձնագիր, ՈԱԶ-01/28-2 ՄԳՀ-ի ուսումնական լաբորատորիայի անձնագիր (կենսաբանություն, հիստոլոգիա, միկրոբիոլոգիա, համաճարակաբանություն, իմունաբանություն, նորմալ ֆիզիոլոգիա), ՈԱԶ-01/28-3 ՄԳՀ-ի բժշկական ֆիզիկայի ուսումնական լաբորատորիայի անձնագիր, ՈԱԶ-01/28-4 ՄԳՀ-ի քիմիայի և բիոքիմիայի ուսումնական լաբորատորիայի անձնագիր):

ՄԳՀ-ի լսարաններն ու լաբորատորիաներն ունեն բավարար նյութատեխնիկական բազա: Բոլոր լսարանները հազեցած են անհրաժեշտ ուսումնական կահույքով և անհրաժեշտ համակարգչային տեխնիկայով, այդ թվում՝ մուլտիմեդիա պրոյեկտորներով և գրատախտակներով:

2022/2023 ուսումնական տարում վերազինվել է Համալսարանի սիմուլյացիոն կենտրոնը. ձեռք են բերվել մանկաբարձության և գինեկոլոգիայի, օպերատիվ վիրաբուժության, ուռուցքաբանության, թերապևտիկ և վիրաբուժական հիվանդների խնամքի, ստոմատոլոգիայի սիմուլյատորներ և այլն: :

Սիմուլյացիոն կենտրոնում մարդու անատոմիայի դասեր անցկացնելու համար ձեռք է բերվել ինտերակտիվ անատոմիական սեղան՝ բազմաֆունկցիոնալ 3D անատոմիական սեղանով՝ մարդու անատոմիայով, օրգանների տեղագրությամբ, գործառնական հասանելիությամբ, պաթոլոգիական անատոմիայի հիմունքներով, ՀՏ պատկերների տվյալների բազայով, իրավիճակային առաջադրանքներով և անմիջական փորձարկման հնարավորությունով.

Գործնական ուսուցումը բժշկական աշխատողների վերապատրաստման պարտադիր բաղադրիչն է ընդհանուր և զուտ մասնագիտական կարողությունների զարգացման համար: Ապահովվում է հիվանդների անհրաժեշտ քանակով և կատեգորիաներով՝ կախված բուժհաստատություններից, համապատասխանաբար, ուսումնասիրվող կատեգորիայի մասնագիտացված բաժանմունքներում:

Համալսարանը համագործակցում է ՀՀ առաջատար կլինիկաների հետ՝ «Արմենիա» բժշկական կենտրոն, «Քանաքեռ-Զեյթուն» ծննդատուն, «Կարդիոմեդ» բժշկական կենտրոն, CMS բժշկական կենտրոն, «Մնջոյան», «Գենետիկա», «Իզմիրլյան», «Մեդլայն» բժշկական կենտրոններ,

«Ադեգնակ» ստոմատոլոգիական կլինիկա, «Հոգեկան առողջության պահպանման ազգային կլինիկա», Երևանի «Մեդեսի» ատամնաբուժական կլինիկա, «Մկրտումյան Սուսաննա» ստոմատոլոգիական կլինիկա, թիվ 1 պետական պոլիկլինիկա, Վանաձորի բժշկական կենտրոն, օրգանական քիմիայի գիտահետազոտական ինստիտուտ:

Հումանիտար գիտությունների ոլորտում Համալսարանը համագործակցում է համապատասխան կազմակերպությունների հետ՝ «Տաթև» միջնակարգ դպրոց, Հայրենական ապրանքներ արտադրողների միություն, Վանաձորի քաղաքապետարան, հարկային տեսչություն, թիվ 27 հիմնական դպրոց, H&L Law Group իրավաբանական կլինիկա:

Ուսումնական և արդյունաբերական պրակտիկայի հիմքերն ունեն բոլոր անհրաժեշտ պայմանները, որպեսզի ուսանողները ձեռք բերեն գիտելիքների տեսական և գործնական փորձ: Բոլոր կլինիկական բազաները ունեն համապատասխան հագեցվածություն: Անհրաժեշտության դեպքում Համալսարանը վերազինում է պոլիկլինիկաների դասասենյակները (մուլտիմեդիա պրոյեկտորներ, ուսումնական վահանակներ, գրատախտակներ և կահույք):

Համալսարանն իր ռազմավարությանը համաձայն իրականացնում է դասավանդման համար անհրաժեշտ նյութերի և ռեսուրսների արդիականացման քաղաքականություն՝ համապատասխան ընթացակարգերի միջոցով, կենտրոնանում է մասնագիտական և համակարգչային լաբորատորիաների, գրադարանների, բաժինների և այլ ենթակառուցվածքների արդյունավետ և նպատակային օգտագործման վրա: Բավարար նյութական ռեսուրսներ են հատկացվում դրանց արդիականացման և լիարժեք օգտագործման համար: Նախատեսվում են նոր հաղորդակցական և ֆինանսական հնարավորություններ՝ դրանց շարունակական բարելավման համար:

ՄԳՀ-ում ստացած կրթությամբ շրջանավարտների բավարարվածության հարցումները որակի ներքին ապահովման համակարգի կարևորագույն բաղադրիչներից են: Նրանք նաև գնահատում են ուսումնական միջավայրը՝ ուսումնական տարածքներ, ուսումնական ռեսուրսներ և օժանդակ ծառայություններ:


Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը նույնպես ՄԳՀ-ի վարչակազմի ուշադրության կենտրոնում է: Վերջին տարիներին հատկացվել են զգալի նյութական, ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, ինչի արդյունքում այսօր ՄԳՀ-ի սարքավորումներն իրենց որակական բնութագրերով բավարարում են ներքին շահագրգիռ կողմերի պահանջները:

Համալսարանի ստորաբաժանումներն ունեն իրենց հատկացված էլեկտրոնային հասցեներ, ինչը հնարավորություն է տվել ներդնել էլեկտրոնային փաստաթղթերի կառավարման համակարգ և փոխանակել էլեկտրոնային տեղեկատվություն ստորաբաժանումների միջև: Համալսարանն իր ուսանողներին և դասախոսներին ապահովում է գերարագ ինտերնետով: Ուսանողների հարցումների հիման վրա (ստորև բերված գծապատկերը) բացահայտվել է դժգոհություն WiFi ինտերնետ ցանցի արագությունից, ինչը հիմք է դարձել այս ուսումնական տարում WiFi սարքավորումների կրկնակի բարելավման համար:

Համալսարանի նյութատեխնիկական բազայից ուսանողների բավարարվածության և ուսումնական գործընթացի ապահովման գնահատումն իրականացվում է Որակի ապահովման կենտրոնի կողմից՝ իրականացնելով շահագրգիռ կողմերի հարցումներ, ինչը հնարավորություն է տալիս բացահայտել առկա կարիքները և իրականացնել բարելավման գործընթացներ: Բացի այդ, այս ցուցանիշն արտացոլված է նաև բուհի ենթակառուցվածքից ուսանողների գոհունակության

վերաբերյալ հարցումներում: Հետազոտության որոշ արդյունքներ արտացոլված են ստորև ներկայացված գծապատկերում.


Question 4. Checking the student's satisfaction of resources and infrastructure. We ask you to rate the level of your satisfaction of following resources and infrastructure of the University by scale below: Not fully satisfied -1—2—3—4-5 Fully satisfied



Ինչպես երևում է գծապատկերից, ուսանողների միջինը 70-80%-ը գոհ է ՄԳՀ-ի կողմից իրեն տրամադրված հիմնական ռեսուրսներից, այն է՝ լսարաններ, լաբորատորիաներ, դրանց սարքավորումներ, գործնական բազաներ, գրադարաններ, էլեկտրոնային գրադարանային համակարգ, WiFi ինտերնետ, սանիտարական սենյակներ, ջեռուցում տարվա ցուրտ շրջանում, անվտանգության պայմաններ, բուֆետ-ճաշարան:

Կրթական ծրագրերի իրականացման համար ՄԳՀ-ն ապահովված է համապատասխան դասախոսական կազմով, մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսներով: Դա է վկայում կրթական միջավայրից շահառուների բավարարվածության աստիճանը: Ստորև, որպես օրինակ, ներկայացնում ենք բժշկական ֆակուլտետի դասախոսների հարցման արդյունքները. «Համալսարանը տրամադրում է Ձեր աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր ռեսուրսները» հարցին դրական է պատասխանել հարցվածների ավելի քան 80%-ը:

3. Ի՞նչ եք կարծում, արդյոք բուհը ապահովում է դասախոսի արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ ռեսուրսներ



Հարցված պրոֆեսորադասախոսական կազմի 70%-ը նշել է, որ գոհ է աշխատանքի ընթացքում իրենց տրամադրված Համալսարանի ենթակառուցվածքային ռեսուրսներից: Այս փաստը, ընկալվում է որպես դրական արդյունք ՄԳՀ-ի ռազմավարական ծրագրի իրականացման գործում:

**ՉՍՓՈՐՈՇԻՉ ք.** ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն և նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Հիմքեր	ՈԱԶ- 00/01 ՄԳՀ-ի կանոնադրություն, ՈԱԶ- 00/02 ՄԳՀ-ի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան, ՄԳՀ-ի 2021/2023թթ. ֆինանսական գործունեության պլան, ՈԱԶ- 00/07 ՄԳՀ-ի ռեսուրսախնայողության և առկա միջոցների արդյունավետ օգտագործման քաղաքականություն:
--------	--

*Վերլուծել բյուջեի բաշխման արդյունավետությունը: Արդյո՞ք ուսումնական գործընթացին վերաբերող ծախսերի բաշխումը համապատասխանում է հաստատության ռազմավարական նպատակներին: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՄԳՀ-ում ֆինանսական հոսքերը կառավարելու և վերահսկելու նպատակով կազմվում է գնահատված ծախսերի պլան (ներկայիս պլանը կազմված է 2021/2023 թվականների համար): Ֆինանսական տարվա ավարտից հետո փաստացի տվյալների վերլուծության հիման վրա ներկայացվում է տարեկան բյուջեի կատարողականը:

Վերջին տարիների ֆինանսական հոսքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՄԳՀ-ի եկամուտները տարեցտարի ավելանում են: Սա հիմնականում պայմանավորված է ուսանողների, առաջին հերթին օտարերկրյա ուսանողների թվի աճով: Միևնույն ժամանակ, ավելացել են նաև ծախսերը, ինչը բացատրվում է աշխատավարձերի, պարտադիր սոցիալական վճարների, ռեսուրսների և նյութերի ձեռքբերմամբ, որոնք կապված են նյութատեխնիկական սարքավորումների մշտական բարելավման հետ, ներառյալ վերանորոգման աշխատանքները, Համալսարանի բարեկարգումը, ճաշարանի բացում և այլն:

**2019-2023 թթ. ՄԳՀ-Ի բյուջեն**

Ցուցանիշ	2019	2020	2021	2022	2023 Հունվար- Ապրիլ
Աճի մասնաբաժինը, %	Աճ 34,5%	Աճ 188,3%	Աճ 19,8%	Աճ 9,4%	
Ընդհանուր ծախսեր	123 651 100	216 689 979	269 040 732	341 161 461	134 479 183
ՊԴ կազմի աշխատավարձի ֆոնդ, վարչակառավարչական և ուսումնասօժանդակ անձնակազմ	52 512 800	105 842 250	170 848 000	247 674 625	93 855 958
Գույքի պահպանման ծառայություններ, ներառյալ վերանորոգման ծախսերը	34 159 200	46 908 500	47 291 000	52 281 000	14 961 290
Հավատարմագրման գործընթաց	11 000 000		4 576 250	1 895 250	2 860 000
Այլ ծախսեր (վերապատրաստում, գրադարանային ֆոնդի համալրում, մշակութային միջոցառումներ, կրթական աշխատանք, ուսումնա-արտադրական պրակտիկա, գործուղումներ, նյութատեխնիկական ապահովում, սոցիալական ապահովություն, հետազոտություն)	25 979 100	46 979 100	37 601 932	25 242 705	22 561 409
Լաբորատոր սարքավորումների ձեռքբերում		16 955 129	8 723 550	14 067 881	240 526

Ինչպես երևում է ներկայացված աղյուսակից, ըստ օրացուցային տարիների եկամուտների աճին զուգահեռ ավելանում են նաև բուհի ծախսերը նշված բոլոր ոլորտներում: Առաջին հերթին ավելանում են աշխատավարձի ֆոնդի մասով նախատեսված ծախսերը դասախոսական կազմի, վարչակառավարչական և կրթական օժանդակ անձնակազմի համար: Բացի այդ, 2021-2023

թվականների կարևոր ծախսերն են եղել ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման ծախսերը՝ սկսած կահույքից և մուլտիմեդիա սարքավորումներից մինչև սիմուլյացիոն սենյակի և լաբորատորիաների սարքավորումները: 2023 թվականին մեկնարկել է ՊԴ կազմի և վարչակառավարչական անձնակազմի վերապատրաստման նոր ծրագիր, որն արտացոլվել է նաև ՄԳՀ-ի ծախսերում՝ համաձայն 2021/2023 ֆինանսական պլանի: 2022 և 2023 թվականներին ՄԳՀ-ի մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունում կրթական EXPO-ին և Հնդկաստանի Հանրապետությունում կրթական ցուցահանդեսին նոր ծախսային հոդված դարձավ: Անցած 3 տարիների ընթացքում մեծ թվով մշակութային միջոցառումներ են իրականացվել, հատկապես տոներին կամ սոցիալական նախագծերին նվիրված միջոցառումներ, որոնք նույնպես ֆինանսավորվել են Համալսարանի կողմից:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ գ.** ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Հիմքեր	<p>ՈԱԶ- 00/01 ՄԳՀ-ի կանոնադրություն,</p> <p>ՈԱԶ- 00/02 ՄԳՀ-ի զարգացման 20212025թթ. ռազմավարական ծրագիր և պլան, ՄԳՀ-ի 2021/2023թթ. ֆինանսական գործունեության պլան,</p> <p>ՈԱԶ- 00/07 ՄԳՀ-ի ռեսուրսախնայողության և առկա միջոցների արդյունավետ օգտագործման քաղաքականություն,</p> <p>ՈԱԶ-00/08 ՄԳՀ-ի որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը,</p> <p>ՈԱԶ- 00/13 ՄԳՀ-ի էթիկայի ու բժշկական դեոնոլոգիայի, ակադեմիական ազնվության, կոռուպցիոն ռիսկերի հարցերի հանձնաժողովի կանոնակարգ,</p> <p>ՈԱԶ- 00/14 ՄԳՀ-ի որակի կառավարման համակարգի կազմակերպման չափորոշիչ:</p>
--------	--

*Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումը ու շարունակականությունը ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

- Ֆինանսական միջոցները բաշխվում են հետևյալ հաջորդականությամբ.
  - Բյուջեի նախագիծը կազմվում է Համալսարանի տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից՝ ելնելով հաշվապահական հաշվառման, ընդհանուր ձեռնարկատիրական ծախսերի (աշխատավարձեր, սոցվճարներ, պետական հարկեր, կոմունալ վճարներ և այլն) և կարիքներից առաջացող պահանջների հիման վրա:
  - Բյուջեի նախագիծը քննարկվում է Հիմնադիր/Կառավարման խորհրդի, Գիտական խորհրդի և վարչակազմի համատեղ նիստում: Հավանության դեպքում այն ընդունվում է ՄԳՀ-ի տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից:
  - Ֆակուլտետները յուրաքանչյուր տարվա վերջում բուհի ղեկավարությանը ներկայացնում են իրենց ուսումնական կարիքները հաջորդ տարվա համար: Դրանց հիման վրա իրականացվում է կադրային աղյուսակի և հաջորդ տարվա աշխատավարձի ֆոնդի ձևավորումը: Դասախոսի աշխատավարձը որոշվում է՝ կախված գիտական աստիճանից, կոչումից և



ծանրաբեռնվածությունից: Այսպիսով, դասախոսները ստանում են տարբերակված աշխատավարձ:

Այժմ մշակվել է վարձատրության նոր տարբերակված համակարգ՝ ՈԱԶ -00/17 «Մխիթար Գոշ» համալսարանում ՊԴ կազմի տարեկան գործունեության գնահատման և վարկանիշավորման կարգ, որը հաշվի կառնի դասախոսների մասնագիտական որակական շարունակական աճը, մասնագիտական և մանկավարժական որակները, արտաուսումնական և կրթական գործունեությունը, բուհի և նրա բաժինների արդյունավետության բարձրացման միջոցառումներին մասնակցությունը, դասախոսների գիտահետազոտական գործունեությունը և դրանում ուսանողների ներգրավումը:

ՄԳՀ-ի գործունեության աուդիտի անցկացումը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջն է: Համալսարանը վերահսկում է բյուջեի կատարումը: Գիտխորհուրդն ամեն տարի քննարկում է բյուջեի կատարողականը, որոշում է անհրաժեշտ փոփոխությունները, պլանավորում հաջորդ օրացուցային տարվա եկամուտներն ու ծախսերը:

Համալսարանի միջոցները կառավարվում են հնարավորինս արդյունավետ: Համալսարանի ղեկավարության ուշադրության կենտրոնում է դրանց կառավարման և օգտագործման արդյունավետության բարելավումը, որը ՄԳՀ-ի փաստացի ռազմավարական առաջնահերթությունն է: Ռեսուրսների խնայողության քաղաքականությունն իրականացվում է Որակի ապահովման կենտրոնի հսկողության ներքո, որը միաժամանակ վերահսկում է որակի քաղաքականությանը համապատասխանությունը: (ՈԱԶ- 00/07 «Մխիթար Գոշ» համալսարանի ռեսուրսախնայողության և առկա միջոցների արդյունավետ օգտագործման քաղաքականություն (ՈԱԶ-00/08 «Մխիթար Գոշ» համալսարանի որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը):

**ԶՍՓՈՐՈՇԻՉ ղ.** ՄՈՒԻ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Հիմքեր	ՈԱԶ- 00/01 ՄԳՀ-ի կանոնադրություն, ՈԱԶ- 00/02 ՄԳՀ-ի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան, ՈԱԶ- 00/07 ՄԳՀ-ի ռեսուրսախնայողության և առկա միջոցների արդյունավետ օգտագործման քաղաքականություն, ՈԱԶ-00/08 ՄԳՀ-ի որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը, ՈԱԶ-00/20 ՄԳՀ-ի ՊԴԿ ձևավորման կանոնակարգ:
--------	---

*Վերլուծել որակի շարունակական բարելավումն ու կայունությունը ապահովելու նպատակով ՄՈՒԻ-ի ռեսուրսային բազայի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՄԳՀ-ում ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումն իրականացվում է բուհի առանձին բաժինների վարչական անձնակազմի կողմից՝ հիմնվելով սեփական կարիքների բացահայտման վրա: Ժամանակի ընթացքում ռեսուրսների

բաշխման մեխանիզմներն ու ընթացակարգերը կարգավորվում են Համալսարանի տեղական իրավական ակտերով, աշխատանքային պայմանագրերով, աշխատանքային գրաֆիկով: Հաշվի են առնված ՄԳՀ-ի գործունեության առանձնահատկությունները:

Կրթական ծրագրերի ընթացիկ մոնիտորինգը գործող կրթական ծրագրերի ռեսուրսների առկայության գնահատման մեխանիզմ է, որի համար Համալսարանը մշակել է համապատասխան ընթացակարգ, ըստ որի նախատեսվում է գնահատել տարեկան պարբերականությամբ նաև ծրագրի ռեսուրսների անվտանգությունը:

Ռեսուրսների ձեռքբերումն իրականացվում է կենտրոնացված, բոլոր կրթական ծրագրերի համար համատեղ և դրանց բաշխումը՝ ըստ առանձին ծրագրերի ռեսուրսների անհրաժեշտության:

Պլանավորման և ռեսուրսների ձեռքբերման առումով ամենակարևոր փոփոխականը ուսանողների թիվն է: Քանի որ նրանց ընդունումը կազմակերպվում է ըստ նախատեսված քանակի, սովորաբար ռեսուրսների պահանջների կտրուկ աճ կամ նվազում չի նկատվում: Սակայն, նույնիսկ ուսանողների թվի աննշան աճի դեպքում, Համալսարանը կարողանում է համապատասխան քանակությամբ միջոցներ հատկացնել, օրինակ՝ վերաբաշխել դասախոսների ծանրաբեռնվածությունը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:**

<p>Հիմքեր</p>	<p>ՈԱԶ- 00/01 ՄԳՀ-ի կանոնադրություն,          ՈԱԶ- 00/02 ՄԳՀ-ի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան,          ՈԱԶ- 00/07 ՄԳՀ-ի ռեսուրսախնայողության և առկա միջոցների արդյունավետ օգտագործման քաղաքականություն,          ՈԱԶ-00/08 ՄԳՀ-ի որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը,          ՈԱԶ-00/23 ՄԳՀ-ի տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման կանոնակարգ,          ՈԱԶ- 01/02 ՄԳՀ-ի փաստաթղթաշրջանառության բաժնի կանոնակարգ,          ՈԱԶ-02/05 ՄԳՀ-ի հարցումների անցկացման կարգ:</p>
---------------	---

*Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Տեղեկատվական գործընթացների կառավարման և փաստաթղթերի հոսքի բարելավումը Համալսարանի ռազմավարական խնդիրներից է, որն արտացոլված է ՄԳՀ-ի կանոնադրության և ռազմավարական զարգացման ծրագրում: Ռազմավարական խնդիր է նաև տեղեկատվական ռեսուրսների ժամանակակից չափանիշներին համապատասխան զարգացումը և դրանց արդյունավետ օգտագործման ու հասանելիության ապահովումը, որի լուծումը շարունակաբար իրականացվում է:

ՄԳՀ-ի ([www.mkhitargosh.am](http://www.mkhitargosh.am) ) կայքը պարունակում է.

1) Տեղական, Համալսարանի իրավական դաշտը, որն անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ

- կողմերին տրամադրելու համար,
- 2) կրթական ծրագրեր,
  - 3) ֆակուլտետների ուսումնական պլանները, կրեդիտային համակարգի ուղեցույցները, դասացուցակները,
  - 4) թափուր պաշտոնների հայտարարություններ,
  - 5) իրադարձություններ, նորություններ, հայտարարություններ և այլն:

Բոլոր կարգավորող փաստաթղթերը վերանայվում են ադմինիստրացիայի կողմից, որից հետո, եթե դրանք ընդունվեն, գրանցվում են փաստաթղթերի կառավարման բաժնում, որից հետո դրանք նախ ներկայացվում են Համալսարանի աշխատակազմի ուշադրությանը, իսկ անհրաժեշտության դեպքում հրապարակվում են ՄԳՀ-ի կայքում:

ՄԳՀ-ում փաստաթղթերի էլեկտրոնային կառավարումն իրականացվում է յուրաքանչյուր ստորաբաժանման պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեների կամ ՄԳՀ-ի ներքին ցանցի միջոցով և կարգավորվում է փաստաթղթերի կառավարման կանոնակարգին համապատասխան: (ՈԱԶ-00/23 «Մխիթար Գոշ» համալսարանի տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման կանոնակարգ):

**ՉԱՓՈՐՈՇԻՉ գ.** ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Հիմքեր	<p>ՈԱԶ- 00/01 ՄԳՀ-ի կանոնադրություն</p> <p>ՈԱԶ- 00/07 ՄԳՀ-ի ռեսուրսային այդոլության և առկա միջոցների արդյունավետ օգտագործման քաղաքականություն,</p> <p>ՈԱԶ- 00/21 ՄԳՀ-ի տեխնիկայի անվտանգության կանոններ,</p> <p>ՈԱԶ-02/05 ՄԳՀ-ի հարցումների անցկացման կարգ:</p>
--------	---

*Վերլուծել առողջության և անվտանգության պահպանման ծառայությունների արդյունավետությունը, հիմնվելով շահեկիցների արձագանքների վրա:*

ՄԳՀ-ի անվտանգության ծառայության գործունեությունը գտնվում է ՄԳՀ-ի վարչատնտեսական մասի տնօրենի վերահսկողության ներքո և անմիջականորեն վերահսկվում է Համալսարանի ղեկավարության կողմից: Անվտանգության, առողջության պահպանման, հակահրդեհային կանոնակարգերի ապահովմանն ուղղված ծառայությունների գործունեության արդյունավետությունը բարելավելու նպատակով տարին մեկ անգամ ներքին շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կատարված աշխատանքը, ինչպես նաև աշխատանքի արդյունավետ կատարմանը խոչընդոտող պատճառները, քննարկվում և վերլուծվում են:

Անվտանգության ծառայությունից ուսանողների գոհունակությունը պարզելու նպատակով ՄԳՀ-ի Որակի ապահովման կենտրոնում հարցումներ են անցկացվում: Նշված հարցումների ընթացքում անվտանգության ծառայության գործունեությունը դրական արձագանք է գտել ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների շրջանում:

Անվտանգ և առողջ միջավայրի ապահովման ոլորտում ՄԳՀ-ի թերություններից է հատուկ կարիքներով մարդկանց համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունը և նրանց լիարժեք կրթության կազմակերպումը, ինչը պայմանավորված է այդպիսի ուսանողների

բացակայությամբ: Այնուամենայնիվ, Համալսարանը հասկանում և պատասխանատու է, եթե հայտնվեն այնպիսի ուսանողներ, որոնք կարիք կունենան անհրաժեշտ լրացուցիչ պայմանների ստեղծման հետ, ապա դա կարվի, ինչպես օրինակ, տեսողության խնդիրներ ունեցողների համար ՄԳՀ-ի կայքի տարբերակը:

*Վերլուծել ՄՈՒՀ-ի միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Յուրաքանչյուր մասնաշենք ունի առաջին օգնության փաթեթներ շտապ բժշկական օգնության համար, օգնության սենյակներ (բազմոցով և ԷԿԳ ապարատով): Առաջին օգնության փաթեթները պարունակում են անհրաժեշտ դեղամիջոցներ և սարքավորումներ: Բացի այդ, Համալսարանը հոգեբանական օգնություն է տրամադրում ուսանողներին՝ թե՛ զծից մինչև մշտական հոգեբանի անանուն խորհրդատվություն:

Ֆիզկուլտուրայի դասավանդումը զգալի ներդրում ունի Համալսարանի ուսանողների կատարելագործման գործում: Նրա հիմնական խնդիրը, «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսումնական պլանի պահանջներին համապատասխան, սպորտային միջոցառումների իրականացումն է՝ ուղղված ուսանողական կրթական և առողջական բաղադրիչների ամրապնդմանը: Կազմակերպվում են ընդհանուր և սեկցիոն դասընթացներ տարբեր մարզաձևերում: Համալսարանը առավելագույն միջոցներ է հատկացնում մարզադահլիճների բարեկարգման, մարզագույքի ձեռքբերման համար: Արտակարգ իրավիճակներում ուսանողների և աշխատողների քաղաքացիական պաշտպանությունն իրականացնում է ՄԳՀ քաղաքացիական պաշտպանության շտաբը: 2021 թվականին Արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան ստորաբաժանման հետ համատեղ անցկացվել է վարժանք «Շենքում վտանգավոր է, պետք է լքել տարածքը» թեմայով:

ՄԳՀ-ի շենքերում մշտական հիմունքներով գործում են քաղաքացիական պաշտպանության տարհանման հանձնաժողովները՝ շենքերի պահակախմբի և ֆակուլտետների դեկանների ներգրավմամբ: Համալսարանի բոլոր մասնաշենքերի մուտքերի մոտ փակցված են շտապ տարհանման սխեմաներ: Շենքերն ունեն անհրաժեշտ քանակությամբ մուտքեր՝ ուսանողների արդյունավետ տարհանման համար:

Կենտրոնական մասնաշենքերում տեղադրված են հակահրդեհային վահանակներ՝ անհրաժեշտ տեխնիկայով:


Համալսարանի անվտանգության ծառայությունն աշխատում է 1996 թվականից: Համալսարանի մասնաշենքերի և գույքի անվտանգության ապահովման, ուսանողների և աշխատակիցների անվտանգության ապահովման գործառույթն իրականացվում է շուրջօրյա:

**ԶՍՓՈՐՈՇԻՉ Է.** ՄՈՒՀ- ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Հիմքեր | ՈԱԶ- 00/01 ՄԳՀ-ի կանոնադրություն,

	<p>ՈԱԶ- 00/02 ՄԳՀ-ի զարգացման 2021/2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան, ՄԳՀ-ի 2021/2023թթ. ֆինանսական գործունեության պլան, ՈԱԶ- 00/07 ՄԳՀ-ի ռեսուրսախնայողության և առկա միջոցների արդյունավետ օգտագործման քաղաքականություն, ՈԱԶ-00/08 ՄԳՀ-ի որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը:</p>
<p><i>Վերլուծել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման գործող մեխանիզմների և ծառայությունների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>Համալսարանն իր ռազմավարության մեջ իրականացնում է դասավանդման համար անհրաժեշտ նյութերի և ռեսուրսների արդիականացման քաղաքականություն՝ համապատասխան ընթացակարգերի միջոցով, կենտրոնանում է մասնագիտական և համակարգչային լաբորատորիաների, գրադարանների, բաժինների և այլ ենթակառուցվածքների արդյունավետ և նպատակային օգտագործման վրա: Բավարար նյութական ռեսուրսներ են հատկացվում դրանց արդիականացման և լիարժեք օգտագործման համար: Նախատեսվում են նոր հաղորդակցական և ֆինանսական հնարավորություններ, որոնց շարունակական բարելավման համար ՄԳՀ-ում ստացած կրթությամբ շրջանավարտների բավարարվածության հարցումները որակի ներքին ապահովման համակարգի կարևորագույն բաղադրիչներից են: Նրանք նաև գնահատում են ուսումնական միջավայրը՝ ուսումնական տարածքներ, ուսումնական ռեսուրսներ և օժանդակ ծառայություններ:</p> <p>Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը նույնպես ՄԳՀ-ի վարչակազմի ուշադրության կենտրոնում է: Վերջին տարիներին հատկացվել են զգալի նյութական, ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, ինչի արդյունքում այսօր ՄԳՀ-ի սարքավորումներն իրենց որակական բնութագրերով բավարարում են ներքին շահագրգիռ կողմերի պահանջները:</p> <p>Համալսարանի ստորաբաժանումներն ունեն իրենց հատկացված էլեկտրոնային հասցեներ, ինչը հնարավորություն է տվել ներդնել էլեկտրոնային փաստաթղթերի կառավարման համակարգ և փոխանակել էլեկտրոնային տեղեկատվություն ստորաբաժանումների միջև: Համալսարանն իր ուսանողներին և դասախոսներին ապահովում է գերարագ ինտերնետով: Ուսանողների հարցումների հիման վրա (ստորև բերված գծապատկերը) բացահայտվել է դժգոհություն WiFi ինտերնետ ցանցի արագությունից, ինչը հիմք է դարձել այս ուսումնական տարում WiFi սարքավորումների կրկնակի բարելավման համար:</p> <p>Համալսարանի նյութատեխնիկական բազայից ուսանողների բավարարվածության և ուսումնական գործընթացի ապահովման գնահատումն իրականացվում է Որակի կենտրոնի կողմից՝ իրականացնելով շահագրգիռ կողմերի հարցումներ, ինչը հնարավորություն է տալիս բացահայտել առկա կարիքները և իրականացնել բարելավման գործընթացներ: Բացի այդ, այս ցուցանիշն արտացոլված է նաև ԲՈՒՀ-ի ենթակառուցվածքից ուսանողների գոհունակության վերաբերյալ հարցումներում: Հետազոտության որոշ արդյունքներ արտացոլված են ստորև ներկայացված դիագրամում.</p>	


Question 4 Checking the student's satisfaction of resources and Infrastructure We ask you to rate the level of your satisfaction of following resources and infrastructure of the University by scale below: Not fully satisfied -1—2—3—4-5 Fully satisfied



Ինչպես երևում է գծապատկերից, ուսանողների միջինը 70-80%-ը գոհ է ՄԳՀ-ի կողմից իրեն տրամադրված հիմնական ռեսուրսներից, այն է՝ լսարաններ, լաբորատորիաներ, դրանց սարքավորումներ, գործնական բազաներ, գրադարաններ, էլեկտրոնային գրադարանային համակարգ, WiFi ինտերնետ, սանիտարական սենյակներ, ջեռուցում տարվա ցուրտ շրջանում, անվտանգության պայմաններ, բուֆետ-ճաշարան:

Կրթական ծրագրերի իրականացման համար ՄԳՀ-ը ապահովված է համապատասխան դասախոսական կազմով, մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսներով: Դա է վկայում կրթական միջավայրից շահառուների բավարարվածության աստիճանը: Ստորև, որպես օրինակ, ներկայացնում ենք Բժշկական ֆակուլտետի դասախոսների հարցման արդյունքները «Համալսարանը տրամադրում է ձեր աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր ռեսուրսները» հարցին դրական է պատասխանել հարցվածների ավելի քան 80%-ը:

3. Ի՞նչ եք կարծում, արդյոք բուհը ապահովում է դասախոսի արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ ռեսուրսներ



Հարցված ՊԴ կազմի 70%-ը նշել է, որ գոհ է իրենց աշխատանքի ընթացքում իրենց տրամադրված Համալսարանի ենթակառուցվածքային ռեսուրսներից: Այս փաստը, այս զեկույցը կազմող խմբի տեսանկյունից, ընկալվում է որպես դրական արդյունք ՄԳՀ-ի ռազմավարական ծրագրի այս ուղղության իրականացման գործում:

*Վերլուծել Չափանիշ 7-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:*

*Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:*

*Ուժեղ կողմեր*

- 1 ՄԳՀ-ում իրականացվող կրթական ծրագրերի իրականացումն ապահովելու համար Համալսարանն ունի անհրաժեշտ ենթակառուցվածքներ և նյութատեխնիկական ռեսուրսներ (ուսումնական մասնաշենքեր, սպորտային դահլիճներ, լաբորատորիաներ, լսարաններ, հանդիպումների սենյակներ և այլն):
- 2 ՄԳՀ-ում բարձրագույն կրթության բոլոր ոլորտներում գործնական ուսուցման ժամանակակից բազաների հետ անհրաժեշտ պայմանագրերի առկայություն:

### *Թույլ կողմեր*

1. Համալսարանը դեռևս չի կարողանում անհրաժեշտ ֆինանսական միջոցներ տրամադրել լայնածավալ և երկարաժամկետ հետազոտական գործունեության համար:
2. ՄԳՀ-ի մասնաշենքերի հարմարությունները այս պահին սահմանափակ են հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար:
3. Սեփական կլինիկայի կամ բժշկական կենտրոնի բացակայություն:

### *Հնարավորություններ*

1. Մի շարք միջազգային կազմակերպությունների աջակցությամբ և ֆինանսավորմամբ իրականացնել կրթական և հետազոտական գործունեություն:
2. Ընդգրկվել պետության կողմից ֆինանսավորվող գիտահետազոտական աշխատանքների իրականացման գործընթացում:
3. Համագործակցություն օտարերկրյա բուհերի և Հայաստանի Հանրապետության բուհերի ու գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ նախագծերի իրականացմամբ:

### *Վտանգներ*

1. Արտարժույթի շուկայում փոխարժեքների անկանխատեսելի տատանումները բացասաբար են անդրադառնում բուհի ֆինանսական գործունեության վրա:
2. Աշխարհաքաղաքական բարդ իրավիճակ, որը կարող է ազդել 1-ին կուրսում սովորողների ընդունելության վրա:

Թույլ կողմերը և վտանգները վերացնելու համար անհրաժեշտ է.

- գտնել ֆինանսական հոսքերի ավելացման նոր ուղիներ, հատկապես Համալսարանում ուսանողների թվի ավելացման հաշվին,
- իրականացնել մի շարք միջոցառումներ հաշմանդամություն ունեցող ուսանողների համար մատչելի կրթական միջավայր ապահովելու համար,
- շարունակել Համալսարանի նյութատեխնիկական բազան համալրել ժամանակակից սարքավորումներով,
- փորձել ֆինանսական ծախսերը վերաբաշխել այնպես, որ բարձրացվի դրանց արդյունավետությունը,



- բարելավել շտապ բժշկական օգնության սարքավորումներով ապահովվածությունը ՄԳՀ-ի մասնաշենքերում,
- ներմուծել մուտքի հսկողություն ՄԳՀ-ի շենքերում (գնել մուտքի վերահսկման համակարգեր:

**VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

**ՉԱՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

*Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:*

- Ռազմավարական ծրագրի նպատակներով նախատեսվում է.
- նպաստել բնակչության առողջության բարելավմանը, հասարակության տնտեսական, սոցիալական և մշակութային առաջընթացին, ՀՀ և այլ երկրների միջև բարեկամության հաստատմանը, տնտեսական, գիտական և մշակութային կապերի ամրապնդմանը,
  - հնարավորություն ստեղծել հասարակության կարիքավոր և խոցելի խավերի կրթության համար:
    - Համալսարանի առաջ դրված լուծման ենթակա խնդիրներից են.
    - խորացնել հասարակայնության հետ կապերը, ընդլայնել և զարգացնել հասարակությանը մատուցվող ծառայությունների տեսակները, կատարելագործել կայքը, դարձնել համալսարանի մասին տեղեկատվությունը ամբողջական և հասանելի,
    - գործարարների օժանդակությամբ կրթաթոշակներ սահմանել սոցիալապես անապահով ուսանողներին աջակցելու, բյուջետային տեղերի ավելացման, անվանական կրթաթոշակների սահմանման և շնորհման համար(Համալսարանի հաշվին),
    - բարձրացնել Համալսարանի մասնակցության աստիճանը համայնքային զարգացման աշխատանքներում:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.** ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Շիմքեր	<p><u>ՈԱԶ-00/01 ՄԳՀ-ի կանոնադրություն,</u></p> <p><u>ՈԱԶ-00/02 ՄԳՀ-ի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան,</u></p> <p><u>ՈԱԶ-00/08 ՄԳՀ-ի որակի ապահովման քաղաքականություն և</u></p> <p><u>ընթացակարգեր,</u></p> <p><u>ՈԱԶ-00/10 ՄԳՀ-ի գիտական խորհրդի կանոնակարգ,</u></p> <p><u>ՈԱԶ-00/11 ՄԳՀ-ի ռեկտորատի կանոնակարգ,</u></p> <p><u>ՈԱԶ-02/02 ՄԳՀ-ի որակի ապահովման կենտրոնի կանոնակարգ,</u></p> <p><u>ՈԱԶ-02/05 ՄԳՀ-ի հարցումների անցկացման կարգ,</u></p> <p><u>ՈԱԶ-02/03 ՄԳՀ-ի հարցաշարեր,</u></p> <p><u>ՈԱԶ-01/19 ՄԳՀ-ի դասալսումների անցկացման կարգ,</u></p> <p><u>ՈԱԶ-00/09 ՄԳՀ-ի բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգ,</u></p>
--------	---

	<p><u>ՈԱԶ-02/04 ՄԳՀ-ի մարկետինգի և հանրային կապերի բաժնի կանոնակարգ,</u>  <u>ՈԱԶ-00/24 ՄԳՀ-ի ուսանողներին նյութական օգնության տրամադրման կարգ,</u>  <u>ՈԱԶ-02/08 ՄԳՀ-ի ստորաբաժանումների գործունեության պլանավորման,</u>  <u>իրականացման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ:</u></p>
<p><i>Վերլուծել, թե որքանով է ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունը նպաստում կառավարման բարելավմանը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>Համալսարանի հաշվետվողականության քաղաքականությունը սահմանվում է ռազմավարական ծրագրով, որում «ուղղորդող սկզբունքները» նշված են հետևյալ կերպ.</p> <p>ա) Հանրային պատասխանատվություն. Համալսարանը մատուցում է իր ծառայությունները հասարակության կարիքներին համապատասխան:</p> <p>բ) Հաղորդակցության և տեղեկատվության թափանցիկության ընդլայնում. Համալսարանի գործունեությունը բաց է, թափանցիկ, հրապարակային:</p> <p>Ռազմավարական ծրագրի դրույթների իրականացումն ապահովելու համար մշակվել են մի շարք ներքին իրավական ակտեր, որոնցով առաջնորդվում են բուհի բաժինները: Դրանցից հիմնականներից մեկը ՄԳՀ-ի որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերն են՝ ՈԱԶ-00/08 ՄԳՀ-ի որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր:</p> <p>Այս փաստաթուղթը սահմանում է որակի ապահովման հետևյալ նպատակները.</p> <p>1. Համալսարանում աշխատաշուկայի կարիքներին համապատասխան ապահովել բարձրագույն մասնագիտական կրթության որակի բարձրացումը:</p> <p>2. Իրականացնել համակարգված, թափանցիկ և իրատեսական ընթացակարգեր կրթական կազմակերպությունում ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար՝ ապահովելով գիտական հետազոտությունների բարձր մակարդակ:</p> <p>Այս փաստաթուղթը սահմանում է Որակի ապահովման (ՈԱ) ընթացակարգերը ղեկավարման և կառավարման ճյուղերի համար՝ կենտրոնանալով Համալսարանի կառավարման համակարգի կատարելագործման վրա՝ հետևողականորեն կիրառելով հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմները: Իսկ ղեկավարումն ու կառավարումն առանց հաշվետվողականության ժամանակակից իրողություններում անարդյունավետ են:</p> <p>Համալսարանն օգտագործում է մի շարք մեխանիզմներ՝ ուղղված բուհի գործունեության տարբեր ոլորտներում գործընթացների և դրանց արդյունքների մոնիտորինգին և վերահսկմանը.</p> <p>1) Գիտական խորհուրդը՝ պարբերաբար լսում է հաշվետվություններ, զեկույցներ,  2) ռեկտորատ՝ քննարկում է անհապաղ որոշում պահանջող հարցեր, զեկուցումներ,  3) ռեկտորը, պրոռեկտորները՝ ամենօրյա ձևաչափով վերահսկում են Համալսարանի ամբիոնների, ուսումնական, գիտական, միջազգային, սոցիալական և այլ գործընթացների գործունեությունը, տալիս ցուցումներ, հրամաններ,  4) ՈԱԿ-ը՝ համակարգում և վերահսկում է որակի ապահովման աշխատանքները, իրականացնում է շահագրգիռ կողմերի հարցումներ և դրանց արդյունքների վերլուծություն,</p>	

կազմակերպում է վերապատրաստումներ՝ առաջնորդվելով համապատասխան չափանիշներով.

ՈԱԶ-00/08 ՄԳՀ-ի որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր,

ՈԱԶ-02/02 ՄԳՀ-ի որակի ապահովման կենտրոնի կանոնակարգ,

ՈԱԶ-02/05 ՄԳՀ-ի հարցումների անցկացման կարգ,

ՈԱԶ-01/19 ՄԳՀ-ի դասալսումների անցկացման կարգ:

5) Կարիերայի կենտրոնը շփվում է շրջանավարտների և գործատուների հետ, ուսումնասիրում նրանց գոհունակությունը Համալսարանի կրթական ծառայություններից և դրանց արդյունքներից:

6) Ստորաբաժանումների ղեկավարներից յուրաքանչյուրը վերահսկում է գործունեությունը իր պատասխանատվության ոլորտում՝ բենչմարքինգի և աուդիտի (փորձագետների ներգրավմամբ, փորձագիտական խմբերի ձևավորում) կիրառմամբ՝ կատարելագործման հեռանկարով.

ՈԱԶ-00/09 ՄԳՀ-ի բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգ,

ՈԱԶ-01/24 ՄԳՀ-ի ուսումնական գործընթացի որակի մշտադիտարկման փորձագիտական հանձնաժողովի գործունեության կանոնակարգ:

7) Միջանկյալ, կիսամյակային և ավարտական քննություններ /ավարտական դիպլոմների պաշտպանություն. Յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանումն իր գործառույթներն իրականացնում է իր կանոնակարգին համապատասխան, իսկ պաշտոնատար անձը՝ աշխատանքի նկարագրերի պահանջներին համապատասխան:

8) Բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունը պլանավորման, գնահատման/ստուգման, պարբերական մոնիտորինգի և հաշվետվության գործընթացներին:

Օրինակ՝ ֆակուլտետի որակի ապահովումը (այսուհետ՝ ֆակուլտետ) ներառում է ֆակուլտետի աշխատանքի պարբերական գնահատումը բազմաչափ մոտեցմամբ, որը բաղկացած է ուսանողների, ամբիոնների և գործընկերների կողմից դասախոսի գնահատականներից, դասախոսների ինքնագնահատումից, ինչպես նաև ներառում է դասավանդման և ուսուցման, ուսումնական ռեսուրսների թեստավորում և ծառայությունների աջակցություն կրթության, հետազոտական գործունեության, օտարերկրյա ուսանողների հարմարվողականության աստիճանի, սոցիալական աշխատանքի և հասարակայնության հետ կապերի և, իհարկե, որակի կառավարման համակարգի գործունեությանը, որը ենթադրում է հետևյալ ընթացակարգերը.

1) Ձևավորել որակի կառավարման ներքին համակարգ, դրա ապահովման համալսարանական և ֆակուլտետային կառույցներ:

2) Իրականացնել որակի ապահովման կենտրոնի աշխատակիցների և Համալսարանի ղեկավարության ժամանակին առաջադեմ վերապատրաստում:

3) Բարելավել որակի ապահովման ընթացակարգերը և չափանիշները, ինչպես նաև հարակից պաշտոնական փաստաթղթերը:

4) Իրականացնել հետազոտություններ Համալսարանի շահագրգիռ կողմերի կարիքների վերաբերյալ և տրամադրել հետադարձ կապ:

5) Համալսարանում ձևավորել որակի մշակույթ և աջակցել դրա շարունակական

զարգացմանն ու ամրապնդմանը:

6) Ստեղծել նախադրյալներ որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների իրականացման համար՝ նախապատրաստվելու Համալսարանի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրմանը: Մի խոսքով, դա միմյանց հետ սերտորեն կապված միջոցառումների ամբողջություն է: Համալսարանը սոցիալական աջակցություն է տրամադրում բնակչության ցածր եկամուտ ունեցող խավերին՝ իրացնելու իրենց կրթության իրավունքը զեղչերի և անվճար կրթության քաղաքականության միջոցով, որը կարգավորվում է ՄԳՀ-ի ուսանողներին նյութական օգնություն տրամադրելու կանոնակարգով:

Համալսարանի սոցիալական պատասխանատվության օրինակներից էր ստոմատոլոգիայի ուղղությամբ ուսանողների ընդունումը ՀՀ քաղաքացիներից, ովքեր նախկինում սովորել են Սբ. Թերեզա Համալսարանում, ընդունելության ժամանակ նրանց առաջարկվել է այս ոլորտում ընդունելության տարվա ընթացիկ գնի համեմատ 50% ուսման վարձի զեղչ: Բացի այդ, նույն փակված համալսարանից ՄԳՀ-ն ընդունել է որոշ ուսանողների ընդհանուր բժշկության ուղղությամբ: Ռազմական գործողություններին մասնակցած ՀՀ քաղաքացիներն իրավունք ունեն ուսման վարձի զեղչ ստանալու (Համալսարանում կան այդպիսի ուսանողներ): Անհրաժեշտության դեպքում ուսանողն իրավունք ունի ուսման վարձը վճարել ոչ թե տարին երկու անգամ, այլ ամսական՝ փոքր մասերով: Հնդկաստանից մի քանի ուսանողներ (կարիքավոր խմբից) Հիմնադրից ստացել են ուղղակի զեղչ՝ իրենց դիմումի համաձայն:

Հաշվետվությունն ապահովում է Համալսարանի ուժեղ և թույլ կողմերի, զարգացման հնարավորությունների և սպառնալիքների բացահայտումը: Ըստ այդմ՝ հետևում է՝ ընդլայնել ուժեղ կողմերը, թույլ կողմերը վերածել ուժեղ կողմերի, իրացնել հնարավորությունները և նվազագույնի հասցնել սպառնալիքները:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Բ.** ՄՈՒՀ-ն ապահովում ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

Հիմքեր	<p><u>ՈԱՀ- 00/02 ՄԳՀ-ի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան,</u></p> <p><u>ՈԱՀ-00/08 ՄԳՀ-ի որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր,</u></p> <p><u>ՈԱՀ-02/02 ՄԳՀ-ի որակի ապահովման կենտրոնի կանոնակարգ,</u></p> <p><u>ՈԱՀ-02/05 ՄԳՀ-ի հարցումների անցկացման կարգ ,</u></p> <p><u>ՈԱՀ-02/03 ՄԳՀ-ի հարցաշարեր,</u></p> <p><u>ՈԱՀ-01/19 ՄԳՀ-ի դասալսումների անցկացման կարգ,</u></p> <p><u>ՈԱՀ-00/09 ՄԳՀ-ի բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգ,</u></p> <p><u>ՈԱՀ-02/08 ՄԳՀ-ի ստորաբաժանումների գործունեության պլանավորման, իրականացման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ,</u></p> <p><u>ՈԱՀ-00/03 ՄԳՀ-ը հավատարմագրող փորձագետների դիտողությունների վերացման 2022թ. գործողությունների պլան,</u></p> <p><u>Ռեկտորի, պրոռեկտորների, դեկանների, որակի ապահովման կենտրոնի հաշվետվություններ:</u></p>
--------	--

*Վերլուծել հասարակությանը հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ՄԳՀ-ի ստորաբաժանումների գործունեության պլանավորման, իրականացման, մոնիտորինգի, գնահատման և բարելավման կանոնակարգը սահմանում է, որ «Ռեկտորի հաշվետվությունները, բացառությամբ առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության, ենթակա են հրապարակման՝ թափանցիկություն, հրապարակայնություն, և մատչելիություն ապահովելու նպատակով: Բոլոր բաժինները, համաձայն սույն կանոնակարգի, հաշվետու են վերահսկող պրոռեկտորների և Որակի ապահովման կենտրոնին: Վերլուծական և հաշվետվական նյութերում ստորաբաժանումների ղեկավարները պետք է գնահատեն նաև կատարվող աշխատանքի արդյունավետությունը:

Ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունն ու հանրությանը հասանելիությունը ապահովելու համար Համալսարանն օգտագործում է կայքի հնարավորությունները, սոցիալական ցանցերում ստեղծվում են էջեր(Facebook, Twitter, Instagram, Youtube, Google, WhatsApp, Viber), տարբեր շահագրգիռ կողմերի խմբեր, որտեղ տեղադրվում են պլանավորված միջոցառումները, դրանց արդյունքները, ուսումնական գործընթացի ժամանակացույցը, վերապատրաստման դասընթացների, պրակտիկայի, խորհրդատվությունների, թեստերի, քննությունների մասին ինֆորմացիա, ուսումնական նյութեր և այլն: Դրանց միջոցով տրամադրվում է գործնական և հետադարձ կապ, վարչական, կառավարչական, կրթական և կրթական աջակցություն շահագրգիռ կողմերին: Այս մեխանիզմների և գործիքների արդյունավետությունն ակնհայտ է և նպաստում է կրթական կազմակերպությունում ուսումնական գործընթացի կազմակերպման թափանցիկության բարձրացմանը, ինչպես նաև նրա գործունեության բոլոր այլ կողմերի բարելավմանը:

Համալսարանի հաշվետվողականության ապահովման կարևոր բաղադրիչ են հավատարմագրող կազմակերպությունների՝ ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի, AKKORK-ի, NAAR-ի արտաքին գնահատումները, որոնք նախկինում իրականացրել են համապատասխան գնահատումները: Այս գնահատումների արդյունքները, Համալսարանի ինքնավերլուծությունները, հասանելի են հանրությանը բուհի կայքի և այդ կազմակերպությունների պորտալների միջոցով: Դրանք դարձան Համալսարանի հետագա զարգացման ելակետերը՝ նպաստեցին նրա գործունեության և որակի բարելավմանը: Այս կազմակերպությունների արդյունքների և ընթացիկ ներքին աուդիտի (2022թ. մայիս) հիման վրա կազմվել է ՄԳՀ-ի գործողությունների ծրագիր, ըստ որի Համալսարանն աստիճանաբար առաջ մղեց իր հավակնությունները որակի ապահովման ոլորտում: Համալսարանի ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունը տրամադրվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան, և այդ գործունեության արդյունքները գնահատվում են բուհի շահագրգիռ կողմերի կողմից: Այսպիսով, ուսանողների, շրջանավարտների, դասախոսների շրջանում կրթական միջավայրի տարբեր տարրերի առկայությունից գոհունակության վերաբերյալ հարցումներն առավել քան գոհացուցիչ են (տե՛ս ՄԳՀ-ի շահագրգիռ կողմերի հարցումների արդյունքները <https://www.mkhitargosh.am/ru/>

monitoring-quality.html): Հարցումների արդյունքների հիման վրա բացահայտվել են բուհի գործունեության խնդրահարույց ոլորտները և միջոցներ են ձեռնարկվում դրանց լուծման ուղղությամբ:

Վերոնշյալ մեխանիզմներով բուհի գործունեության և բուհում ուսումնական գործընթացում հայտնաբերված թույլ կողմերը վկայում են հաշվետվողականության մեխանիզմների արդյունավետության մասին:

**Չափորոշիչ գ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:**

Հիմքեր

ՈԱԶ- 00/02 ՄԳՀ-ի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան,  
ՈԱԶ-00/08 ՄԳՀ-ի որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր,  
ՈԱԶ- 00/10 ՄԳՀ-ի գիտական խորհրդի մասին կանոնակարգ,  
ՈԱԶ- 00/11 ՄԳՀ-ի ռեկտորատի կանոնակարգ,  
ՈԱԶ- 00/09 ՄԳՀ-ի բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգ,  
ՈԱԶ-01/19 ՄԳՀ-ի դասալսումների անցկացման կարգ,  
ՈԱԶ-02/02 ՄԳՀ-ի որակի ապահովման կենտրոնի կանոնակարգ,  
ՈԱԶ-02/03 ՄԳՀ-ի հարցաշարեր,  
ՈԱԶ-02/04 ՄԳՀ-ի մարկետինգի և հանրային կապերի բաժնի կանոնակարգ,  
ՈԱԶ-02/05 ՄԳՀ-ի հարցումների անցկացման կարգ,  
ՈԱԶ-02/08 ՄԳՀ-ի ստորաբաժանումների գործունեության պլանավորման,  
իրականացման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ:

*Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Այս ուղղությամբ կենտրոնական դեր ունեն Որակի ապահովման կենտրոնը, ՄԳՀ-ի շրջանավարտների կարիերայի և զբաղվածության կենտրոնը, մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի բաժինը:

Որակի ապահովման կենտրոնը մշակել և ներդրել է մեխանիզմներ, որոնք ապահովում են հուսալի հաղորդակցություն բոլոր շահագրգիռ կողմերի և ընդհանուր առմամբ հասարակության հետ, ինչպես նաև նրանց հետ հետադարձ կապի կայուն մեխանիզմներ (տես ՈԱԶ-02/02 ՄԳՀ-ի որակի ապահովման կենտրոնի կանոնակարգ, ՈԱԶ-02/03 ՄԳՀ-ի հարցաշարեր, ՈԱԶ-02/05 ՄԳՀ-ի հարցումների անցկացման կարգ):

Որակի ապահովման կենտրոնը նույնականացնում է շահագրգիռ կողմերի խնդրանքները և արդյունքները հաղորդում նրանց: Համալսարանն օգտագործում է առցանց հարցման գործիքներ Google հարթակի միջոցով (հարցումների արդյունքները տեղադրված են բուհի կայքում՝ mkhitargosh.am/ru), որակի գծով վերապատրաստման շրջանակներում հանդիպումներ է անցկացնում դասախոսական կազմի հետ, որոնցում նաև փորձում է մանրամասն ծանոթանալ Համալսարանի գործունեության կարևոր հարցերի վերաբերյալ

արձագանքների հետ: Դեկանատները ուսանողների, ավագների խորհրդի հետ հանդիպումների ժամանակ (այդ թվում՝ խմբերի կուրատորների ներգրավմամբ) նույն կերպ քննարկում են կենցաղային, սոցիալական և կրթական բաղադրիչը, ուսանողների կրթական կյանքը և այլն: Հաղորդակցության այս ուղիներով ձեռք բերված արդյունքները հիմք են հանդիսանում բարեփոխումների իրականացման և Համալսարանի աշխատանքի որակի բարձրացման համար:

ՄԳՀ-ի ուսանողների, շրջանավարտների և գործատուների փոխգործակցությունն ապահովող կառույցի՝ ՄԳՀ-ի շրջանավարտների կարիերայի և զբաղվածության կենտրոնի գործունեությունը կենտրոնացած է աշխատաշուկայում ՄԳՀ-ի շրջանավարտ երիտասարդ մասնագետներին աջակցելու վրա:

Իր գործունեության իրականացման ընթացքում Շրջանավարտների կարիերայի և զբաղվածության կենտրոնը սերտորեն համագործակցում է ՄԳՀ-ի ամբիոնների և ամբողջ Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների հետ, ինչպիսիք են ուսումնական բաժինը, որակի ապահովման կենտրոնը, միջազգային գործունեության բաժինը, տեղեկատվական տեխնոլոգիաների հասարակայնության հետ կապերի և մարքեթինգի բաժինը:

ՄԳՀ-ն իրագործելի ներդրում ունի հանրապետության և տարածաշրջանի գիտական, մշակութային և հասարակական կյանքի կազմակերպման գործում: Այդ են վկայում տարբեր գիտաժողովների, քննարկումների, ցուցահանդեսների, երաժշտական և այլ միջոցառումների կազմակերպումը, որն իր հերթին նպաստում է Համալսարանի առաջխաղացմանը կրթական ծառայությունների շուկայում:

ՄԳՀ մշակել և թարմացրել է 2022 թվականին շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ դրույթները (ՈԱԶ-01/11 ՄԳՀ-ի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և դրանց արդյունքների բողոքարկման կարգ, ՈԱԶ-01/13 ՄԳՀ-ի բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման, պաշտպանության և գնահատման կարգ, ՈԱԶ-01/14 ՄԳՀ-ի մագիստրոսական թեզի պատրաստման, պաշտպանության և գնահատման կարգ), որոնք պարունակում են նաև հասարակության հետադարձ կապի մեխանիզմներ: Ավարտական աշխատանքները գրախոսվում են, շրջանավարտների կարողությունների վերջնական գնահատականը ստուգում են պետական քննական հանձնաժողովները, որոնց ղեկավարները վերլուծում են ատեստավորման ընթացքը և տալիս իրենց գրավոր կարծիքները, շրջանավարտների գիտելիքների մակարդակի վերաբերյալ առաջարկությունները: Մա նաև ծառայում է որպես հասարակությանը հաշվետվության ձև և հիմք է հանդիսանում բարեփոխումների համար:

Ռազմավարական ծրագիրը ներառում է այս նպատակին հասնելու համար մի շարք խնդիրների լուծման անհրաժեշտություն (հանրության հետ հարաբերությունների բարելավում և ամրապնդում, հանրային պատասխանատվության բարձրացում): Դրանք ներառում են.

– Խորացնել Համալսարանի հասարակայնության հետ կապերը, կատարելագործել Համալսարանի կայքը, բուհի մասին տեղեկատվությունը դարձնել ամբողջական և հասանելի:

– Գտնել կրթաթոշակներ հայ և օտարերկրյա գործարարներից՝ աջակցելու սոցիալապես անապահով ուսանողներին Հանրապետության մարզպետարաններից, համայնքներից:

– Ընդլայնել և զարգացնել հասարակությանը մատուցվող ծառայությունների



տեսակները:

– Ընդլայնել Համալսարանի մասնակցությունը համայնքի զարգացման աշխատանքներին:

– Պարբերաբար գնահատել բուհի արդյունավետությունը սոցիալական պատասխանատվության առումով:

Ինչպես վերը նկարագրվեց, այս և այլ խնդիրների լուծման համար արդեն իսկ իրականացվել են մի շարք գործողություններ, և ներդրվել են ներկայումս գործող մեխանիզմները՝ ակտիվ գործում են սոցիալական ցանցերը, անցկացվում են սոցիալական և մշակութային միջոցառումներ (օրինակ՝ ուսանողները շաբաթօրյակ են անցկացրել Երևանի Հաղթանակի զբոսայգում, դասախոսները բժշկական ֆակուլտետի ուսանողների հետ միասին անվճար բուժզննում են անցկացրել գյուղական բնակավայրերում), որոշ ուսանողներ ուսման վարձի զեղչ են ստացել: Կատարված աշխատանքների մասին տեղեկատվությունը արտացոլված է սոցիալական ցանցերում և Համալսարանի կայքում:

**ՉԱՓՈՂՈՇԻՉ ղ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:**

Հիմքեր	<p><u>ՈԱԶ-00/01 ՄԳՀ -ի կանոնադրություն,</u> <u>ՈԱԶ-00/02 ՄԳՀ-ի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան,</u> <u>ՈԱԶ-00/03 ՄԳՀ-ն հավատարմագրող փորձագետների դիտողությունների վերացման 2022թ. գործողությունների պլան,</u> <u>ՈԱԶ-00/26 ՄԳՀ-ի երիտասարդ առաջնորդների պատրաստման քաղաքականություն,</u> <u>ՈԱԶ-01/19 ՄԳՀ-ի դասալսումների անցկացման կարգ,</u> <u>ՈԱԶ-01/23 ՄԳՀ-ի կրթական գործընթացի արդյունավետության գնահատման, մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման ու վերանայման մեխանիզմներ և ընթացակարգ,</u> <u>ՈԱԶ-01/32 ՄԳՀ-ի երիտասարդ դասախոսի դպրոցի կանոնակարգ,</u> <u>ՈԱԶ-02/02 ՄԳՀ-ի որակի ապահովման կենտրոնի կանոնակարգ,</u> <u>ՈԱԶ-02/03 ՄԳՀ-ի հարցաշարեր,</u> <u>ՈԱԶ-02/05 ՄԳՀ-ի հարցումների անցկացման կարգ:</u></p>
--------	--

*Վերլուծել հաստատության կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման արդյունավետությունը և արդիականությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Հանրության հետ հարաբերությունների համակարգման, բնակչության իրազեկման, բուհի աշխատանքի հրապարակայնության և թափանցիկության բարձրացման հարցերը կարգավորվում են բուհի կանոնադրությամբ, 2021-2025 թվականների զարգացման ռազմավարական ծրագրով, մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի բաժնի կանոնակարգով և այլ ներբուհական ակտերով:

Մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի բաժինը, Կարիերայի և զբաղվածության կենտրոնը, Որակի ապահովման կենտրոնը, ՈԻԳԸ-ն, Ուսանողական խորհուրդը, ֆակուլտետները և այլ բաժիններ արդյունավետ հաղորդակցություն են իրականացնում Համալսարանի և հասարակության միջև:

Համալսարան-հասարակություն հարաբերությունը բազմաշերտ է և նպաստում է երիտասարդության կրթությանն ու զարգացմանը հետևյալ եղանակներով.

- խորացված մասնագիտական/որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում,

- աջակցություն հանրակրթական և միջին մասնագիտական հաստատություններին,
- ներքին և արտաքին շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություն, նրանց տեղեկացում,
- շրջանավարտներին հետադարձ կապի ապահովում,
- համագործակցություն պետական իշխանությունների (տեղական ինքնակառավարման մարմիններ) և ՀԿ սեկտորի (հասարակական կազմակերպությունների) հետ,

- կամավորական գործունեություն և այլն:

Հասարակության հետ շփման ձևերից են արտադպրոցական գործունեությունը, օտարերկրյա ուսանողների կողմից իրենց ազգային տոների նշումը, ուսանողների հանդիպումները ՀՀ-ում օտարերկրյա դեսպանությունների և հյուպատոսությունների աշխատակիցների, մշակույթի հայտնի գործիչների հետ:

Վերջին 5 տարիների ընթացքում Համալսարանն իրականացրել է մի շարք աշխատանքներ, որոնք ուղեկցվել են հասարակությանը ծառայությունների մատուցմամբ և նրան տեղեկատվություն տրամադրելով Համալսարանի գործունեության, կամ մասնագիտական գիտելիքների մասին: Ստորև բերված են նման գործունեության մի քանի օրինակ.

1. խորհրդատվական և կողմնորոշիչ աշխատանք անցկացնել ուսուցիչների, ծնողների, հանրակրթական դպրոցների աշակերտների, դիմորդներ հավաքագրող ընկերությունների հետ,

2. ռեկտորի հրամանով սահմանվել է «Բաց դռների ժամ», որն անցկացնում են ռեկտորը, պրոռեկտորները, դեկանները և ամբիոնի վարիչները՝ պատասխանելով հանրության հարցերին, տեղեկատվությունը հասանելի է պատասխանատուների աշխատասենյակների ցուցանակներին:

3. Համալսարանում գործում է թեժ գիծ, որտեղ հարցով դիմելու իրավունք ունեն բոլոր հետաքրքրված անձինք (Թեժ գծի հեռախոսահամար (+374) 91 19 11 84, որը ներկայացված է կայքում): Բացի այդ, հարցերը կարելի է հասցեագրել [vc@ariu.org](mailto:vc@ariu.org) , [admission@ariu.org](mailto:admission@ariu.org) , [info@ariu.org](mailto:info@ariu.org) էլ. Փոստերին:

4. Անցկացվում են հանդիպումներ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, դպրոցների սովորողների հետ, նրանց ծանոթացնելով Համալսարանի գործունեությանը, իրականացվող կրթական ծրագրերին - նրանց առավելագույն աջակցություն առաջարկելը,

5. Իրականացվում է «pro bono» աշխատանք, այսինքն՝ մասնագիտական գործունեություն կամավոր և անհատույց հիմունքներով, բնակչությանը տարատեսակ ծառայությունների մատուցում: Այսպես, միասնական ֆակուլտետի ռազմավարական ծրագրով նախատեսվում է բացել իրավաբանական կլինիկա, որտեղ բարձր կուրսերի ուսանողները

սոցիալապես անապահով բնակչությանը կտրամադրեն անվճար իրավաբանական խորհրդատվություն, նաև նախատեսվում է բժշկական կամավորների ակտիվ աշխատանք բժշկական ֆակուլտետում:

6. Անցկացնելով առողջ ապրելակերպի զանգվածային ակցիաներ՝ մասնագետներն այցելում են պետական ուսումնական հաստատություններ, մանկատներ և առաջարկում անվճար բուժզննում և օգնություն, այդ թվում՝ օտարերկրյա ուսանողների ներգրավմամբ:

7. Ներառական կրթությանն աջակցելու նպատակով տարրական մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետի ուսանողները պարբերաբար այցելում են Երևանի Տաթև դպրոց և հոգեբանի ղեկավարությամբ հոգեբանական խորհրդատվություն և գործնական օգնություն ցուցաբերում կարիքավոր երեխաներին:

8. Համալսարանը մասնակցում է կրթական EXPO ցուցահանդեսներին և աշխատանքի տոնավաճառներին՝ կապեր ապահովելով արտաքին շահագրգիռ կողմերի հետ:

9. Համալսարանում նախատեսված են հանդիպումներ և սեմինարներ տարբեր կազմակերպությունների հետ, որոնք ընթացքի մեջ են ՄԱԿ-ի ՓԳՀՎ(փախստականների գերագույն հանձնակատարի վարչություն), Ամերիկյան իրավաբանների հայաստանյան ներկայացուցչություն (ABA/ROLI) հետ:

Այսպիսով, հարկ է նշել, որ Համալսարանը ձգտում է ապահովել իր աշխատանքի թափանցիկությունը, այդ թվում՝ շահագրգիռ կողմերին տեղեկատվություն տրամադրելով իր գործունեության մասին՝ հարցումների, հանդիպումների, ՄԳՀ-ի գործունեության պարբերական անկախ գնահատումների և այլնի միջոցով: Բացի այդ, Համալսարանն իրականացնում է մի շարք սոցիալական միջոցառումներ՝ ուղղված հասարակությանը մասնագիտական բնույթի տեղեկատվության (գիտելիքների) տրամադրմանը, իրավաբանական խորհրդատվության, առողջության, հիվանդությունների կանխարգելման և այլնի վերաբերյալ, ինչը ակնհայտորեն պահանջված և անհրաժեշտ է:

*Ներկայացնել քաղաքացի դաստիարակելու գործում հաստատության ունեցած դերն ու կատարած ներդրումները: Նշել հիմնական ձեռքբերումներն ու խոչընդոտները:*

Համալսարանի ռազմավարական նպատակների թվում առանձնանում են՝ շրջանավարտների սոցիալապես նշանակալի որակների ձևավորում՝ մարդասիրություն, հանդուրժողականություն, աշխատասիրություն, պատասխանատվություն, նպատակասլացություն, հաղորդակցություն, բարոյականություն, ընդհանուր մշակութային մակարդակի բարձրացում:

Սա վերաբերում է նաև հասարակությանը հաշվետվողականության ոլորտին: Դրա իրականացման համար սահմանվում են մի շարք խնդիրներ.

- Համալսարանի զարգացումը աշխարհի առաջատար բուհերի օրինակով, վերածումը տարածաշրջանային ուսումնական կենտրոնի,
- գիտական մշակումների տարածումը և կրթական գործունեության իրականացումը,
- Համալսարանի վերածումը տարածաշրջանի զարգացած մշակութային կենտրոններից

մեկի:

Այս ուղղությամբ Համալսարանում հիմնվել է ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով պրոռեկտորի պաշտոն, որի պարտականությունների մեջ է մտնում բուհում կրթական աշխատանքների վերահսկումը և ղեկավարումը: Կազմակերպվում են տարբեր մշակութային, կրթական, մարզական, հասարակական միջոցառումներ, գիտաժողովներ, սեմինարներ և այլն, որոնց նպատակն է իրականացնել այս նպատակը և ռազմավարական ծրագրի համապատասխան խնդիրները: Օրինակ՝ Երևանի մարզահամերգային համալիրում օտարերկրյա շրջանավարտների ավարտական արարողությանը (20.08.2022թ.), որին դասախոսներից, ղեկավարությունից, ուսանողներից բացի, մասնակցում էին Հնդկաստանի Հանրապետության դեսպանության ներկայացուցիչներ և շատ հյուրեր այլ բարեկամ երկրից: «Միրո տեքստերը պոեզիայում» (29 մարտի, 2022 թ.), «Հեմոֆիլիայի համաշխարհային օր» (27 ապրիլի, 2021 թ.), օտարերկրյա ուսանողների և դասախոսների մասնակցությամբ շաբաթօրյակի կազմակերպում Հաղթանակի զբոսայգում (ապրիլ 2023թ.) և այլն: Բոլոր նման միջոցառումները նպաստում են Համալսարանի հասարակական առաքելության կատարմանը, Համալսարանի և հասարակության միջև կապերի ամրապնդմանը, այլ երկրների հետ մշակութային կապերի զարգացմանը, օտարերկրյա քաղաքացիներին տարածաշրջան ներգրավելով լրացուցիչ ֆինանսական ներդրումների մեծացմանը: Բուհի գործունեությունը ապահովում է 100-ից ավելի աշխատատեղ Երևանում և Վանաձորում, իսկ օտարերկրացիների ուսումնառությունն ու բնակությունը տարեկան յուրաքանչյուր ուսանողի համար ներգրավում է մինչև 10.000\$: Մշակվել է նաև ՄԳՀ-ի երիտասարդ առաջնորդների պատրաստման քաղաքականություն (ՈԱԶ-00/26), որն ուղղված է ուսանողներին սոցիալական որակների և արժեհամակարգի կրթմանը: ՄԳՀ-ի երիտասարդ դասախոսի դպրոցի կանոնակարգը (ՈԱԶ-01/32) կարգավորում է երիտասարդ դասախոսական կազմի ձևավորումը, որը պետք է անցնի փորձառու ավագ գործընկերների դպրոց՝ զարգացնելու հմտությունները, կարողությունները, ժամանակակից գիտամանկավարժական տեսություններին ու մեթոդներին համապատասխան դասավանդման արվեստը:

*Վերլուծել Չափանիշ 8-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:*

*Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:*

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Բնստիտուցիոնալ կառույցների և էլեկտրոնային պորտալների առկայություն Համալսարանի և հասարակության միջև հարաբերությունները համակարգելու, հետադարձ կապի ապահովման, Համալսարանի աշխատանքի թափանցիկության բարձրացման համար:</p> <p>Բնակչության ցածր եկամուտ ունեցող խավերին</p>	<p>Համալսարանի անբավարար առաջնորդումը աշխարհի տարբեր տարածաշրջաններում և հատկապես եվրոպական կրթական տարածքում, ինչպես նաև հայկական սփյուռքի խոշոր համայնքներում:</p> <p>Համայնքային ծառայությունների և</p>

<p>սոցիալական աջակցություն ցուցաբերում, նրանց կրթության իրավունքի իրացում զեղչերի քաղաքականության միջոցով:</p> <p>Լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցում:</p> <p>Հասարակության առջև հաշվետվո-դականություն ապահովող մեխանիզմների առկայություն և շահագրգիռ կողմերի արդյունավետ արձագանքը:</p>	<p>լրացուցիչ կրթական ծրագրերի սակավ լինելը:</p>
<p>Հնարավորություններ</p>	<p>Վտանգներ</p>
<p>Աշխատաշուկայի պահանջների ուսումնասիրության հիման վրա շարունակել կրթական ծրագրերի կատարելագործման նախաձեռնված գործընթացները, մշակել լրացուցիչ խորհրդատվության համակարգ, ընդլայնել հասարակությանը ծառայությունների մատուցումը, ներդնել շարունակական ուսուցման ծրագրեր:</p> <p>Ավարտել Համալսարանի նոր կայքի ձևավորումը, կատարելագործել առցանց հարցումների և շահագրգիռ կողմերի հարցումների գործիքները:</p> <p>Արդիականացնել գիտելիքը հասարակությանը փոխանցելու մեխանիզմները, ակտիվացնել հետադարձ կապի հետազոտությունները:</p> <p>Ընդլայնել հասարակության զարգացմանն ուղղված Համալսարանի գործունեությունը՝ տրամադրելով անվճար ծառայություններ և ընդլայնելով կրթության հասանելիության հնարավորությունները բնակչության սոցիալապես անապահով խավերի համար:</p>	

Թույլ կողմերը և վտանգները վերացնելու միջոցառումներ.

1. Մարկետինգային գործունեության ուժեղացում ՄԳՀ-ի ներկայացուցիչների ամենամյա մասնակցությամբ արտասահմանյան երկրներում, Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվող ցուցահանդեսներին,
2. ՁԼՄ-ում ակտիվ գովազդի անցկացում,
3. Սոցիալական նախագծերի քանակի ավելացում, ինչպես նկարագրված է զեկույցում՝ բնակչության համար իրավաբանական կլինիկայի բացման և կլինիկական բազաների ու բժշկական կամավորների հետ իրականացվող նախագծերի միջոցով,
  4. ՀՀ մարզերի, համայնքների, դպրոցների, միջին մասնագիտական կրթական հաստատությունների հետ համագործակցության ակտիվացում:

**IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ Ը**

**ՉԱՓԱՆԻՇ:** Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

*Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:*

Համալսարանի ռազմավարական նպատակներից է՝ ընդլայնել և խորացնել բուհի միջազգային կապերը, խթանել ուսանողների և դասավանդողների շարժունությունը (ՈԱԶ- 00/02 ՄԳՀ զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան):

ՄԳՀ-ի ռազմավարական ծրագրում նշվում են բոլոր քայլերը, որոնք պետք է իրականացվեն այս նպատակին հասնելու համար, ինչպես նաև առաջընթացի գնահատման ցուցիչներ: Միջազգային հարաբերությունների ընդլայնումն ու խորացումը ՄԳՀ-ի առաջատար նպատակներից է, քանի որ Համալսարանի ուսանողների կեսից ավելին օտարերկրյա քաղաքացիներ են, և ՄԳՀ-ի երկու կրթական ծրագրեր իրականացվում են միջնորդ լեզվով:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.** Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հիմքեր	<p><u>ՈԱԶ-00/01 ՄԳՀ-ի կանոնադրություն,</u></p> <p><u>ՈԱԶ-00/02 ՄԳՀ-ի զարգացման 20212025թթ. ռազմավարական ծրագիր և պլան,</u></p> <p><u>ՈԱԶ-00/05 ՄԳՀ-ի օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում աշխատող դիվանագետների ընտանիքների անդամների ընդունելության կարգ,</u></p> <p><u>ՈԱԶ-00/03 ՄԳՀ-ը հավատարմագրող փորձագետների դիտողությունների վերացման 2022 թ. գործողությունների պլան,</u></p> <p><u>ՈԱԶ-01/21 ՄԳՀ-ի սովորողների ակադեմիական շարժունության կարգ,</u></p> <p><u>ՈԱԶ-02/04 ՄԳՀ-ի մարկետինգի և հանրային կապերի բաժնի կանոնակարգ:</u></p>
--------	--

*Վերլուծել փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Քանի որ հենց Համալսարանի անվանումը («Մխիթար Գոշ» հայ-ուսական միջազգային համալսարան) պարունակում է միջազգային համագործակցության և տարբեր երկրների օտարերկրյա ուսանողների կրթության գաղափարը, միջազգային հարաբերությունների և համագործակցության քաղաքականությունը կազմում է ՄԳՀ-ի կարևոր և անբաժանելի մասը:

Միջազգային բաժնի գործառույթների մի մասն իրականացնում են ՄԳՀ-ի անձնագրային և վիզաների բաժինը (օտարերկրյա ուսանողների և դասախոսների հրավերների տրամադրում), դեկանատի և ուսումնամեթոդական բաժնի աշխատակիցները (օտարերկրյա ուսանողների ուսուցման կազմակերպում), ինչպես նաև պրոռեկտորները և անմիջականորեն բուհի ռեկտորը:

Միջազգային բաժնի հիմնական խնդիրներն են.

- 8.1. Մշակել Համալսարանի միջազգայնացման քաղաքականություն և ընթացակարգեր, վերանայել և հստակեցնել միջազգային հարաբերությունների բաժնի կանոնադրությունը, նպատակներն ու խնդիրները:
- 8.2. Աշխատել բոլոր կրթական ծրագրերում օտարերկրյա ուսանողների ներգրավվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ:
- 8.3. Ակտիվացնել Համալսարանի միջազգային կապերը, հաստատել համագործակցության նոր կապեր:
- 8.4. Բարելավել Համալսարանի կայք էջը, հստակեցնել դրա օգտագործումը, տրամադրել եռալեզու տեղեկատվություն՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:
- 8.5. Խրախուսել ՊԴ կազմի և շրջանավարտների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացումը (անգլերեն լեզվի դասընթացները լեզուների ամբիոնում դասախոսական կազմի համար անվճար են՝ ցիկլը վարող աշխատողների համար ապահովելով վարձատրություն):
- 8.6. Ակտիվացնել Համալսարանի մասնակցությունը կրթական, գիտական և այլ ոլորտներում հայտարարված միջազգային դրամաշնորհային ծրագրերին:
- 8.7. Խրախուսել դասախոսական կազմի և երիտասարդ հետազոտողների ավելի ակտիվ ներգրավվածությունը գիտական գործունեության միջազգայնացմանն ուղղված աշխատանքներում:
- 8.8. Գնահատել բուհի համագործակցության պայմանագրերով ստանձնած գործառնական պարտականությունների և իրականացվող միջոցառումների արդյունավետությունը: Այս խնդիրներից մի քանիսն արդեն իրականացվել են: Ակտիվացել են Համալսարանի միջազգային կապերը, կնքվել են համագործակցության նոր պայմանագրեր և հուշագրեր: Այսպես, 2022 թվականին համագործակցության պայմանագիր է կնքվել Օրենբուրգի պետական բժշկական համալսարանի հետ, իսկ 2023 թվականին՝ Պերմի պետական բժշկական համալսարանի հետ: Երկու անգամ արտասահմանցի դասախոսները Հնդկաստանից դասախոսություններ են անցկացրել ՄԳՀ-ի ուսանողների համար:

2022 թվականի հունիս-հուլիս ամիսներին միջազգային հարաբերությունների գծով պրոռեկտորը մասնակցել է Հնդկաստանի Հանրապետությունում անցկացված ուսումնական հաստատությունների ցուցահանդեսին, որտեղ ներկայացրել է Համալսարանը:

Համալսարանի սոցիալական ցանցերի էջերը ակտիվորեն գործում են:

Օտար լեզվին տիրապետող դասախոսների տոկոսն անընդհատ աճում է: Համալսարանի դասախոսներն ու վարչական անձնակազմը պարբերաբար անցնում են վերապատրաստումներ և կատարելագործում իրենց լեզվական հմտությունները:

ՄԳՀ-ը մշակել է ակադեմիական շարժունության քաղաքականություն (ՈԱԶ-01/21 ՄԳՀ-ի

ուսանողների ակադեմիական շարժունության կարգ), որը նախատեսում է ուսանողների տեղափոխման և վերականգնման հնարավորություն այլ ուսումնական հաստատություններից: Այս առումով Համալսարանում շարժունությունը նկատվում է բժշկական ֆակուլտետում, որտեղ ուսանողների մոտ 40%-ը ընդունվել է ՄԳՀ-ի այս ծրագրի շրջանակներում:

ՄԳՀ-ի դասախոսական կազմը մասնակցում է նաև միջազգայնացմանը՝ մասնակցելով միջազգային գիտաժողովներին՝ գիտական զեկույցներով:

Սոցիալական և հումանիտար առարկաների ամբիոնի դասախոս Նաիրա Մկրտչյանը ներկայացրել է «Երեք երեցների 150-ամյակը. Մահաբմա Գանդի, Հովհաննես Թումանյան, Կոմիտաս», «Մահաբմա Գանդիի ուղին. Հայաստանը դեպի խաղաղություն և ոչ բռնություն» կոնֆերանսում, որը կազմակերպվել է Գանդի Սմրիտիի (Նյու Դելի, Հնդկաստան) և Դելիի Հայկական մշակութային կենտրոնի կողմից 10 փետրվարի, 2020թ.:

Նա 1st International hospitality conclave & awards 2020, “Visionary trends in hospitality industry” կոնֆերանսում(կազմակերպած School of hotel management, Delhi Technical Campus, Greater Noida, India 2020թ. փետրվարի 12 -ին) ելույթ է ունեցել Հայաստանի մշակույթի մասին զեկույցով:

Բժշկական մասնագիտությունների և գիտական գործունեության գծով պրոռեկտորը «Endoscopic method of the surgical treatment of the frontal sinus pathologies as a choice of modern approach» զեկույցով հանդես է եկել «Modern science. Management and standards of scientific research II» միջազգային կոնֆերանսում, որը կազմակերպված էր AC Institute of International Education, Prague Czech Republic կողմից 2020թ. նոյեմբերի 17-18 -ին:

Սակայն միջազգային բաժնի առաջադրանքների մի մասը դեռ չի իրականացվել, ինչը կապված է ՄԳՀ-ի միջազգային գործունեության գծով պրոռեկտորի թափուր պաշտոնի հետ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Բ.** ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Հիմքեր	<p><u>ՈԱԶ-00/01 ՄԳՀ-ի կանոնադրություն,</u>  <u>ՈԱԶ-00/02 ՄԳՀ-ի զարգացման 20212025թթ. ռազմավարական ծրագիր և պլան,</u>  <u>ՈԱԶ-00/04 ՄԳՀ-ի զարգացման 2022թ. կարճաժամկետ պլան,</u>  <u>ՈԱԶ-00/03 ՄԳՀ-ը հավատարմագրող փորձագետների դիտողությունների վերացման 2022թ. գործողությունների պլան,</u>  <u>ՈԱԶ-01/21 ՄԳՀ-ի սովորողների ակադեմիական շարժունության կարգ,</u>  <u>ՈԱԶ-02/04 ՄԳՀ-ի մարկետինգի և հանրային կապերի բաժնի կանոնակարգ:</u></p>
--------	--

*Վերլուծել ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքի աշխատանքների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Այս պահին ՄԳՀ-ը կրթական երկու ծրագիր է («Բուժական գործ», «Ստոմատոլոգիա») իրականացնում՝ օգտագործելով միջնորդ լեզուն (անգլերեն): Օտարերկրյա ուսանողների թիվը հավասար է ՀՀ ուսանողների թվին:

Ամեն տարի պատրաստակամ օտարերկրյա դիմորդների թիվը ոչ թե նվազում, այլ



աստիճանաբար ավելանում է: Կան ուսանողներ, ովքեր ցանկանում են շարժունության ծրագրի շրջանակներում այլ ուսումնական հաստատություններից տեղափոխվել ՄԳՀ-ն, ինչը վկայում է այն մասին, որ շահագրգիռ կողմերի այս խումբը բավականաչափ տեղեկացված է: Համալսարանը ցուցաբերում է անձնագրային և վիզային աջակցություն ուսանողներին, ինչն արտահայտվում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ժամանակին պատրաստման մեջ: Համալսարանը գրանցված է Հնդկաստանի Ազգային բժշկական խորհրդում և Առողջապահության համաշխարհային կազմակերպությունում՝ որպես բարձրագույն ուսումնական հաստատություն: Անցած 3 տարիների ընթացքում ՄԳՀ-ը մի շարք պայմանագրեր է կնքել արտասահմանյան կրթական հաստատությունների հետ՝ որպես գործնական ուսուցման բազաներ: Համալսարանի դասախոսները խորացված վերապատրաստում են անցել Չեխիայում: Մարքեթինգային ծառայության մասնագետն ակտիվորեն աշխատում է օտարերկրյա դիմորդների ներգրավման ուղղությամբ: (ՈԱԶ-02/04 ՄԳՀ-ի մարկետինգի և հանրային կապերի բաժնի կանոնակարգ), որը վարում է Համալսարանի էջերը սոցիալական կայքերում.

Facebook <https://www.facebook.com/ariudotorg>;

Instagram <https://www.instagram.com/armenianrussianintuniversity/>;

Twitter <https://twitter.com/ariudotorg?s=11>;

YouTube [https://www.youtube.com/channel/UC-IyNApTFkQAftY\\_aCggy6Q](https://www.youtube.com/channel/UC-IyNApTFkQAftY_aCggy6Q) անգլերենով,

որտեղ պարբերաբար թարմացվում են Համալսարանի մասին արդի տեղեկատվությունը և իրադարձությունների լրահոսը:

ՄԳՀ-ի կայքի «Որակի կառավարում» բաժնում նշված են Որակի ապահովման կենտրոնի կոնտակտային տվյալները բոլոր շահագրգիռ կողմերի համար: Բացի այդ, Համալսարանի պաշտոնական կայքը պարունակում է նաև ընդհանուր կոնտակտային տվյալներ: Թեժ գիծն աշխատում է: Համալսարանի կայքում առկա է նաև «Մեր գործընկերները» բաժինը, որտեղ նշված են բազմաթիվ կազմակերպություններ, որոնց հետ համագործակցության պայմանագրեր են կնքվել: Այս ամենը հնարավորություն է տալիս ՄԳՀ-ի շահագրգիռ կողմերին բուհի միջազգային գործունեությունը գնահատել որպես բավականին արդյունավետ և հետագա զարգացման լավ ներուժ ունեցող:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:**

Հիմքեր	<p><u>ՈԱԶ-01/27 ՄԳՀ-ի պրակտիկայի անցկացման կարգ,</u>  <u>ՈԱԶ- 03/04 ՄԳՀ-ի գիտահետազոտական կենտրոնի կանոնակարգ,</u>  <u>ՈԱԶ- 03/05 ՄԳՀ-ի ուսանողական գիտական ընկերության կանոնադրություն,</u>  <u>Համագործակցության պայմանագրեր ՀՀ և արտերկրի համալսարանների,</u>  <u>գիտահետազոտական ինստիտուտների, հիվանդանոցների, կլինիկաների,</u>  <u>ուսումնական բազաների հետ:</u></p>
--------	--

*Ներկայացնել վերջին 3 տարիներին արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում հաստատության հիմնական նվաճումները, համաձայնագրերի չգործելու պատճառները: Վերլուծել ՄՈՒՀ-ի համագործակցության արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Անցած 3 տարիների ընթացքում ՄԳՀ-ը մի շարք համագործակցության պայմանագրեր է կնքել արտասահմանյան համալսարանների հետ, ինչպես նաև 2 պայմանագիր Հնդկաստանի Հանրապետության խոշոր կլինիկական հիվանդանոցների հետ՝ ուսանողներին արդյունաբերական պրակտիկա անցնելու համար:

Համագործակցության հուշագիր է ստորագրվել “Institute of international education” ի հետ Չեխիա, Պրահա 2021թ.:

Պայմանագիր է կնքվել բժշկական ֆակուլտետի ուսանողների արդյունաբերական պրակտիկա անցնելու մասին Ved Multispeciality Hospital -ի հետ Ahmedabad, Gujrat 2021թ.:

Պայմանագիր է կնքվել բժշկական ֆակուլտետի ուսանողների արդյունաբերական պրակտիկա անցնելու մասին - Modern hospital Sringar Jammu and Kashmir 2021թ.:

Ստորագրվել է համագործակցության հուշագիր “Belgian Educational Council”-ի հետ Բրյուսել, Բելգիա 2022թ.:

Օրենբուրգի պետական բժշկական համալսարանի հետ ստորագրվել է համագործակցության պայմանագիր - 2022 թ.:

Պերմի պետական բժշկական համալսարանի հետ ստորագրվել է համագործակցության պայմանագիր - 2023 թ.:

«Միջազգային կրթության ինստիտուտի» հետ կնքված համագործակցության հուշագրի շնորհիվ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը հնարավորություն ստացավ մասնակցելու առցանց դասընթացների և վերապատրաստման սեմինարների: 2021-2022 ուս. տարում կազմակերպվել 2 որակավորման բարձրացում «Interactive teaching methods at the Graduate School of Medicine», «Fundamentals of methodology & andragogy in medical school»: ՄԳՀ-ի 10 դասախոսներ ստացել են վերապատրաստման վկայականներ:

Հնդկաստանից բժշկական ֆակուլտետի ուսանողները հնարավորություն ունեն ստանալ ամառային պրակտիկական անցնել իրենց երկրի կլինիկական հիվանդանոցներում, ինչը նպաստում է գործնական հմտությունների և կարողությունների ավելի լավ համախմբմանը՝ լեզվական խոչընդոտի բացակայության պատճառով:

Օրենբուրգի պետական բժշկական համալսարանի հետ համագործակցության պայմանագրի շրջանակներում կլինիկական գաստրոէնտերոլոգիայի վերաբերյալ դասախոսությունների շարք է անցկացվել ՄԳՀ-ի 6-րդ կուրսի ուսանողների համար

Ռուսաստանի առողջապահության ՕրՊԲՀ դոցենտի կողմից:

Նախատեսվում են միջոցառումներ ուսանողների փոխանակման համար «Գենետիկա» ցիկլի ուսումնասիրության շրջանակներում, ինչպես նաև ամառային պրակտիկա Պերմի պետական բժշկական համալսարանի, Հայաստանում Ռուսաստանի տարածաշրջանային ակադեմիայի հետ:

ՀՀ տարբեր կառույցների պրակտիկայի բազաների հետ համագործակցության պայմանագրերը վերլուծելիս հարկ է նշել, որ վերջին 2 տարիների ընթացքում դրանց թիվը զգալիորեն աճել է: Այս պահին ՄԳՀ-ը պայմանագրեր ունի մի շարք կլինիկական բազաների և հետազոտական կենտրոնի հետ՝ ուսանողներին ուսուցանելու և նրանց ամառային պրակտիկական կազմակերպելու համար:

1. CMS ժամանակակից վիրաբուժության կլինիկա,
2. «Կարդիումեդ» բժշկական կենտրոն,
3. «Արմենիա» բժշկական կենտրոն,
4. «Քանաքեռ Ջեյթուն» ծննդատուն,
5. «Իզմերլյան» բժշկական կենտրոն,
6. «Մեդլայն» կլինիկա,
7. «Գենետիկա» կենտրոն,
8. Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն,
9. «Մեդեսի» ատամնաբուժական կլինիկա,
10. Վանաձորի «Ադեդնակ» ատամնաբուժական կլինիկա,
11. Վանաձորի ատամնաբուժական կլինիկա «Մուշ Դենտ»,
12. Վանաձորի թիվ 1 պետական պոլիկլինիկա,
13. «Մկրտումյան Սուսաննա» ԱԶ ստոմատոլոգիական կլինիկա,
14. ՀՀ ԳԱԱ Օրգանական քիմիայի և դեղագործության գիտատեխնոլոգիական կենտրոնի Ա.Լ.Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ,
10. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ:

Հումանիտար գիտությունների ոլորտում Համալսարանը համագործակցում է համապատասխան կազմակերպությունների հետ՝ «Տաթև» միջնակարգ դպրոց, Վանաձորի թիվ 42 դպրոց, Հայրենական ապրանք արտադրողների միություն, Վանաձորի քաղաքապետարան, Հարկային տեսչություն, թիվ 27 հիմնական դպրոց, H&L Law Group իրավաբանական ընկերություն:

Այս պայմանագրերի կնքումը թույլ է տալիս կազմակերպել բավարար պայմաններ բոլոր ֆակուլտետների ուսանողների պրակտիկայի համար, ինչպես նաև հնարավորություն է տալիս ձևավորել մասնագիտական գործնական կարողություններ: Օտարերկրյա դիմորդների հավաքագրումը ակտիվացնելու նպատակով Համալսարանը պայմանագրեր է կնքել մի շարք արտասահմանյան գործակալությունների հետ:

Հաշվի առնելով, որ «Բուժական գործ» մասնագիտությամբ բժշկական ֆակուլտետի ուսանողների հիմնական մասը Հնդկաստանի Հանրապետությունից են, ՄԳՀ-ը մեծ ուշադրություն է դարձնում ՀՀ տարածքում Հնդկաստանի դեսպանատան հետ սերտ

հարաբերություններին: Միայն վերջին 2 տարում այս համագործակցությունը դրսևորվել է ՄԳՀ-ի մի շարք միջոցառումներում՝ Հնդկաստանի դեսպանի կամ դեսպանատան անձնակազմի մասնակցությամբ և այլն:

Այսպիսով, ՄԳՀ-ն ապահովել է բավարար թվով ռազմավարական անհրաժեշտ գործընկերներ գործունեության տարբեր ոլորտներում, ինչը թույլ է տալիս ոչ միայն բավարարել կրթական գործընթացի կարիքները, զարգացնել և համախմբել գործնական հմտությունները, այլև ապահովել անհրաժեշտ դրական իմիջի ձևավորումը: Այս փաստերը, ի վերջո, դրական են ազդում աշխատանքի արդյունավետության մակարդակի վրա:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ղ. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:**

Հիմքեր	<u>ՈԱԶ-00/01 ՄԳՀ-ի կանոնադրություն,</u> <u>ՈԱԶ-00/02 ՄԳՀ-ի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագիր և պլան:</u>
--------	--

Օտար լեզուներին տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար:

Աշխատակիցներ	2021		2022		2023	
	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
Դասավանդող		60		75		80
Վարչական աշխատող	5	50	6	55	11	85

Օտար լեզուներին տիրապետող ուսանողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար:

Ուսանողներ	2021		2022		2023	
	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
Բակալավր		40		50		50
Մագիստրոս		50		50		60
Անընդհատ-ինտեգրացված ուսուցում		100		100		100

Օտարերկրյա ուսումնառողներին առաջարկվող օտար լեզուներով դասավանդվող դասընթացներ/ՄԿԾ-ներ և օտարերկրյա ուսանողների թիվ ըստ տարիների

	2019	2020	2021	2022	2023
Դասընթացի կամ ՄԿԾ-ի անվանումը					
Բուժական գործ	173	260	587	635	585
Ստոմատոլոգիա	4	5	8	5	9

Օտար լեզուներով դասավանդվող դասընթացներում/ՄԿԾ-ներում ներգրավված ուսանողների թիվը ըստ երկրների

	Երկրներ	2019	2020	2021	2022	2023
1	ԱՄՆ			1	1	
2	Ավստրալիա				1	1
3	Բրազիլիա		1	1	1	1
4	Եգիպտոս			1	1	1
5	Իրան					10
6	Հնդկաստան	173	126	65	62	55
7	Հորդանան		1	3		1
8	Շրի Լանկա		1			
9	ՌԴ		1			1
10	Վրաստան		1			1

*Ներկայացնել և վերլուծել վերոնշյալ գործընթացներում հաստատության վերջին 3 տարվա նվաճումները: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Տվյալ պահին ՄԳՀ-ում միջանկյալ լեզվի (անգլերենի) գործածմամբ կրթական երկու ծրագիր է իրականացվում: Այս ծրագրերում ընդգրկված ուսանողներն ունեն անգլերենի հիմնական մակարդակ, բայց միշտ չէ, որ տիրապետում են հատուկ բժշկական տերմինաբանությանը: Այս խնդիրը վերացնելու համար «Բժշկական անգլերեն» առարկան ներառված է «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» ՄԿԾ-երի ուսումնական պլանում:

Դասախոսների մեծ մասը, որոնք ներգրավված են ՄԿԾ-ի անգլերեն լեզվով իրագործման մեջ, ունեն անգլերենի իմացությունը հավաստող դիպլոմներ և վկայականներ, ինչպես նաև հարցազրույց են անցնում անգլերեն լեզվով՝ աշխատանքի տեղավորման համար: Վերջին տարիներին ավելացել է անգլերենին տիրապետող դասախոսների և վարչակառավարչական անձնակազմի աշխատակիցների թիվը, ինչը կապված է միջանկյալ լեզու օգտագործող ծրագրերում դիմորդների և ուսանողների թվի աճի և դասախոսական կազմի ռեզերվի ձևավորման հետ: Կազմվել է «Բժշկական անգլերեն» ծրագրով դասախոսական կազմի խորացված վերապատրաստման ժամանակացույց:

*Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է արտաքին կապերի ու միջազգայնացման քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն):*

Վերլուծել Չափանիշ IX-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Անգլախոս ՊՌ կազմի և վարչակառավարչական անձնակազմի բարձր տոկոսը: Արտադրական պրակտիկայի բազաների բավարար քանակը:</p>	<p>Միջազգային գծով պրոռեկտորի թափուր պաշտոնը: Այս պահին ուսանողների փոխանակման ակտիվ ծրագրերի բացակայությունը:</p>
Հնարավորություններ	Վտանգներ
<p>Համալսարանների և գործընկեր կազմակերպությունների հետ պայմանագրերի ավելացում: Ուսանողների և դասախոսական կազմի շարժունության ծրագրերի ակտիվացում:</p>	<p>Աշխարհաքաղաքական վիճակի փոփոխությունը, միջազգային կոնֆլիկտները:</p>

Թույլ կողմերը և վտանգները վերացնելուն ուղղված միջոցառումներ.

1. Անհրաժեշտության դեպքում՝ համատեղել միջազգային հարաբերությունների գծով պրոռեկտորի պաշտոնը ռազմավարական զարգացման գծով պրոռեկտորի պաշտոնի հետ:
2. Հաշվի առնելով մի շարք բուհերի հետ կնքված պայմանագրերը՝ անհրաժեշտ է մշակել այս պայմաններով ուսանողների շարժունության ծրագիր 2023/2024 ուսումնական տարվա համար:
3. Նոր գործընկերների որոնում, հատկապես Էրազմուս + դրամաշնորհային ծրագրին մասնակցելու անհրաժեշտության մասով:

**X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

**ՉԱՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Համալսարանի ռազմավարական ծրագիրը նախատեսում է.

- վերափոխել Համալսարանի կառավարման համակարգը, հստակեցնել կառուցվածքը՝ ռազմավարական ծրագրի նպատակներին և խնդիրներին համապատասխան,
- Համալսարանի որակի ներքին ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը, կարգերն ու կանոնակարգերը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային գործակալության պահանջներին,
- վերանայել բուհ-ի աշխատակիցների պաշտոնների անձնագրերը, հստակեցնել նրանց գործառույթները,
- Համալսարանի կառավարման բոլոր ստորաբաժանումներում և բաժիններում իրականացնել PDCA ցիկլը, ներդնել պարտադիր հաշվետվողականության նորմ,
- ներդնել որակի ներքին ապահովման համակարգի գնահատման և կատարելագործման մեխանիզմներ՝ հիմնվելով դրանց շարունակական կատարելագործման և արդյունքների հավաստիության վրա,
- բարձրացնել որակի մշակույթը համալսարանում:

<b>ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.</b> ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:	
Հիմքեր	<p><u>ՈԱԶ-00/01 ՄԳՀ-ի կանոնադրություն,</u></p> <p><u>ՈԱԶ-00/08 ՄԳՀ-ի որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր</u></p> <p><u>ՈԱԶ-01/33 ՄԳՀ-ի որակի ապահովման ներքին համակարգի ձեռնարկ,</u></p> <p><u>ՈԱԶ-00/09 ՄԳՀ-ի բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգ,</u></p> <p><u>ՈԱԶ-01/24 ՄԳՀ-ի ուսումնական գործընթացի որակի մշտադիտարկման փորձագիտական հանձնաժողովի գործունեության կանոնակարգ:</u></p>

*Ներկայացնել և վերլուծել ՄՈՒՀ-ի որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

«Մխիթար Գոշ» միջազգային հայ-ռուսական համալսարանն իր հիմնադրման պահից մեծ ուշադրություն է դարձրել կրթական ծառայությունների որակին, իսկ Բոլոնիայի գործընթացին ՀՀ միանալուց հետո (2005թ.) որակի ապահովումը թևակոխել է նոր փուլ՝ միջազգային վերահսկողական մեխանիզմների օգտագործմամբ: Այս հարցում կարևոր դեր է ստանձնել ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը, որը հետևողականորեն իր առաջ խնդիր է դրել լուծել կրթության համակարգ որակի ապահովման եվրոպական և ազգային չափանիշների ներդրման բարդ ու դժվարին խնդիրը և ձևավորել կրթության նոր մշակույթ: Որակի ապահովման անհրաժեշտությունը ընդգծված է ՄԳՀ-ի կանոնադրության մեջ՝ 2.2.1 կետում սահմանվում է Համալսարանի հետևյալ նպատակը.

